

# Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի

ԻՆՔՆԱՊԱՀՈՎՈՒՄ

# ՆԱԽԱԲԱՆ

## ԱՅՍ ԽՈՒՄԲԸ ԿԱՐՈ՞Ղ Է ՕԳՆԵԼ ԻՆՁ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ։

Կրթություն ստանալը ոչ միշտ է հեշտ, սակայն ինքնապահովման այս խումբը կօգնի ձեզ հասկանալ ավելի լավ աշխատանքի համար կրթություն ստանալու լավագույն տարբերակը։ Խմբային հանդիպումներին դուք պարտավորություն կվերցնեք որոշակի քայլեր կատարել և խումբը ձեզ համար մտքերի ու քաջալերանքի աղբյուր կլինի։ Խմբի նպատակներից մեկը ձեզ օգնելն է, որ նախապատրաստվեք ու լավ կրթություն ստանաք. մյուս նպատակն է օգնել ձեզ ավելի մեծ հնազանդություն ու հավատք գործադրել առ Տերը և ձեռք բերել նյութական և հոգևոր ինքնապահովման Նրա խոստումը։

## Ի՞ՆՉ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԻՆՔՆԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈՒՄԲԸ։

Ինքնապահովման խումբը Եկեղեցու դասարաններից ու աշխատաժողովներից շատերից տարբեր է։ Այստեղ չկան ուսուցիչներ, ղեկավարներ կամ հրահանգիչներ։ Խմբի անդամները միասին սովորում են, աջակցում ու քաջալերում են միմյանց։ Մենք միմյանց օգնում ենք պահել պարտավորությունները և միասին խորհրդակցում ենք՝ խնդիրները լուծելու համար։

## Ի՞ՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ։

Հանդիպումների ժամանակ խմբի անդամները գործելու պարտավորություն են վերցնում։ Մենք ոչ միայն *սովորում*, այլ նաև *գործում* ենք այնպիսի գործեր, որոնք մեզ օգնում են ինքնապահով դառնալ։ Մենք պարտավորություններ ենք ստանձնում, միմյանց օգնում ենք պահել պարտավորությունները և զեկուցում ենք մեր առաջընթացի վերաբերյալ։ Քանի որ խումբը գործում է որպես խորհուրդ, կարևոր է կանոնավորապես մասնակցել հանդիպումներին ու ժամանակին ներկայանալ։ Միշտ ձեր հետ բերեք այս աշխատանքային ձեռնարկը և մյուս գրքույկները՝ *Իմ հիմքը. սկզբունքներ, հմտություններ, սովորություններ* և *Ինքնապահովման իմ ուղին։* Խմբի յուրաքանչյուր հանդիպում կտևի մոտ երկու ժամ։ Պարտավորությունները կատարելը մեզանից կպահանջի մեկից երկու ժամ՝ ամեն օր։

## Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ ԴԱՍՎԱՐԸ։

Դասվարները մասնագետներ չեն՝ ոչ կրթության, ոչ էլ ուսուցման։ Նրանք ոչ խմբի առաջնորդն են, ոչ էլ ուսուցիչը։ Նրանք պարզապես հետևում են, որ խումբը ճշգրտորեն հետևի ձեռնարկներում գրված նյութին։ Սովորաբար, խմբի հանդիպումների դասվարը ինքնապահովման մասնագետ է. սակայն շաբաթների ընթացքում, կարիքի դեպքում, խմբի անդամներին ևս կարող է հանձնարարվել դասվար լինելու։ Ավելին սովորելու համար, կարդացեք *Դասվարների ուղեցույց* և ուղեկից տեսանյութերը հետևյալ կայքում. srs.lds.org

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Խմբի անդամները, ովքեր մասնակցում են խմբի հանդիպումներին և կատարում են իրենց պարտավորությունները, կարող են որակավորվել՝ ստանալու ՎՕՍ Բիզնեսի Քոլեջի ինքնապահովման հավաստագիր։ Պահանջներին կարող եք ծանոթանալ *Իմ հիմքը* գրքույկի 29 էջում։



*«Ընտանիքում, ծխում կամ ցցում չկա մի խնդիր, որը չի կարող չլուծվել, եթե մենք լուծումներին նայում ենք Տիրոջ ձևով՝ խորհուրդ անելով, – իսկապես խորհրդակցելով, – իրար հետ»։*

**Մ. ՌԱՍՍԵԼ ԲԱԼԱՐԴ,**
**Counseling with Our Councils, rev. ed. (2012), 4**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ: ........................................................1
2. Ի՞նչ կրթություն կորակավորի ինձ իմ աշխատանքի համար: ........................................................ 25
3. Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար:........ 41
4. Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Կրթության մշտական հիմնադրամից:................................ 55
5. Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում: ............................................... 79
6. Ինչպե՞ս հաջողություն ունենամ դասարանից դուրս: ........................................................ 97

7-12 հանդիպումների ժամանակ կօգտագործվեն *Աշխատանքի իմ որոնումները* ձեռնարկի նյութերը:

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա
© 2014 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են։
Անգլերենի հաստատումը. 8/14
Թարգմանության հաստատումը. 8/14
*Education for Better Work* թարգմանությունը
Armenian
12377 201



# 1

# Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ:

## Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի

# ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Հանդիպման օրը.**

- Հաղորդագրություն ուղարկեք կամ զանգահարեք խմբի անդամներին, եթե ունեք նրանց կոնտակտային տվյալները: Հարցրեք, թե արդյոք նրանք պատրաստվում են գալ հանդիպման: Հրավիրեք նրանց ժամանել 10 րոպե առաջ՝ հաճախումների գրանցում կատարելու համար:
- Նախապատրաստեք հանդիպման նյութերը.
    - Խմբի յուրաքանչյուր անդամի համար բերեք այս աշխատանքային ձեռնարկի, ինչպեսև *Իմ հիմքը. սկզբունքներ, հմտություններ, սովորություններ* գրքույկի մեկական օրինակ:
    - Նախապատրաստեք տեսաֆիլմեր ցուցադրելու, եթե հնարավոր է:
    - Չունե՞ք գրքերը կամ տեսանյութերը: Դուք կարող եք դրանք ձեռք բերել առցանց՝ srs.lds.org կայքից:
    - Բերեք Ինքնապահովման ծառայությունների նախընտրելի ցանկերը. (1) Նախընտրելի աշխատանքների ցանկը և (2) Նախընտրելի հաստատությունների ու ծրագրերի ցանկը: Վերցրեք ցանկը ձեր ցցի ինքնապահովման կենտրոնում՝ ինքնապահովման մասնագետից կամ կայքից srs.lds.org/pef:

**Հանդիպումից 30 րոպե առաջ.**

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջ, որպեսզի բոլորը մոտ լինեն միմյանց:
    - Դասվարը չի կանգնում հանդիպման ընթացքում եւ չի նստում սեղանի գլխին: Դասվարը չպետք է լինի ուշադրության կենտրոնում, այլ պետք է օգնի, որ խմբի անդամները կենտրոնանան միմյանց վրա:



**Հանդիպումից 10 րոպե առաջ.**

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ ժամանում են: Սովորեք ուսանողների անունները:
- Խմբի անդամներին մի թուղթ փոխանցեք և խնդրեք գրել իրենց անուն ազգանունը, ծուխը կամ ճյուղը և ծննդյան ամսաթիվը (օրը և ամիսը. *տարեթիվը պետք չէ գրել*):
- Խմբից մեկին նշանակեք հետևել, որ ժամանակը պահպանվի: Խնդրեք նրան սահմանել ժամանակաչափը՝ ըստ գրքի հրահանգների:
    - Օրինակ՝ դուք կկարդաք հրահանգներ, որ ասում է. «Ժամանակ. Սովորել բաժնի համար սահմանեք 60 րոպե ժամանակ»: Ժամանակին հետևողը ժամ կդնի հեռախոսի, ժամացույցի կամ այլ ժամանակացույցի վրա և ժամանակն ավարտվելիս կտեղեկացնի խմբին: Ապա խումբը կորոշի՝ անցնել հաջորդ բաժնին, թե մի քանի րոպե ևս շարունակել քննարկումը:

**Հանդիպումից հետո.**

- Խմբի հանդիպումից հետո այցելեք srs.lds.org/report կայքէջը և հետևեք խմբի անդամներին գրանցելու հրահանգներին:
- Առաջին հանդիպումից հետո մասնակիցների ցուցակով կիսվեք խմբի անդամների հետ:

**Դասի սկզբին.**

- Ասացեք. «Բարի գալուստ ինքնապահովման մեր խումբ»:
- Խնդրեք բոլորին անջատել իրենց հեռախոսները և այլ սարքերը:
- Ասեք հետևյալը.
    - «Սա ինքնապահովման խումբ է, որը կոչվում է «Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի»: Այստեղ բոլորը ավելի շատ կրթություն ստանալու նպատակով են, այդպես չէ՞:
    - Եթե դուք Կրթության մշտական հիմնադրամի վարկի կարիք չունեք, հրաշալի է: Իսկ եթե դուք այստեղ եք ԿՄՀ վարկից օգտվելու համար, դուք պատրաստ կլինեք սկսել ձեր դիմումի գործընթացը չորրորդ հանդիպումից հետո:
    - Մենք կհանդիպենք 12 անգամ: Յուրաքանչյուր հանդիպում կտևի երկու ժամ: Մեզ անհրաժեշտ կլինի նաև ամեն օր մեկից երկու ժամ հատկացնել մեր պարտավորությունները կատարելու համար, որոնք կօգնեն մեզ կրթություն կամ վերապատրաստում ստանալ: Դուք պատրա՞ստ եք պահել ժամանակի այս պարտավորությունը»:
- Ասեք բացման աղոթքը (և օրհներգը, եթե ցանկանում եք):
- Ասեք հետևյալը.
    - «Ամեն հանդիպման սկզբում մենք մի թեմա ենք քննարկում *Իմ հիմքը. սկզբունքներ, հմտություններ, սովորություններ* գրքույկից: Այս գրքույկը մեզ օգնում է սովորել սկզբունքներ, հմտություններ և սովորություններ, որոնք տանում են դեպի հոգևոր և նյութական ինքնապահովում»:
- **Իմ հիմքը գրքույկի թեմայի համար սահմանեք 20 րոպե ժամանակ:**
- Կարդացեք Առաջին Նախագահության ներածական նամակը *Իմ հիմքը* գրքույկի 2-րդ էջում: Ապա ավարտեք գրքույկի 1-ին սկզբունքը և վերադարձեք այս աշխատանքային ձեռնարկին:



# ՍՈՎՈՐԵՔ

## Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ ՄԵՆՔ ԱՅՍ ԽՄԲՈՒՄ:

**Ժամանակ.** **Սովորել բաժնի համար սահմանեք 60 րոպե ժամանակ**

**Կարդացեք.** Ինքնապահովման այս խմբի նպատակը հասկանալու համար կարդացեք աշխատանքային այս ձեռնարկի նախաբանը կազմի դարձերեսին:

Մենք այստեղ ենք, որպեսզի օգնենք միմյանց կրթություն ստանալ և բարելավել մեր աշխատանքը: Բացի այդ, մենք ավելի մեծ նպատակ ունենք. դառնալ ինքնապահով, որպեսզի ավելի լավ ծառայենք ուրիշներին:

**Դիտեք.** «Կրթություն ինքնապահովման համար» (Եթե տեսանյութը մատչելի չէ Կարդացեք սցենարը 18 էջում):

**Քննարկեք.** Ի՞նչ սովորեցիք կամ զգացիք այս տեսանյութի բովանդակությունից:

**Կարդացեք.** Եկեք հերթով կարդանք այս խոսքերը.

1. Մենք ուզում ենք ինքնապահով դառնալ:
2. Բայց ներկայումս չունենք հմտություններ լավ աշխատանք ձեռք բերելու կամ լավ բիզնես ձեռնարկելու համար:
3. Այնպես որ, մենք պետք է բարելավենք մեր հմտությունները՝ կրթվելով կամ վերապատրաստվելով:
4. Բարելավելով հմտությունները՝ մենք կբարելավենք մեր աշխատանքը և եկամուտը:
5. Եվ ավելի շատ եկամուտն ու ավելի շատ հավատքը կօգնի մեզ ավելի շատ ինքնապահով դառնալ:

**Քննարկեք.** Սա կարո՞ղ է մեր այստեղ գտնվելու նպատակի լավ ամփոփում լինել:

**Կարդացեք.** Յուրաքանչյուր շաբաթ մեր խմբում մենք կպատասխանենք հետևյալ հարցերին.

| ՇԱԲԱԹ 1 | ՇԱԲԱԹ 2 | ՇԱԲԱԹ 3 | ՇԱԲԱԹ 4 | ՇԱԲԱԹ 5 | ՇԱԲԱԹ 6 |
|---|---|---|---|---|---|
| Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ: | Ի՞նչ կրթություն կորակավորի ինձ իմ աշխատանքի համար: | Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար: | Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Կրթության մշտական հիմնադրամից: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանից դուրս: |

**Քննարկեք.** Ձեր կարծիքով, ինչո՞ւ ենք նախքան մեզ անհրաժեշտ կրթության ընտրությունը կատարելը այս շաբաթ սկսում պարզելով մեր նախընտրելի աշխատանքը:

**Կարդացեք.** Կրթության նպատակը լավ աշխատանք գտնելն է: Առաջին վեց շաբաթների ընթացքում մենք կսովորենք կրթության մասին: 7–12 շաբաթների ընթացքում մենք կսովորենք, թե ինչպես լավ աշխատանք գտնենք ու հաջողակ լինենք մեր գործում:

| ՇԱԲԱԹ 7 | ՇԱԲԱԹ 8 | ՇԱԲԱԹ 9 | ՇԱԲԱԹ 10 | ՇԱԲԱԹ 11 | ՇԱԲԱԹ 12 |
|---|---|---|---|---|---|
| Ինչպե՞ս կարող եմ ճիշտ աշխատանքի հնարավորություններ գտնել: | Ինչպե՞ս կարող եմ ներկայացնել ինձ համոզիչ զորությամբ: | Ինչպե՞ս աշխատանքի «թաքնված» շուկա մուտք գործեմ: | Ինչպե՞ս կարող եմ առանձնանալ որպես լավագույն ընտրություն: | Ինչպե՞ս արագացնեմ աշխատանքի իմ որոնման ընթացքը: | Ինչպե՞ս կատարելագործվեմ աշխատանքիս մեջ և շարունակեմ հաջողություն ունենալ: |

**Կարդացեք.** Միասին աշխատելով՝ մենք կգտնենք այս հարցերի պատասխանները և հաջողություն կունենանք:

## Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ ԱՌԱՋԱՐԿԵԼ:

**Կարդացեք.** Եկեք տեսնենք, թե ինչպես կարող ենք որպես խումբ միասին աշխատել:

**Դիտեք.** «Գնա՛ և գործի՛ր» ուսուցում» (Եթե տեսանյութը մատչելի չէ, Կարդացեք սցենարը 20 էջում):

**Քննարկեք.** Մենք միմյանց օգնելու ենք «գնալ և գործել»: Ի՞նչ կարևոր բան կար այս տեսանյութի բովանդակության մեջ: Ինչո՞վ է ուսման այս մոտեցումը տարբերվում դպրոցի կամ եկեղեցու ավանդական դասարանից:

**Կիրառեք.** Բաժանվեք երկու-երեք մարդուց բաղկացած փոքր խմբերի: Տեղափոխեք ձեր աթոռները, որ տեսնեք միմյանց և կատարեք հետևյալ վարժությունը:

1. Հակիրճ ներկայացրեք ձեզ՝ ձեր անունն ու մի փոքր ընտանիքի մասին: Նշեք ինչ-որ մի հաջողություն, որին հասել եք: Օրինակ՝ «Աշխատանքի համար ես պարգևատրում եմ ստացել իմ գործատուից» կամ «Ես հաջողությամբ միսիա եմ ծառայել» կամ «Ես հաջողությամբ երեք երեխա եմ մեծացրել»:
2. Հիմա, խմբի մյուս անդամները արագ կասեն ձեզ, թե ինչ կարողություններ են ձեզ անհրաժեշտ եղել այդ հաջողությունն ունենալու համար: Եթե դուք ասեք, որ «հաջողությամբ միսիա եք ծառայել», մյուսները կարող են ասել. «Դու պետք է որ ջանասեր աշխատող լինես, լավ ղեկավար ու ուսուցիչ լինես և մարդկանց հետ շփվելու լավ հմտություններ ունենաս»:
3. Կրկնեք նույն բանը յուրաքանչյուրի համար:
4. Վերադարձեք և միացեք ամբողջ խմբին: Կիսվեք խմբի անդամների որոշ հաջողություններով և նրանց որոշ կարողություններով:

**Կարդացեք.** Մեր ունեցած բոլոր հմտություններն ու կարողությունները Տիրոջ շտեմարանի մասն են կազմում: Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը:

**Քննարկեք.** Ինչպե՞ս կարող է մեր խումբն աշխատել միասին և օգնել միմյանց:

**Կիրառեք.** Եկեք անենք առաջին գործողությունը որպես խումբ: Եկեք հինգ րոպե տրամադրենք և որոշենք, թե ինչ անուն կընտրենք մեր խմբի համար:

Խմբի անունը գրեք ներքևում.

______________________________

*«Որ ամեն մարդ կարողանա ավելացնել իր քանքարի վրա, որ ամեն մարդ կարողանա ստանալ ուրիշ քանքարներ, այո՛, նույնիսկ հարյուրապատիկ, որ զցվի Տիրոջ շտեմարանը. . . ամեն մարդ փնտրելով իր մերձավորի շահը, և բոլոր բաներն անելով պարզ աչքով ուղղված Աստծո փառքին»:*

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 82.18–19**

## Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ՊԻՏԻ ԸՆՏՐԵՄ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ:

**Կարդացեք**. Այս շաբաթվա ընթացքում մենք կորոշենք, թե ինչ կարգի աշխատանք կարող ենք անել, որպեսզի ինքնապահով դառնանք: Հետո մենք կվերադառնանք և հաշվետվություն կտանք:

Հետևյալ հարցը և շաբաթվա գործողությունը կուղղորդեն մեր քննարկումը և պարտավորությունները:

---

**Կարդացեք**. **ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑԸ – Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ:**

**ՇԱԲԱԹՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ – Ուսումնասիրել նախընտրելի աշխատանքների իմ տարբերակները, տեղեկանալ աշխատանքների մասին այլ մարդկանցից և պատրաստել աշխատանքային ծրագիր:**

---

**Կիրառեք**. Գրեք, թե ինքնապահով դառնալու համար որքան գումար է ձեզ անհրաժեշտ ամեն ամիս (դուք դա պարզել եք Իմ ուղին ձեռնարկի ինքնապահովման ստուգարքի ժամանակ).

**Ինձ հարկավոր է ամսական** ___գումար___ **ինքնապահով լինելու համար:**

**Կարդացեք**. Այսպիսով, ի՞նչ ենք ցանկանում աշխատել ապագայում, որպեսզի կարողանանք այդ եկամուտը ապահովել:

**Դիտեք**. «Նախընտրությունների ցանկ ԿՄՀ վարկի համար» (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 21 էջում):

**Կիրառեք**. Դասվարը խմբի յուրաքանչյուր անդամին պետք է հանձնի նախընտրելի աշխատանքների ցանկ:

1. Ձեր աթոռը շրջեք դեպի խմբի մեկ այլ անդամը: Միասին ուսումնասիրեք դասվարի կողմից տրված նախընտրելի աշխատանքների ցանկը:
2. Այժմ պատասխանեք հետևյալ հարցերին.
   - Ո՞ր աշխատանքներն են ձեր ուշադրությունը գրավում: Ինչ որ աշխատանք համապատասխանո՞ւմ է ձեր ուժեղ կողմերին ու փորձառություններին:
   - Ո՞ր աշխատանքն է լավագույնս վճարվում:
   - Ո՞րի համար է շատ կրթություն հարկավոր:
   - Ինչպե՞ս կարող է այս ցանկը օգնել ձեզ:

**Կարդացեք**. Երբ պատկերացում ստանանք, թե որ աշխատանքները կբավարարեն եկամուտի մեր սպասելիքները և որոնք են պահանջարկ ունեցողները, անհրաժեշտ կլինի, որ մենք ավելի շատ տեղեկություն հավաքենք տարբերակների մասին և ընտրություն կատարենք: «Աշխատանքային ծրագիրը» կօգնի մեզ որոշում կայացնել ապագա աշխատանքի կամ բիզնեսի վերաբերյալ:

*Իմ ուղին* գրքույկը կարող է ձեզ օգնել այդ որոշումը կայացնելիս:

**Կարդացեք**. Շաբաթվա ընթացքում մենք կպատրաստենք աշխատանքային ծրագիր (տես էջ 24): Այս գործնական աշխատանքը կօգնի մեզ սովորել, թե ինչպես անեք դա՝ քայլ առ քայլ:

**Կիրառեք**. Ձեր աթոռը շրջեք դեպի խմբի մեկ այլ անդամը և միասին կատարեք այս գործնական աշխատանքը:

**Քայլ 1:** Կարդացեք երկու օրինակները: Այնուհետև, որպես փորձնական աշխատանք, «Ձեր օրինակը» սյունակի դատարկ վանդակում գրի առեք ձեր նախընտրելի աշխատանքի տարբերակներից մեկը: Հաջորդ տողում գրեք մարդկանց անուններ, ում հետ կարող եք խոսել աշխատանքի այդ տարբերակի վերաբերյալ:

| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԿՕԳՆԻ ԻՆՁ ԻՆՔՆԱՊԱՀՈՎ ԴԱՌՆԱԼ: | | | |
|---|---|---|---|
| | **ՕՐԻՆԱԿ 1** | **Օրինակ 2** | **ՁԵՐ ՕՐԻՆԱԿԸ** |
| Գրի առեք ձեզ համար նախընտրելի երեք տարբեր աշխատանք: | *Ավտոփականակագործ* | *Բժշկական տեխնոլոգիաների գործարկող* | |
| **Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼ ԱՅՍ ԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:** | | | |
| Գրեք 3–5 մարդկանց անուններ, ում հետ կխոսեք յուրաքանչյուր աշխատանքի մասին: | *Միգել՝ փականակագործ ընկեր*<br>*Ռոբերտո՝ ավտոմեքենայի վաճառող*<br>*Քեռի Կարլոս* | *Նաոմի՝ աշխատում է հիվանդանոցում*<br>*Դորին՝ բուժքույր*<br>*Սյուզի՝ համակարգչային մասնագետ* | |

**Քայլ 2.** Կարդացեք ներքոհիշյալ հարցերը և օրինակները: Լրացրեք «Ձեր օրինակը» սյունակի վանդակները: Այս գործնական աշխատանքի համար դուք հնարավոր է նախապես ենթադրություն անեք:

| Ի՞ՆՉ ՀԱՐՑԵՐ ԿՏԱՄ ԵՍ ԱՅԴ ՄԱՐԴԿԱՆՑ: | | | |
|---|---|---|---|
| | ՕՐԻՆԱԿ Ա (ԱՎՏՈՓԱԿԱՆԱԿԱԳՈՐԾ) | ՕՐԻՆԱԿ Բ (ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՂ) | ՁԵՐ ՕՐԻՆԱԿԸ |
| Սկզբի համար որքա՞ն եկամուտ կարող եմ ես ակնկալել յուրաքան-չյուր ամիս: Որքա՞ն եկամուտ կարող եմ ակնկալել մեկ տարի աշխատելուց հետո: | *Սկզբնական աշխատավարձ. 3500<br>Մեկ տարի անց. 4500* | *Սկզբնական աշխատավարձ. 4200<br>Մեկ տարի անց. 5000* | |
| Ինչպե՞ս կարող եմ որակավորվել յուրա-քանչյուր աշխատանքի համար: | *Արհեստագործական ուսումնարան՝ 8 ամիս<br>1 տարվա փորձ<br>Ճանաչել ինչ-որ մեկին, կոնտակտային տվյալներ հավաքել* | *Բժշկական քոլեջ, 2.5 տարի<br>1.5 տարվա փորձ<br>Մաթեմատիկայի քննություն, բնագիտական առարկաներ* | |
| Տեղական ուսումնական հաստատություններ առկա՞ են: | *Այո* | *Այո* | |
| Արդյոք այս աշխա-տանքի համար պա-հանջարկը աճու՞մ է: | *Դանդաղ աճ, միջին պահանջարկ* | *Արագ աճ, բարձր պահանջարկ* | |
| Որքա՞ն է աշխատանքը սկսելու սկզբնական ծախսը: | *6000 գործիքների համար* | *4000 հավաստագիր ստանալու համար* | |

**Քայլ 3.** Կարդացեք օրինակները և ապա ամփոփ գրեք ձեր պատասխանները երրորդ սյունակում: Հիշեք, որ սա միայն փորձնական օրինակ է: Այս շաբաթվա ընթացքում մենք ավելի ճշգրիտ տեղեկություն կհավաքենք: Երբ ավարտեք, վերադարձեք մեծ խումբ:

| Ո՞Ր ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊԱՀՈՎԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵԿԱՄՈՒՏԸ ԵՎ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՄ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԻՆ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ: | | | |
|---|---|---|---|
| | ՕՐԻՆԱԿ Ա (ԱՎՏՈՓԱԿԱՆԱԿԱԳՈՐԾ) | ՕՐԻՆԱԿ Բ (ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՂ) | ՁԵՐ ՕՐԻՆԱԿԸ |
| Ի՞նչ սովորեցի ես հնարավոր տարբերակների վերաբերյալ: Ո՞րն է լավագույնը թվում ինձ համար: | *Քիչ ուսում, քիչ ծախս, բավարար եկամուտ միայն կարիքները բավարարելու համար, պահանջարկը ոչ բարձր:* | *Որակավորման ավելի երկար ժամանակ, ավելի շատ ուսում, ավելի շատ ծախս, ավելի շատ եկամուտ, բարձր պահանջարկ:* | |

**Կարդացեք**. Այս շաբաթ տեղեկություն հավաքելուց հետո, մենք պետք է որոշում կայացնենք: Մենք կարող ենք աղոթել և որպես օգնություն կարդալ մեր հայրապետական օրհնությունը: Հիշեք. (1) Մենք սկսում ենք նրանից, թե որքան եկամուտ է մեզ հարկավոր ինքնապահով դառնալու համար: (2) Այնուհետև, ընտրում ենք, թե ինչ կցանկանայինք աշխատել ապագայում, որը նման եկամուտ կապահովի: (3) Դրանից հետո մենք որոշում ենք, թե ինչ կրթություն կամ վերապատրաստում է հարկավոր, որպեսզի որակավորվենք նման աշխատանքի համար:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ:

**Կարդացեք.** Հաջորդ շաբաթ մենք մեր խմբին կներկայացնենք մեր աշխատանքային ծրագիրը: Այնպես որ եկեք դիտենք այս օրինակը և ապա ինքներս փորձենք:

**Դիտեք.** «Աշխատանքային իմ ծրագիրը երեք րոպեում» (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 22 էջում):

**Կիրառեք.** Ոտքի կանգնեք և աշխատեք ինչ-որ մեկի հետ, ում հետ այսօր չեք աշխատել: Ներկայացրեք այս օրինակելի ծրագիրը (7–9 էջերին) պատկերացնելով, թե դա ձեր ծրագիրն է: Հետևեք տեսանյութի օրինակին: Եթե չունեք ողջ տեղեկությունը, գործածեք ձեր պատկերացումը:

1. Մեկ րոպե տրամադրեք՝ պատմելով աշխատանքի ձեր ընտրությունների և այն մասին, թե ում հետ եք խոսել այդ մասին:
2. Մեկ րոպե տրամադրեք պատմելով հարցերի պատասխանների մասին:
3. Մեկ րոպե տրամադրեք, պատմելով, թե աշխատանքի այս տարբերակներից ո՞րն եք ընտրել և ինչու:
4. Ապա երկու րոպե տրամադրեք և խնդրեք ձեր ընկերոջը դիտողություն անել ձեր ներկայացման վերաբերյալ: Հարցրեք. ինչպե՞ս կարող եմ իմ աշխատանքային ծրագիրը ավելի լավը դարձնել: Ինչպե՞ս կարող եմ այն ավելի արդյունավետ ներկայացնել:
5. Փոխվեք դերերով և թույլ տվեք, որ մյուս գործընկերը փորձի ներկայացնել իր ծրագիրը:

**Քննարկեք.** Խմբով քննարկեք, թե ինչպես եք պատրաստվում տեղեկություն հավաքել շաբաթվա ընթացքում և ինչպես եք պատրաստվում ներկայացնել ձեր աշխատանքային ծրագիրը հաջորդ շաբաթ: Հարցեր տվեք և փոխանակվեք մտքերով:

**Կարդացեք.** Շաբաթվա ընթացքում տեղեկություն հավաքեք և լրացրեք հաջորդ էջի աշխատանքային ծրագիրը: Խոսեք հնարավորինս շատ մարդկանց հետ: Շատ հարցեր տվեք: Եթե գրելու լրացուցիչ տեղի կարիք ունեք, ապա կարող եք օգտագործել 24 էջի լրացուցիչ աշխատանքային ծրագիրը:

| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԿՕԳՆԻ ԻՆՁ ԻՆՔՆԱՊԱՀՈՎ ԴԱՌՆԱԼ: | | | |
|---|---|---|---|
| Գրի առեք ձեզ համար նախընտրելի երեք տարբեր աշխատանք: | | | |
| **Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼ ԱՅՍ ԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:** | | | |
| Գրեք 3–5 մարդկանց անուններ, ում հետ կխոսեք յուրաքանչյուր աշխատանքի մասին: | | | |
| **Ի՞ՆՉ ՀԱՐՑԵՐ ԿՏԱՄ ԵՍ ԱՅԴ ՄԱՐԴԿԱՆՑ:** | | | |
| Սկզբի համար որքա՞ն եկամուտ կարող եմ ես ակնկալել յուրաքանչյուր ամիս: Որքա՞ն եկամուտ կարող եմ ակնկալել մեկ տարի աշխատելուց հետո: | | | |
| Ինչպե՞ս կարող եմ որակավորվել յուրաքանչյուր աշխատանքի համար: | | | |
| Տեղական ուսումնական հաստատություններ առկա՞ են: | | | |
| Արդյոք այս աշխատանքի համար պահանջարկը աճու՞մ է: | | | |
| Որքա՞ն է աշխատանքը սկսելու սկզբնական ծախսը: | | | |
| Ա՞յլ հարցեր: | | | |
| **Ո՞Ր ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊԱՀՈՎԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵԿԱՄՈՒՏԸ ԵՎ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՄ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԻՆ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:** | | | |
| Ի՞նչ սովորեցիք եք հնարավոր տարբերակների վերաբերյալ: Ո՞րն է լավագույնը թվում ինձ համար: | | | |

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԻՄԱՍՏՈՒՆ ՁԵՎՈՎ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԻՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

**Կարդացեք.** Ինքնապահով լինելը ներառում է մեր աշխատածից ավելի քիչ ծախսելը և տնտեսած գումար ունենալը: Խնայողությունները կարող են օգնել մեզ անսպասելի ծախսերի հարցում կամ օգնել մեր ընտանիքի հոգսերը հոգալ, երբ մեր եկամուտը սպասվածից քիչ է: Որպես այս խմբի մաս, մենք պարտավորություն ենք վերցնում ամեն շաբաթ մի փոքր տնտեսել, անգամ եթե չնչին գումար է:

**Քննարկեք.** Որոշ տարածքներում լավ միտք է գումարը բանկում պահել: Այլ տեղերում, որտեղ երկրի դրամական միավորի արժեզրկումը բարձր է կամ երբ բանկերն անկայուն են, դա կարող է լավ միտք չլինել: Իսկ ինչպիսի՞ն է ձեր տարածքում բանկային խնայողությունների պայմանները: Ո՞ր բանկերն են առաջարկում խնայողությունների բարձր դրույքներ:

**Կարդացեք.** Ինքնապահով լինելու մյուս մասը անհատական պարտքից ազատված լինելն է: Սպառողական վարկերն օգտագործվում են մեր հնարավորություններից վեր ծախսեր կատարելու համար: Մարգարեները մեզ խորհուրդ են տվել խուսափել անձնական պարտքից, և դառնալով ավելի ինքնապահով, մենք կնվազեցնենք և կազատվենք անձնական պարտքից (չնայած բիզնեսի նպատակով վերցված պարտքը, որոշ դեպքերում, կարող է իմաստուն լինել):

Անսպասելի բժշկական ծախսերը հաճախ ֆինանսական մեծ բեռի պատճառ են դառնում: Ապահովագրական և պետական առողջապահական ծրագրերը հաճախ կարող են օգնել պաշտպանվել այդ բեռից: Ապահովագրվելը կամ պետական բժշկական ծրագրում գրանցվելը կարող է մեր ինքնապահովման ուղու կարևոր մասը լինել:

**Քննարկեք.** Ապահովագրման որոշ տեսակներ ավելի մատչելի և ավելի օգտակար են (օրինակ՝ առողջության կամ կյանքի ապահովագրությունը), քան մյուս տեսակները: Ապահովագրական ընկերություններն էլ ոչ բոլորն են ազնիվ լինում: Որո՞նք են ապահովագրության լավագույն տարբերակները ձեր տարածքում:

## ԻՆՉՈ՞Ւ Է ՏԵՐԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ, ՈՐ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՊԱՀՈՎ ԼԻՆԵՆՔ:

**Քննարկեք**. Ինչո՞ւ է Տերը ցանկանում, որ մենք ինքնապահով լինենք:

**Կարդացեք**. Կարդացեք աջ լուսանցքի մեջբերումը:

**Քննարկեք**. Ինչպե՞ս կարող են աշխատանք գտնելու մեր ջանքերը «սուրբ նպատակի համար» լինել, ինչպես ասել է Երեց Քրիստոֆերսոնը:

**Կարդացեք**. Տերը զորություն ունի օգնելու մեզ ինքնապահով դառնալ: Նա ասել է. «Քանզի ահա, ես եմ Աստված. և ես հրաշքների Աստված եմ» (2 Նեփի 27.23): Երբ մենք նվիրագործենք կամ նվիրաբերենք աշխատանք գտնելու մեր ջանքերը ինքնապահովման սուրբ նպատակի համար, Տերը կառաջնորդի մեզ ոգեշնչմամբ: Երբ մենք ցույց տանք մեր հավատքը, լսելով ու հնազանդվելով նրա հուշումներին, Տերը կգործի Իր հրաշքները և մեր ջանքերը շատ ավելի արդյունավետ կդարձնի, քան ինքներս կարող ենք երբևէ անել մեզ համար:

*«Նվիրաբերել նշանակում է մի սուրբ բան ի սպաս դնել կամ նվիրագործել՝ նվիրել սուրբ նպատակի համար»:*

**Դ. ԹՈԴ ՔՐԻՍՏՈՖԵՐՍՈՆ, «Մտորումներ նվիրագործված կյանքի մասին», Լիահոնա, նոյ. 2010, 16–19**

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՎ ԿՄՀ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼ:

Եթե ձեր և ձեր ընտանիքի միջոցները չեն բավարարում և տեղական այլ ֆինանսական միջոցները ձեզ հասանելի չեն, կարող եք դիմել ԿՄՀ վարկի համար, որը կօգնի ձեզ վճարել ձեր կրթության համար: Ձեր աշխատանքային ծրագիրը ևս կօգնի ձեզ նախապատրաստվել ԿՄՀ վարկի համար: Եթե դուք կարծում եք, որ հնարավոր է ԿՄՀ վարկի կարիք ունենաք, աշխատանքային ձեր ծրագիրը կազմելիս պատասխանեք հետևյալ հարցերին և պահեք այդ տեղեկությունը ԿՄՀ վարկի դիմումի համար:

Կրթական մշտական հիմնադրամ

| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԿՕԳՆԻ ԻՆՁ ԻՆՔՆԱՊԱՀՈՎ ԴԱՌՆԱԼ: | |
|---|---|
| **Ընթացիկ աշխատանքը** | |
| Շաբաթական քանի ժամ եք աշխատում (բոլոր աշխատանքներում). | |
| Զբաղեցրած պաշտոն(ներ)ը. | |
| Ամսական եկամուտը. | |
| **Նախատեսած աշխատանքը (պետք է լինի ԻԾ նախընտրելի աշխատանքների ցանկից կամ պետք է բացառության հայտ ներկայացվի)** | |
| Նախատեսած պաշտոնը. | |
| Հաշվարկած ամսական եկամուտը (ծրագրի ավարտից հետո). | |

# ԽՈՐՀԵՔ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ, ՈՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱՄ:

**Ժամանակ.** **Խորհել բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ:**

**Կիրառեք.** Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը կամ մտածեք մեկ այլ սուրբ գրության մասին: Լուռ խորհեք, թե ինչ է այն ձեզ ուսուցանում: Ստորև գրի առեք ձեր տպավորությունները:

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Քննարկեք.** Ո՞վ կցանկանա մտքերով կիսվել:

*«Ճշմարիտ ասում եմ. Մարդիկ պետք է ջերմեռանդ ներգրավված լինեն բարի գործի մեջ, և շատ բաներ անեն իրենց իսկ ազատ կամքով, և շատ արդարություն գործեն»:*

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 58.27**

# ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՐԵՔ

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱԼ:

**Ժամանակ**. Պարտավորություն վերցրեք բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ

**Կարդացեք**. Ամեն շաբաթ մենք ընտրում ենք «աշխատանքային ընկեր»: Նա կլինի խմբի անդամներից մեկը, որը կօգնի մեզ պարտավորություններ կատարելիս: Աշխատանքային ընկերները պետք է շաբաթվա ընթացքում կապ հաստատեն միմյանց հետ և զեկուցեն իրենց առաջընթացի մասին: Սովորաբար, աշխատանքային ընկերները միևնույն սեռի են և ընտանիքի անդամներ չեն:

**Կիրառեք**. Ընտրեք ձեր աշխատանքային ընկերոջը: Որոշեք, թե երբ և ինչպես եք կապ հաստատելու միմյանց հետ:

_______________________ *Աշխատանքային ընկերոջ անունը*

_______________________ *Կապ հաստատելու տվյալներ*

**Կարդացեք պարտավորության յուրաքանչյուր քայլը ձեր աշխատանքային ընկերոջը: Խոստացեք պահել ձեր պարտավորությունները: Ստորագրեք պարտավորությունը ստանձնելու համար:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ես կխոսեմ առնվազն հինգ մարդու հետ, որպեսզի տեղեկություն հավաքեմ աշխատանքային իմ ծրագրի վերաբերյալ:**
Իմ նպատակն է. 5 8 10

**Ես կպատրաստեմ աշխատանքային իմ ծրագիրը և կներկայացնեմ այն:**

Ես կկիրառեմ *Իմ հիմքը* գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ այն իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողությունները՝ նույնիսկ եթե մեկ դրամ լինի:

Ես կզեկուցեմ աշխատանքային իմ ընկերոջը:

_______________________ *Իմ ստորագրությունը*

_______________________ *Աշխատանքային ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

**Դիտեք.** «Գործել և պարտավորություն վերցնել» (Տեսանյութ չկա՞, կարդացեք սցենարը 23 էջում):

**Կարդացեք.** Երբ հաշվետու ենք լինում մեր պարտավորությունների վերաբերյալ, պահելու հավանականությունը մեծանում է: Կարդացեք աջ լուսանցքի մեջբերումը:

**Կիրառեք.** Նախքան հաջորդ հանդիպումը, օգտագործեք պարտավորությունների այս աղյուսակը՝ ձեր առաջընթացը գրանցելու համար: Ստորև տրված վանդակներում գրեք «այո» կամ «ոչ» կամ թե քանի անգամ եք պահել ձեր պարտավորությունը:

| *Խոսել եմ առնվազն հինգ մարդու հետ աշխատանքային իմ ծրագրի վերաբերյալ (գրեք թիվը)* | *Պատրաստ եմ ներկայացնելու իմ աշխատանքային ծրագիրը (այո/ոչ)* | *Կիրառել եմ **Հիմքը** ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|
| | | | | |

**Կարդացեք.** Հիշեք նաև գրանցել ձեր անձնական ծախսերը Ինքնապահովման իմ ուղին ձեր գրքույկի ետևում:

Խմբային մեր հաջորդ հանդիպմանը դասվարը գրատախտակին կգծի պարտավորությունների աղյուսակ (ինչպես վերևում նշվածը): Մենք կներկայանանք հավաքից 10 րոպե առաջ և կգրանցենք մեր առաջընթացը աղյուսակի վրա:

Ընտրեք մեկին վարել հաջորդ հանդիպման *Իմ հիմքը* գրքույկի թեմաներից մեկի քննարկումը: Խնդրեք նրան կարդալ աշխատանքային այս ձեռնարկի կազմի դարձերեսը, որպեսզի սովորի, թե ինչ է անում դասվարը: Հանձնարարված անձը պետք է կատարի նույն դերը, ինչ կատարեց դասվարը այսօր.

- Հրավիրեք Հոգու ներկայությունը. խմբի անդամներին խրախուսեք փնտրել Հոգու առաջնորդությունը:
- Վստահեք ուսումնական ձեռնարկին. ավելացումներ մի արեք. արեք միայն այն, ինչ գրված է:
- Կառավարեք ժամանակը
- Եռանդ ավելացրեք. դասը զվարճալի դարձրեք:

Խնդրեք ինչ-որ մեկին ասել փակման աղոթքը:



*«Երբ աշխատանքը չափվում է, աշխատանքը բարելավվում է: Երբ աշխատանքը չափվում և հաշվետվություն է տրվում, բարելավման արագությունն աճում է»:*

**ԹՈՄԱՍ Ս. ՄՈՆՍՈՆ**
**CONFERENCE REPORT, Oct. 1970, 107**

***Դիտողությունները խրախուսվում են***

*Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները srsfeedback@ldschurch.org է-փոստի հասցեին:*

***Նշում դասվարի համար.***

*Հիշեք, որ խմբի անդամների հաճախումները պետք է գրանցել srs.lds.org/report կայքում:*

*Հիշեք նաև խմբի կոնտակտային տվյալները պատճենել հաջորդ հանդիպման համար:*

# Օժանդակ նյութեր

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

Նշանակեք դերեր և բեմականացրեք հետևյալ սցենարը.

**ԴԱՄՎԱՐ.** *Բարի՜ գալուստ բոլորին: Ներկայացեք խնդրեմ և մի երկու խոսք ձեր մասին:*

**ՔՈՒԱՄԻ.** *Դե՜, Ես Քուամին եմ: Ես նոր եմ վերադարձել միսիայից. ես ամուսնանալու նպատակ ունեմ և կատարում եմ պատահական աշխատանքներ:*

**ՔՈՆՍՈՒԵԼՈ.** *Իմ անունը Քոնսուելո է. ես ամուսնացած եմ և ունեմ երկու փոքր երեխա. ես օգնում եմ ամուսնուս մրգեր վաճառել:*

**ՄԻՔԱԼԱ.** *Եվ ես Միքալան եմ: Ես միայնակ մայր եմ՝ վեց տարեկան աղջիկ ունեմ: Ես հյուրանոցում հավաքարար եմ՝ լրիվ դրույքով:*

**ՌՈԲԵՐՏ.** *Ես Ռոբերտոն եմ. ես ամուսնացած եմ և ունեմ հինգ երեխա. և ներկայումս ես ծառայում եմ որպես եպիսկոպոս և չեմ կարողանում լավ աշխատանք գտնել:*

**ԴԱՄՎԱՐ.** *Շատ լավ: Այսպիսով, ինչո՞ւ եք դուք այստեղ:*

**ՔՈՒԱՄԻ.** *Ես ուզում եմ սովորել:  Միսիայի իմ բոլոր գործընկերները վերադառնում էին տուն սովորելու նպատակով, և ես ցանկանում եմ անել նույն բանը:*

**ՌՈԲԵՐՏ.** *Ես հույս ունեմ օգտվել Կրթության մշտական հիմնադրամի վարկից. մի՞թե այս դասարանը դրա համար չէ:*

**ՔՈՆՍՈՒԵԼՈ.** *Մարգարեն խրախուսել է որքան հնարավոր է լավ կրթություն ստանալ, և ես ասել եմ ամուսնուս, որ կարիք ունեմ ուսումս բարելավելու:*

**ՄԻՔԱԼԱ.** *Դե, ես ուզում եմ բարելավել աշխատանքս, որպեսզի ավելի ինքնապահով լինեմ, և ես շատ հմտություններ չունեմ:*

**ԴԱՄՎԱՐ.** *Լավ, կարծես թե մենք այստեղ լինելու բազմաթիվ պատճառներ ունենք: Մենք միասին լավ կաշխատենք: Միքալա, քո ասածը շատ կարևոր է: Պատմեք ավելի շատ ձեր իրավիճակի մասին:*

**ՄԻՔԱԼԱ.** *Իմ աշխատանքային ժամերը շատ երկար են և ես չեմ կարողանում բավարար ժամանակ տրամադրել դստերս: Եվ ես հասկացել եմ, որ եթե հմտություններս չզարգացնեմ, չեմ կարող ավելի լավ աշխատանք գտնել: Այնպես որ ես լրացուցիչ կրթության կարիք ունեմ: Իմ եպիսկոպոսն ասաց, որ այս դասարանը ճիշտ սկիզբ է:*

**ԴԱՄՎԱՐ.** *Դու ճի՜շտ ես, Միքալա: Փաստորեն, բոլորս այստեղ ենք ձեր նշած պատճառով: Բայց մեր դասերը վերաբերվելու են ոչ միայն կրթությանը: Սա անակնկա՞լ է: Այս խումբը կօգնի մեզ ծրագրել և կրթություն ստանալ կամ արհեստ սովորել, բայց մենք նպատակ ունենք նաև հմտություններ զարգացնել, ավելի լավ աշխատանք ձեռք բերել և ավելացնել մեր եկամուտը: Գուցե ամենակարևորը, այս 12 շաբաթների համար, այն է, որ մենք սովորենք սկզբունքներ, հմտություններ և զարգացնենք սովորություններ, որոնք կօգնեն մեզ իրապես ինքնապահով դառնալ: Այնպես որ սա ավելին է, քան պարզապես կրթություն ստանալը:*

**ՌՈԲԵՐՏ.** *Իսկ ի՞նչ կասեք ԿՄՀ վարկերի մասին:*

**ԴԱՄՎԱՐ.** *Եթե դուք պարզեք, որ իրապես վարկի կարիք ունեք, անկասկած, այն հասանելի է, և մենք կիմանանք, թե ինչ է հարկավոր դրա համար: Դասերի ընթացքում, հնարավոր է, դուք պարզեք, որ ուսման համար դուք վարկի կարիք չունեք: Այդ դեպքում դուք պարտքի տակ չեք ընկնի:*

**ՔՈՆՍՈՒԵԼՈ.** *Իսկ այս դասերը կօգնեն մեզ համալսարան ընդունվել:*

**ԴԱՄՎԱՐ.** *Եթե համալսարանը ճիշտ տեղն է, որ դուք հմտություններ սովորեք ավելի լավ աշխատանքի համար, ապա, այո՜: Բայց համալսարանական կրթությունը ոչ միշտ է աշխատանքի հնարավորություն տալիս մեր տնտեսության պայմաններում:*

շարունակվում է հաջորդ էջում

***ՌՈԲԵՐՏ.*** *Ճի՛շտ է: Ես գիտեմ բժշկական ավարտողների, որ տաքսու վարորդ են:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Ես պարզապես ուզում եմ սկսել ինչ-որ բանից: Միսիայից առաջ իմ միակ փորձը փողոցում առևտուր անելն է եղել: Ես չունեմ աշխատանքային ոչ մի հմտություն:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Ուրեմն, մենք այստեղ ենք սովորելու աշխատանքների՞ մասին, թե՞ կրթություն ստանալու մասին:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Երկուսն էլ: Մեր նպատակը ինքնապահով դառնալն է, այդպես չէ՞: Ուրեմն մենք կսովորենք առանցքային սկզբունքներ ինքնապահովման վերաբերյալ: Մենք կսկսենք, պարզելով, թե ինչ կարգի աշխատանքը մեզ բավարար եկամուտ կապահովի, որպեսզի ինքնապահով դառնանք:*

*Այնուհետև, մենք կորոշենք, թե ինչ կարգի ուսում կամ կրթություն է մեզ պետք, որպեսզի որակավորվենք այդ աշխատանքի համար: Այնուհետև, մենք կպարզենք, թե ինչպես կարող ենք վճարել այդ կրթության համար և թե ինչպես կարող ենք հաջողության հասնել մեր նախընտրած ուսումնական հաստատությունում: Մենք միմյանց կօգնենք հասնել մեր նպատակներին:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Արդեն հասկանալի է դառնում: Մինչև հիմա ես մտածում էի, որ պարզապես պետք է սովորեմ, բայց իրականում չէի մտածել, թե ո՞րն է իմ սովորելու նպատակը:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Կարծում եմ, ես այստեղ ինչ-որ ուղղություն կստանամ: Հիմա հասկանո՛ւմ եմ, թե ինչու է իմ քվորումի նախագահն ինձ ուղարկել այստեղ:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Բայց կարծում եք արդյունք կլինի՞: Ես հուսահատ եմ, որովհետև կրթություն ստանալու տարբեր միջոցներ եմ փնտրել, բայց չի հաջողվել:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Դե, մենք պետք է միասին տքնաջան աշխատենք ու օգնենք միմյանց: Բայց ես հավատում եմ, որ կստացվի: Իմ ողջ սրտով հավատում եմ, որ Տերը ցանկանում է, որ մենք ինքնապահով դառնանք և հաջողակ լինենք: Նա ցանկանում է, որ մենք սովորենք ու աճենք: Եվ նա ի զորու է մեզ օգնելու: Քավությունը իրական ազդեցություն ունի և՛ նյութական, և՛ հոգևոր բաներում: Եվ ինքնապահովման խմբերը օգնել են մեզ նման շատ մարդկանց: Ի՞նչ եք կարծում: Կարո՞ղ ենք միասին աշխատել: Արժե՞ արդյոք փորձել: Ահա մի անձի պատմություն.*

***ԷՄԻԼԴԱ.*** *Իմ գերազանց ուսանող լինելը ես ինձ չեմ վերագրում. ես այն վերագրում եմ Եկեղեցուն: Ես գիտեի, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն միանալը ինձ ավելի մեծ հոգևոր բարձունքների կհասցնի, բայց երբեք չէի պատկերացնում, որ այն ինձ կօգնի նաև ակադեմիական հաջողություններում:*

*Ավետարանն ուսումնասիրելը ինձ համար իրապես զարթնելու կանչ էր: Այն օգնեց ինձ գիտակցել, որ ես ինքս եմ պատասխանատու իմ ճակատագրի համար: Անկախ նրանից, թե ինչ պայմաններում ենք ներկայումս և թե ինչ ենք մենք զգում, ես չեմ կասկածում, որ Երկնային Հայրը լավ ծրագրեր ունի մեզ համար:*

Վերադարձեք 4-րդ էջը

## «ԳՆԱ՛ ԵՎ ԳՈՐԾԻ՛Ր» ՈՒՍՈՒՑՈՒՄ

Հերթով կարդացեք հետևյալ պարբերությունները:

*Ավանդական դասարանում մենք հաճախ հետևում ենք այս օրինակին. (1) Մենք գալիս ենք դասարան և նստում ենք, սովորաբար, առանց շատ նախապատրաստության: (2) Ուսուցիչը խոսում է: (3) Մենք փորձում ենք լսել և սովորել: (4) Երբեմն մենք պատասխանում ենք հարցերի: Այնուհետև (5) մենք գնում ենք տուն:*

*Ինքնապահովման մեր խմբում մենք հետևելու ենք մեկ այլ օրինակի:*




*Շաբաթվա ընթացքում մենք գործելու ենք: Մենք անելու ենք այն, ինչ պարտավորվել ենք մեր խմբի նախորդ հանդիպումներին: Մենք հարցեր կքննարկենք, մտքերով կփոխանակվենք և խսկապես կսովորենք:*

*Այնուհետև, նախքան խմբի հանդիպումը, մենք կվերընթերցենք մեր աշխատանքային ձեռնարկն ու մեր պարտավորությունները և կներկայանանք հանդիպմանը պատրաստված և ժամանակին:*

*Խմբի յուրաքանչյուր հանդիպման սկզբում մենք մի քանի րոպե կկենտրոնանանք* Իմ հիմքը *ձեռնարկի ինչ-որ մի սկզբունքի կամ հմտության վրա: Մենք նաև պարտավորություն կվերցնենք ուսուցանել այն մեր ընտանիքին ու այլ մարդկանց:*

*Այնուհետև, մենք **հաշվետու** կլինենք մեր պարտավորությունների վերաբերյալ, կսովորենք միմյանցից և կատարելագործվելու ուղիներ կգտնենք:*

*Ապա, մենք կանցնենք **սովորել** բաժնին: Այս բաժնում մենք կփոխանակվենք մտքերով ու գործիքներով, որոնք անհրաժեշտ են «գնալու և գործելու» համար շաբաթվա ընթացքում: Մենք քննարկում ենք անցկացնում, ֆիլմեր ենք դիտում, սովորում ենք և գործնական աշխատանք կատարում:*

*Սովորել բաժնից հետո մենք դադար կտանք և **կխորհենք** սովորածի վերաբերյալ: Սա կարող է ոգեշնչում ստանալու և հարցեր առաջանալու ժամանակ լինել:*

*Ի վերջո, մենք **պարտավորություն** ենք վերցնում միմյանց ներկայությամբ: Մենք վերանայում ենք, թե շաբաթվա ընթացքում ինչ ենք գնալու և անելու, որպեսզի մեր կյանքը բարելավենք:*

*Դա մեզ վերադարձնում է **գործելու** քայլին: Սովորելու այս ընթացքի ամենակարևո՛ր մասը կատարվում է հանդիպումների միջև եղած ժամանակահատվածում: Որպես օգնություն՝ մենք կընտրենք շաբաթվա համար «աշխատանքային ընկեր» և ամեն օր կապ կհաստատենք այդ անձի հետ ու համառոտ կզեկուցենք մեր գործածի ու սովորածի վերաբերյալ: Մենք կարող ենք օգտագործել տեքստային հաղորդագրություն կամ կապի այլ ձևեր: Ի լրումն, մեր ընտանիքը կլինի օգնության լավագույն աղբյուրը:*

Վերադարձեք 5-րդ էջը

## ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ԿՄՀ ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ

Նշանակեք դերեր և բեմականացրեք հետևյալ սցենարը.

***ԴԱՄՎԱՐ.*** *Ողջույններ բոլորին: ԿՄՀ վարկի այս նախընտրությունների ցանկը ընդգրկում է մեր տարածքի լավագույն աշխատանքները, կրթական ծրագրերը և ուսումնական հաստատությունները: Եթե նպատակ ունեք օգտվելու ԿՄՀ վարկային ծրագրից, ապա ընտրեք այս ցանկից:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Ինչո՞ւ:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Լավ հարց է: Այս ցանկը ներառում է մեր տարածքի լավագույն աշխատանքները: Դրանք «նախընտրելի աշխատանքներ» են ու մեծ պահանջարկ ունեն: Այդ աշխատանքների կարիքը շատ կա և շատ մարդիկ են աշխատանքի ընդունվում:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Սա իրապես օգտակար է ունենալ: Ո՞վ է պատրաստել այս ցանկը:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Ինքնապահովման ծառայությունների մեր տեղի կառավարիչը և մի քանի կամավորներ հետազոտել են աշխատանքային շուկան, հետևել են զարգացման միտումներին և խրակամում խոսել են տեղի բազմաթիվ գործատուների հետ: Նրանք գտել են նաև տեղական ուսումնական հաստատություններ ու ծրագրեր, որոնք մարդկանց օգնում են հմտություններ ձեռք բերել նախընտրելի աշխատանքների համար:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Երևում է նրանք ներառել են նաև ծրագրերի տևողությունը և ծախսերը:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Այո՛: Հետաքրքիր է նկատել, որ որոշ հաստատություններ պահանջում են ավելի քան երկու տարի, մինչդեռ մյուսները, միևնույն ծրագրի համար պահանջում են միայն 10 ամիս:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Եվ ծախսերն էլ շատ տարբեր են: Մտածում եմ, ինչո՞ւ է այդպես:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Գալիք շաբաթների ընթացքում մենք ավելի շատ բան կսովորենք ծախսերի ու արժեքների վերաբերյալ: Բայց ձեր նկատածները շատ կարևոր են: Ոչ բոլոր հաստատություններն են միևնույն արժեքը ներկայացնում:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Դա կարևոր է: Ես ուզում եմ այնպիսի հաստատությունում սովորել, որն ինձ օգնելու է լավ աշխատանք գտնել: Բայց կարճ դասընթացները, որոնք քիչ ծախս են պահանջում, նույնպես կարևոր են:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Ճշմարիտ է: Նախընտրելի հաստատությունները և ծրագրերը հմտություններ են ապահովում նախընտրելի աշխատանքների համար խելամիտ ժամկետում և խելամիտ արժեքով: Նրանք պետք է որ աշխատանքի տեղավորման բարձր ցուցանիշներ ունենան: Սա շատ արժեքավոր գործիք է մեզ համար:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Սա կարո՞ղ է օգտակար լինել, անգամ եթե մենք ԿՄՀ վարկի կարիք չունենք:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Դե՛, իհարկե: Ես, ամեն դեպքում, պատրաստվում եմ սկսել այս ցանկից:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Լավ միտք է: Եվ եթե ձեր ընտրած աշխատանքը, ուսումնական ծրագիրը կամ հաստատությունը չլինի այդ ցանկում, դուք դեռևս պետք է պատասխան գտնեք այդ հարցերին. որ աշխատանքները պահանջարկ ունեն, ուսումնական որ ծրագրերն ու հաստատություններն են լավագույնը այդ աշխատանքների համար: Ի՞նչ եք կարծում:*

Վերադարձեք 6 էջը

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ ԵՐԵՔ ՐՈՊԵՈՒՄ

Նշանակեք դերեր և բեմականացրեք հետևյալ սցենարը.

***ՄԻՔԱԼԱ.*** *Դե լավ, ահա իմ աշխատանքային ծրագիրը երեք րոպեում: Առաջին մասում ես թվարկել եմ իմ ընտրած աշխատանքները: Ես դեռևս ամբողջովին համոզված չեմ իմ ընտրության մեջ, սակայն շատ բան եմ սովորում և հույսս գնալով ավելանում է: Իմ ընտրած աշխատանքներն են՝ գործադիր ղեկավարի օգնական, ուսուցիչ և հյուրանոցի կառավարիչ: Այնուհետև, գալիս է հաջորդ մասը. . .*

***ՌՈԲԵՐՏ.*** *Իմ ծրագրի հաջորդ մասում մարդկանց անուններն են, ում հետ ես խոսել եմ: Բանավոր թարգմանության աշխատանքի համար ես խոսել եմ թարգմանչական գրասենյակի աշխատակիցների հետ և իմ ցցի նախագահի հետ, որը միջազգային մակարդակի շատ աշխատանքներ է կատարում: Կրթության աշխատակցի համար ես միայն երկու մարդ գտա մասնավոր հաստատություններում, որոնք պատրաստակամ էին ինձ ժամանակ տրամադրել: Եվ հացի փռի արտադրամասի համար ես խոսեցի երեք փռի տնօրենների, ներառյալ իմ մորաքույր՝ Էլենի հետ: Գործարարության իմ նախկին փորձից ելնելով՝ դա ևս իրատեսական հնարավորություն է:*

*Ունե՞ք արդյոք ինձ ուղղված որևէ դիտողություն կամ հարց:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Այդ տարբերակներից ո՞րը քեզ հնարավորություն կտա ավելի լավ ծառայել եկեղեցում: Գիտեմ, որ դա կարևոր է քեզ համար:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Եվ որքա՞ն սարքավորում քեզ հարկավոր կլինի հացի փուռ հիմնելու համար:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Լավ հարցեր են: Այսպիսով, բացի ծախսերը, ինձ ավելի շատ ժամանակ պետք կլինի. . .*

***ՔՈՒԱՄԻ.*** *Հրաշալի է. սա լավ միջոցառում էր, այդպես չէ՞: Կարծես կրկին միսիայում լինեմ: Եռակցման արհեստանոցի մի ղեկավար ինձ պատմեց, թե ինչպես է ինքը վարպետացել և որքան ծախս է նրանից պահանջվել: Եվ ապա ավելացրեց, որ աշակերտի փորձը ճիշտ ուղի կլինի ինձ համար: Մեկ այլ արհեստանոց ինձ անմիջապես աշակերտական պրակտիկա առաջարկեց, բայց առանց վարձատրության, այնպես որ ես համոզված չեմ դրա վերաբերյալ: Եվ ուսդիկանության ակադեմիան ևս շատ լավն էր: Ես պետք է մեկ տարի սովորեմ և ապա մեկ տարի պրակտիկա անցնեմ որոշ պաշտոնյաների հետ: Այնպես որ դա ավելի թանկ կլինի, բայց աշխատավարձը չորս անգամ ավելի շատ կլինի, քան ես երբևէ աշխատել եմ: Ինձ մնում է ընտրություն կատարել. . .*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Եվ այդպես, վերջապես, ես պետք է ընտրություն կատարեի: Ես իմ ընտրությունը կրճատել եմ՝ հասցրել երկուսի, բայց մենք աշխատում ենք որոշման վրա որպես ընտանիք և դա հրաշալի է: Ես միտված եմ աշխատելու համակարգչային ծրագրերի կամ բժշկական տեխնոլոգիաների մասնագետի ուղղությամբ: Դրանք երկուսն էլ նույն չափով վարձատրվում են, սակայն համակարգչային ծրագրերի մասնագետը պետք է որ ավելի լավ լինի իմ ընտանիքի համար: Ես կկարողանամ դեռ օգնել ամուսնուս և կրթությունը երեք ամսով քիչ է. . .*

***ՔՈՒԱՄԻ.*** *Դե՜ լավ, ժամանակը լրացավ: Մենք առաջադիմում ենք:*

Վերադարձեք 10-րդ էջը

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Նշանակեք դերեր և բեմականացրեք հետևյալ սցենարը.

***ԽՄԲԻ Ա ԱՆԴԱՄ.*** *Մենք հավատում ենք պարտավորություններ ստանձնելուն ու կատարելուն: Ինքնապահովման մեր խմբերում ամեն բան, ինչ անում ենք, հիմնված է պարտավորություններ ստանձնելու և հաշվետու լինելու վրա:*

***ԽՄԲԻ Բ ԱՆԴԱՄ.*** *Խմբի հանդիպման վերջում մենք վերանայում ենք շաբաթվա մեր գործերը և ավելացնում ենք մեր առողջագրությունը՝ մեր պարտավորությունը ցույց տալու համար: Մենք նաև ընտրում ենք «աշխատանքային գործընկեր»: Աշխատանքային գործընկերը ևս առողջագրում է մեր աշխատանքային ձեռնարկը՝ ի նշան աջակցության: Եվ յուրաքանչյուր օր՝ ժողովների միջև, մենք կապ ենք հաստատում մեր աշխատանքային ընկերոջ հետ, որպեսզի հաշվետու լինենք միմյանց և անհրաժեշտ օգնություն խնդրենք:*

***ԽՄԲԻ Գ ԱՆԴԱՄ.*** *Հանդիպումների միջև մենք նշում ենք մեր առաջընթացը աշխատանքային ձեռնարկում և օգտագործում ենք տրամադրված գործիքները, օրինակ՝ աշխատանքային թերթիկները կամ այլ ձևաթղթեր: Եվ լրացուցիչ օգնության համար, մենք կարող ենք զանգահարել մեր ընտանիքի անդամներին, մեր ընկերներին կամ դասավարին:*

***ԽՄԲԻ Դ ԱՆԴԱՄ.*** *Հաջորդ ժողովի սկզբում մենք վերադառնում և զեկուցում ենք մեր պարտավորությունների վերաբերյալ: Դա պետք է լինի հաճելի և զորեղ փորձառություն յուրաքանչյուրի համար: Երբ խմբի անդամները զեկուցում են, մտածեք այն մասին, թե ինչպես է նա օգնություն ստացել, պարտավորություններ ստանձնելով ու առաջընթացի մասին զեկուցելով:*

***ԽՄԲԻ Ա ԱՆԴԱՄ.*** *Առաջին անգամ, երբ ես զեկուցեցի իմ պարտավորությունների վերաբերյալ, ես մտածում էի. «Սա տարօրինակ է»: Ի՞նչ տարբերություն իմ խմբի անդամի համար, թե ես ինչ եմ արել: Բայց հետո հասկացա, որ նրանք խնկապես անտարբեր չէին: Եվ դա օգնեց ինձ:*

***ԽՄԲԻ Բ ԱՆԴԱՄ.*** *Ես հասկացա, որ չէի ցանկանա իմ խմբի վստահությունը կորցնել: Այնպես որ ջանք թափեցի, որ պահեմ իմ պարտավորությունները: Համոզված չեմ, որ կկարողանայի որևէ այլ ձևով կանոնավոր առաջընթաց ունենալ: Յուրաքանչյուր ժողովին հաշվետու լինելը իրապ օգնեց ինձ իմ նախընտրությունների հարցում:*

***ԽՄԲԻ Գ ԱՆԴԱՄ.*** *Երբ մտածում էի ինքնապահովման իմ ուղու մասին, վախ էի ապրում, որովհետև այն ինձ համար մեծ բան էր թվում: Սակայն խմբային հանդիպումներն օգնեցին ինձ այդ մեծ խնդիրը բաժանել փոքր մասերի: Եվ ես հաշվետու եղա յուրաքանչյուր քայլի համար իմ խմբի առաջ: Այդ ժամանակ առաջընթացը իրապես ակնհայտ դարձավ: Կարծում եմ այդ հաջողության արդյունքը նոր սովորություններ ձևավորելն էր:*

Վերադարձեք 17-րդ էջը

| | | | |
|---|---|---|---|
| **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԿՕԳՆԻ ԻՆՁ ԻՆՔՆԱՊԱՀՈՎ ԴԱՌՆԱԼ:** | | | |
| Գրի առեք ձեզ համար նախընտրելի երեք տարբեր աշխատանք: | | | |
| **Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼ ԱՅՍ ԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:** | | | |
| Գրեք 3–5 մարդկանց անուններ, ում հետ կխոսեք յուրաքանչյուր աշխատանքի մասին: | | | |
| **Ի՞ՆՉ ՀԱՐՑԵՐ ԿՏԱՄ ԵՍ ԱՅԴ ՄԱՐԴԿԱՆՑ:** | | | |
| Սկզբի համար որքա՞ն եկամուտ կարող եմ ես ակնկալել յուրաքանչյուր ամիս: Որքա՞ն եկամուտ կարող եմ ակնկալել մեկ տարի աշխատելուց հետո: | | | |
| Ինչպե՞ս կարող եմ որակավորվել յուրաքանչյուր աշխատանքի համար: | | | |
| Տեղական ուսումնական հաստատություններ առկա՞ են: | | | |
| Արդյոք այս աշխատանքի համար պահանջարկը աճու՞մ է: | | | |
| Որքա՞ն է աշխատանքը սկսելու սկզբնական ծախսը: | | | |
| Ա՞յլ հարցեր: | | | |
| **Ո՞Ր ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊԱՀՈՎԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵԿԱՄՈՒՏԸ ԵՎ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՄ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:** | | | |
| Ի՞նչ սովորեցիք եք հնարավոր տարբերակների վերաբերյալ: Ո՞րն է լավագույնը թվում ինձ համար: | | | |



# 2

# Ի՞նչ կրթություն կօգտակարի ինձ իմ աշխատանքի համար։

## Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի

# ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Հանդիպման օրը.**

- Հաղորդագրություն ուղարկեք կամ զանգահարեք խմբի անդամներին: Հրավիրեք նրանց ժամանել 10 րոպե առաջ՝ զեկուցելու իրենց պարտավորությունները կատարելու վերաբերյալ:
- Նախապատրաստեք հանդիպման նյութերը: Չունե՞ք գրքերը կամ տեսանյութերը: Դուք կարող եք դրանք ձեռք բերել srs.lds.org կայքից:
- Եթե անցյալ շաբաթ դուք յուրաքանչյուր խմբի անդամի չեք տվել ինքնապահովման ծառայությունների Նախընտրությունների ցանկի պատճեն, ապա պատրաստվեք նրանց տալ այսօր մի օրինակ: Վերցրեք ցանկը ձեր ցցի ինքնապահովման կենտրոնում՝ ինքնապահովման մասնագետից կամ կայքից srs.lds.org/pef:

**Հանդիպումից 30 րոպե առաջ.**

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջ, որպեսզի բոլորը մոտ լինեն միմյանց:
- ՆՈ՛Ր Գրատախտակին գծեք պարտավորությունների մի աղյուսակ ձեր խմբի անդամների անուններով (տես ստորև օրինակը):

| Խմբի անդամի անունը | Խոսել եմ առնվազն հինգ մարդու հետ (գրեք թիվը) | Պատրաստ եմ ներկայացնելու իմ աշխատանքային ծրագիրը (այո/ոչ) | Կիրառել եմ Հիմքը ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ) | Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ) | Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ) |
|---|---|---|---|---|---|
| Գլորիա | 8 | Ա | Ա | Ա | Ա |
| | | | | | |
| | | | | | |

**Հանդիպումից 10 րոպե առաջ.**

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ ժամանում են:
- ՆՈ՛Ր Խմբի անդամները ժամանելիս խնդրեք նրանց լրացնել պարտավորությունների աղյուսակը գրատախտակին:
- Խմբից մեկին նշանակեք հետևել ժամանակին:

**Դասի սկզբին.**

- ՆՈ՛Ր Կիսվեք խմբի անդամների կոնտակտային տվյալներով (անցյալ հանդիպումից):
- Խնդրեք բոլորին անջատել իրենց հեռախոսները և այլ սարքերը:
- Սկսեք բացման աղոթքով (և օրհներգով, եթե ցանկանում եք):
- Ուշացողներին հանգիստ խնդրեք անջատել իրենց հեռախոսները եւ լրացնել պարտավորության աղյուսակը, մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- *Իմ հիմքը* գրքույկի սկզբունքի համար սահմանեք 20 րոպե ժամանակ:
- Ավարտեք 2-րդ սկզբունքը *Իմ հիմքը* գրքույկի: Ապա վերադարձեք այս աշխատանքային ձեռնարկին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵՍ ՊԱՀԵ՞Լ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**Ժամանակ**. Սահմանեք 10 րոպե ժամանակ միայն այս էջի համար (ոչ ամբողջ Հաշվետվություն բաժնի համար):

**Քննարկեք**. Կարդացեք աջ լուսանցքի մեջբերումը: Ինչպե՞ս է սա վերաբերում մեր խմբին:

**Կիրառեք**. Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների վերաբերյալ: Իրենց բոլոր պարտավորությունները կատարողներին խնդրում ենք ոտքի կանգնել: (Իրենց բոլոր պարտավորությունները կատարողներին ծափահարեք):

**Կարդացեք**. Այժմ խնդրում ենք բոլորը ոտքի կանգնեն: Մենք պետք է աշխատենք կատարել մեր բոլոր պարտավորությունները: Դա ինքնապահով մարդկանց գլխավոր սովորություններից մեկն է:

Եկեք կանգնած միասին կրկնենք մեր թեմատիկ կարգախոսները: Կարգախոսները մեզ հիշեցնում են մեր խմբի նպատակը.

**«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**

*Վարդապետություն և Ուխտեր 104.15*

**Հավատքով առ Տերը մենք միասին աշխատում ենք ինքնապահով դառնալ:**

**Կարդացեք**. Եկեք նստենք:

Այժմ մենք միասին կխորհրդակցենք հանուն ավելի լավ աշխատանքի կրթության մեր ծրագրերի շուրջ և միմյանց կօգնենք առաջընթաց ունենալ: Սա այս հավաքի ամենակարևո՛ր քննարկումն է:

**Քննարկեք**. Ի՞նչ եք դուք սովորել այս շաբաթվա ձեր պարտավորությունները կատարելիս: Այս խումբը կարո՞ղ է ձեզ օգնել առաջադիմել:



*«Երբ աշխատանքը չափվում է, աշխատանքը բարելավվում է: Երբ աշխատանքը չափվում և հաշվետվություն է տրվում, բարելավման արագությունն աճում է»:*

**ԹՈՄԱՍ Ս. ՄՈՆՍՈՆ**
**CONFERENCE REPORT, Oct. 1970, 107**

## Ի՞ՆՉ ՍՈՎՈՐԵՑԻ ԵՍ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ:

**Ժամանակ**. Այս էջի համար առանձին սահմանեք 40 րոպե ժամանակ:

**Կարդացեք**. Եկեք դիտենք այս տեսանյութը՝ որպես օրինակ, թե ինչպես կարելի է ներկայացնել մեր ծրագրերը:

**Դիտել**. «Աշխատանքային իմ ծրագիրը երեք րոպեում»: (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 22 էջում):

**Կիրառեք**. Խմբի յուրաքանչյուր անդամ այժմ երեքից քիչ րոպեում խմբին կներկայացնի իր աշխատանքային ծրագիրը:

Ձեր ներկայացումն ավարտելուց հետո հարցրեք, թե խումբը ինչ դիտողություններ ունի: Ձեզ մոտ գրի առեք դիտողությունները: Ձեր նշումների համար օգտագործեք ազատ տողերը ստորև:

Դիտողությունները թող հակիրճ լինեն, որ նախատեսված ժամանակում բոլորը հնարավորություն ունենան զեկուցելու:

| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԿՕԳՆԻ ԻՆՁ ԻՆՔՆԱՊԱՀՈՎ ԴԱՌՆԱԼ: | | | |
|---|---|---|---|
| Գրի առեք ձեզ համար նախընտրելի երեք տարբեր աշխատանք: | | | |
| **Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼ ԱՅՍ ԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:** | | | |
| Գրեք 3–5 մարդկանց անուններ, ում հետ կխոսեք յուրաքանչյուր աշխատանքի մասին: | | | |
| **Ի՞ՆՉ ՀԱՐՑԵՐ ԿՏԱՄ ԵՍ ԱՅԴ ՄԱՐԴԿԱՆՑ:** | | | |
| Սկզբի համար որքա՞ն եկամուտ կարող եմ ես ակնկալել յուրաքանչյուր ամիս: Որքա՞ն եկամուտ կարող եմ ակնկալել մեկ տարի աշխատելուց հետո: | | | |
| Ինչպե՞ս կարող եմ որակավորվել յուրաքանչյուր աշխատանքի համար: | | | |
| Տեղական ուսումնական հաստատություններ առկա՞ են: | | | |
| Արդյոք այս աշխատանքի համար պահանջարկը աճու՞մ է: | | | |
| Որքա՞ն է աշխատանքը սկսելու սկզբնական ծախսը: | | | |
| Ա՞յլ հարցեր: | | | |
| **Ո՞Ր ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊԱՀՈՎԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵԿԱՄՈՒՏԸ ԵՎ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՄ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:** | | | |
| Ի՞նչ սովորեցի ես հնարավոր տարբերակների վերաբերյալ: Ո՞րն է լավագույնը թվում ինձ համար: | | | |

**Քննարկեք**. Ի՞նչ գաղափարներ առաջացան զեկույցների ընթացքում, որոնք կօգնեն ձեզ ձեր որոշումներում: Գրի առեք ձեր մտքերը:

# ՍՈՎՈՐԵՔ

## ԿՐԹՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՄ ԵՍ ԸՆՏՐԵԼ:

**Ժամանակ.** Սովորել բաժնի համար սահմանեք 30 րոպե ժամանակ:

**Կարդացեք.** Այժմ մենք մտքեր ունենք մեր ապագա աշխատանքի համար: Այս շաբաթ մենք կքննարկենք, թե ինչ տեսակի կրթություն կամ ուսում է անհրաժեշտ, որպեսզի ձեռք բերենք ցանկալի աշխատանքի համար անհրաժեշտ հմտություններ կամ որակավորում:

| Շաբաթ 1 | ՇԱԲԱԹ 2 | Շաբաթ 3 | Շաբաթ 4 | Շաբաթ 5 | Շաբաթ 6 |
|---|---|---|---|---|---|
| Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ: | Ի՞նչ կրթություն կորակավորի ինձ իմ աշխատանքի համար: | Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար: | Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Կրթության մշտական հիմնադրամից: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանից դուրս: |

**Կիրառեք.** Դասվարը խմբի յուրաքանչյուր անդամին պետք է հանձնի Ինքնապահովման ծառայությունների նախընտրությունների ցանկ, եթե անցյալ շաբաթ այդ ցանկը չի տրվել նրանց:

Ընտրեք երկու հոգու, որ գրեն գրատախտակին: Ապա, երկու րոպեի ընթացքում յուրաքանչյուր մասնակից թող թվարկի որքան հնարավոր է շատ տեղական ուսումնական հաստատություններ կամ ծրագրեր: Ձեր ցանկում ներառեք հետևյալը.

- Պետական և մասնավոր հաստատություններ ու համալսարաններ
- Արհեստագործական ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ
- Աշակերտության կամ պրակտիկայի հնարավորություններ
- Նախընտրելի հաստատությունների և ծրագրերի ցանկից ընտրված նախընտրելի ծրագրեր

**Կարդացեք.** Ո՞ր տարբերակները կարող են որակավորել մեզ մեր ապագա աշխատանքի համար: Կարևոր է իմանալ, որ ոչ բոլոր հաստատություններն ու ծրագրերն են համարժեք: Դրանք տարբերվում են ուսման տևողությամբ, վարձավճարով և ծրագրերի բարդությամբ: Որոշ հաստատություններ շրջանավարտներին օգնում են աշխատանք գտնել: Որոշ հաստատություններ արդյունավետ չեն կամ չափից շատ թանկ են:

**Դիտեք.** «Ուսումնական հաստատության կամ ծրագրի ընտրություն» (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 38 էջում):

**Քննարկեք.** Ի՞նչ քայլեր կձեռնարկեք դուք, որպեսզի գտնեք ճիշտ ուսումնական ծրագիրը:

**Կարդացեք.** Եթե մեզ պետք լինի օգտվել ԿՄՀ վարկից, մեզ անհրաժեշտ կլինի ընտրել այնպիսի հաստատություն, որն առկա է Նախընտրելի հաստատությունների և ծրագրերի ցանկում: Այդ հաստատությունները կապահովեն հմտություններ նախընտրելի աշխատանք գտնելու համար: Նրանք նաև ավարտողներին օգնում են *գտնել* այդ աշխատանքը:

Դուք կարող եք դիմել ցանկում բացառություն կամ ավելացում կատարելու համար՝ կապ հաստատելով ինքնապահովման ծառայությունների տեղական կառավարչի հետ:

**Կարդացեք**. Այս շաբաթ մենք մեզ կտանք այս հարցը և կկատարենք հետևյալ գործողությունները.

**Կարդացեք**. **ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑԸ – Ի՞նչ կրթություն կամ վերապատրաստում ինձ կորակավորի իմ աշխատանքի համար:**

**ՇԱԲԱԹՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ – Հետազոտեք կրթության տարբերակները, սովորեք ծրագրերի մասին, խոսելով տարբեր մարդկանց հետ, և կրթության ծրագիր պատրաստեք:**

## ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏՐԱՍՏԵՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ:

**Կիրառեք**. Շաբաթվա ընթացքում մենք կպատրաստենք կրթության ծրագիր (տես էջ 33): Այս գործնական աշխատանքը կօգնի մեզ սովորել, թե ինչպես անեք դա՝ քայլ առ քայլ:

***Քայլ 1:*** Կարդացեք օրինակները: Այնուհետև, որպես փորձնական աշխատանք, «Ձեր օրինակը» սյունակում գրի առեք ձեր նախընտրելի կրթության տարբերակներից մեկը: Գրեք մարդկանց անուններ, ում հետ կարող եք խոսել այդ տարբերակի վերաբերյալ:

| ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ | | | |
|---|---|---|---|
| | **Օրինակ 1** | **Օրինակ 2** | **Ձեր օրինակը** |
| Գրեք այն ուսումնական ծրագրերի կամ հաստատությունների անունները, որոնք դուք հետազոտում եք: | *Պոլիտեխնիկական Ինստիտուտ* | *Համակարգչային ծրագրերի ուսուցման կենտրոն* | |
| **Ո՞Վ ԳԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅՍ ԾՐԱԳՐԻ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ** | | | |
| Գրեք մարդկանց անուններ, ում հետ կխոսեք յուրաքանչյուր ծրագրի ու հաստատության վերաբերյալ: | *Քույր Սդոն աշխատում է այնտեղ*<br>*Հաստատության խորհրդատուները, ուսուցիչները*<br>*Իմ ընկերը՝ Սոֆիան, գնացել է այդ դպրոցը*<br>*Ուսանողներ* | *Համակարգչային խանութի ծանոթ տղան*<br>*Եղբայր Սոլդոնան անցել է այդ դասընթացը*<br>*Ուսումնական կենտրոնում ինչ-որ մեկի հետ* | |

**Քայլ 2:** Կարդացեք ներքոհիշյալ հարցերը և օրինակները: Լրացրեք «Ձեր օրինակը» սյունակի վանդակները: Այս գործնական աշխատանքի համար դուք հնարավոր է նախապես ենթադրություն անեք:

| Ի՞ՆՉ ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՀԱՐՑՆԵԼ: | | | |
|---|---|---|---|
| | **Օրինակ 1** | **Օրինակ 2** | **Ձեր օրինակը** |
| Որքա՞ն է հաստատության շրջանավարտների թիվը: Քանի՞սն են լավ աշխատանք գտնում: | 80% ավարտում են և վկայական ստանում<br>Ավարտողների մեծ մասը լավ աշխատանք է գտնում<br>Շատերը մեկ տարում ղեկավար պաշտոնի են անցնում | 60-65% վկայական են ստանում<br>Գրեթե բոլոր վկայական ստացողները լավ աշխատանք են գտնում | |
| Ի՞նչ է անհրաժեշտ այդ ծրագիրը կամ հաստատությունը ընդունվելու համար: | Հաստատությունում 100 տեղ կա մեկ տարվա համար. անհրաժեշտ է մաթեմատիկայի հիմնական ստուգարք հանձնել. անհրաժեշտ է ունենալ 2 երաշխավոր անձ | Մաթեմատիկայի ստուգարք հանձնել<br>Վարձը վճարել<br>Անձնական համակարգիչ ունենալ | |
| Որքա՞ն պետք է սովորել հավաստագրի/ ավարտելու համար: | վկայականի համար՝ 18 ամիս<br>6 ամիս պրակտիկայի հնարավորություն (հաստատությունն ինքն է այն կազմակերպում՝ անվճար) | 9 ամիս և հավաստագրման ստուգարք | |
| Որքա՞ն է մեկ տարվա ուսման վարձը: Որքա՞ն է ամբողջ ուսման վարձը: Իսկ վկայականի՞ համար: | 10000/տարեկան գումարը՝ ուսման վարձ և այլ ծախսեր<br>15000 ողջ ծրագրի գումարը<br>8000 (լրացուցիչ) վկայականի և գործիքների համար | 15000/9 ամսվա գումարը<br>(15000 ողջ ծրագրի գումարը)<br>5000 (լրացուցիչ) հավաստագիրը վավերացնելու համար | |
| Կա՞ արդյոք կրթաթոշակի (անվճար ուսուցման) հնարավորություն: Իսկ ուսումնական դրամաշնո՞րհ: Իսկ վա՞րկ: | Ուսման վարձը հնարավոր է միայն 6 ամսվա զեղչված ուսման համար. դրամաշնորհ չկա. վարկերը տրվում են բարձր տոկոսով | Ոչ | |
| Ի՞նչ հերթափոխով է ուսուցումը: Ինչպիսի՞ն է տրանսպորտի հասանելիությունը: | 3 հերթ (առավոտյան, ցերեկային, երեկոյան)<br>Ավտոբուսային երթուղիների հանգույցում. ինձ համար 45ր. ճանապարհ | Առավոտյան և երեկոյան<br>Երկու ավտոբուսի փոփոխություն. 1 ժամվա ճանապարհ մեկ ուղղությամբ | |

**Քայլ 3:** Այժմ կարդացեք օրինակները և ամփոփեք «Ձեր օրինակը» բաժինը՝ աջ կողմի սյունակում: Հիշեք, որ սա միայն փորձնական օրինակ է: Այս շաբաթվա ընթացքում մենք ավելի ճշգրիտ տեղեկություն կհավաքենք:

| Ո՞Ր ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊԱՀՈՎԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵԿԱՄՈՒՏԸ ԵՎ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՄ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԻՆ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ | | | |
|---|---|---|---|
| | **Օրինակ 1** | **Օրինակ 2** | **Ձեր օրինակը** |
| Ի՞նչ սովորեցի ես հնարավոր տարբերակների վերաբերյալ: Ո՞րն է լավագույնը թվում ինձ համար: | *Ավելի շատ ժամանակ: Մի փոքր ավելի թանկ: Տեղավորման լավ հնարավորություն, կրթաթոշակ, դասերի ճկուն ժամանակացույց: Գործատուների հետ լավ կապեր:* | *Ավելի քիչ ժամանակ: Ավելի քիչ ընդհանուր ծախսեր: Դուրս մնալու մեծ վտանգ: Տեղավորման բարձր հավանականություն: Տրանսպորտային անհարմարություն:* | |

**Կարդացեք**. Այս շաբաթ տեղեկություն հավաքելուց հետո, մենք պետք է որոշում կայացնենք: Մենք կարող ենք աղոթել և որպես օգնություն կարդալ մեր հայրապետական օրհնությունը: Արժանի և անկեղծ լինելու դեպքում Սուրբ Հոգին կուղղորդի մեզ: Տերը ցանկանում է օրհնել մեզ: Եկեք փնտրենք Նրա օգնությունը:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ:

**Կարդացեք**. Հաջորդ շաբաթվան նախապատրաստվելու համար եկեք փորձ անենք ներկայացնել կրթության մեր ծրագիրը:

**Կիրառեք**. Մոտեցեք գործնական աշխատանքների ձեր նոր գործընկերոջը: Ներկայացրեք կրթության ծրագրի մի օրինակ այնպես, կարծես թե դա ձեր ծրագիրն է (տես 30–31 էջերը): Եթե ամբողջությամբ չունեք ողջ տեղեկությունը, գործածեք ձեր պատկերացումը: Տեղավորվեք երեք րոպեի մեջ: Ապա երկու րոպե լսեք ձեր գործընկերոջ դիտողությունները:

Փոխվեք դերերով և թույլ տվեք, որ մյուս գործընկերը փորձի ներկայացնել իրենը:

**Քննարկեք**. Վերադարձեք մեծ խումբ: Քննարկեք այն, թե ինչպես եք պատրաստվում տեղեկություն հավաքել շաբաթվա ընթացքում և ինչպես եք պատրաստվում ներկայացնել ձեր կրթական ծրագիրը հաջորդ շաբաթ: Հարցեր տվեք և փոխանակվեք մտքերով:

**Կարդացեք**. Շաբաթվա ընթացքում տեղեկություն հավաքեք և լրացրեք կրթության այս ծրագիրը: Խոսեք հնարավորինս շատ մարդկանց հետ: Շատ հարցեր տվեք և հարցեր ավելացրեք ձեր գրառումներին: Եթե ձեզ կրթության ծրագրի լրացուցիչ օրինակ է հարկավոր, կարող եք մի օրինակ գտնել 39 էջում:

| | | | |
|---|---|---|---|
| **ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ** | | | |
| Գրեք այն ուսումնական ծրագրերի կամ հաստատությունների անունները, որոնք դուք հետազոտում եք: | | | |
| **Ո՞Վ ԳԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅՍ ԾՐԱԳՐԻ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ** | | | |
| Գրեք մարդկանց անուններ, ում հետ կխոսեք յուրաքանչյուր ծրագրի ու հաստատության վերաբերյալ: | | | |
| **Ի՞ՆՉ ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՀԱՐՑՆԵԼ:** | | | |
| Որքա՞ն է հաստատությունն ավարտողների թիվը: Քանի՞սն են լավ աշխատանք գտնում: | | | |
| Ի՞նչ է անհրաժեշտ այդ ծրագիրը կամ հաստատությունը ընդունվելու համար: | | | |
| Որքա՞ն պետք է սովորել հավաստագրի/որակավորման համար: | | | |
| Որքա՞ն է մեկ տարվա ուսման վարձը: Որքա՞ն է ամբողջ ուսման վարձը: Իսկ վկայականի՞ համար: | | | |
| Կա՞ արդյոք կրթաթոշակի (անվճար ուսուցման) հնարավորություն: Իսկ ուսումնական դրամաշնո՞րհ: Իսկ վա՞րկ: | | | |
| Ի՞նչ հերթափոխով է ուսուցումը: Ինչպիսի՞ն է տրանսպորտի հասանելիությունը: | | | |
| **Ո՞Ր ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՄ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ:** | | | |
| Ի՞նչ սովորեցի ես հնարավոր տարբերակների վերաբերյալ: Ո՞րն է լավագույնը թվում ինձ համար: | | | |

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՎ ԿՄՀ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼ:

Կրթության ձեր ծրագիրը կարող է նաև օգնել ձեզ պատրաստվել ԿՄՀ վարկ ստանալ, եթե ձեզ անհրաժեշտ լինի վարկ վերցնել ձեր կրթության կամ ուսման ծախսերը վճարելու օգնության համար: Եթե դուք կարծում եք, որ հնարավոր է ԿՄՀ վարկի կարիք ունենաք, կրթության ձեր ծրագիրը կազմելիս պատասխանեք հետևյալ հարցերին և պահեք այդ տեղեկությունը ԿՄՀ վարկի դիմումի համար:

Կրթական մշտական հիմնադրամ

| ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. Ի՞ՆՉ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՈՒՍՈՒՄ ԻՆՁ ԿՈՐԱԿԱՎՈՐԻ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ | |
|---|---|
| Ընտրված հաստատությունը (ԻԾ նախընտրելի հաստատությունների և ծրագրերի ցանկից). | |
| Մասնագիտությունը կամ ծրագիրը (ԻԾ նախընտրելի հաստատությունների և ծրագրերի ցանկից). | |
| Նախընտրելի աշխատանքը (ԻԾ նախընտրելի աշխատանքների ցանկից). | |
| Դիմելով այս վարկի համար, երբ եք նախատեսում սկսել ձեր ուսումը: | |
| Ծրագրավորված ավարտման ամիսը և տարին. | |

**Ծանուցում.** Եթե ձեր ընտրած հաստատությունը կամ ծրագիրը ԻԾ նախընտրելի հաստատությունների և ծրագրերի ցանկում չէ և դուք դեռևս ցանկանում եք դիմել վարկի համար, դիմեք ինքնապահովման ծառայությունների ձեր կառավարչին:

# ԽՈՐՀԵՔ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ, ՈՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱՄ։

**Ժամանակ.** Խորհել բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ։

**Կիրառեք.** Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը կամ մտածեք մեկ այլ սուրբ գրության մասին։ Լուռ խորհեք, թե ինչ է այն ձեզ ուսուցանում։ Ստորև գրի առեք ձեր տպավորությունները։

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Քննարկեք.** Ո՞վ կցանկանա իր մտքերով կիսվել։

*«Իմաստուն կ՚անեմ քեզ, եւ կ՚սովորեցնեմ քեզ այն ճանապարհը, որ նորանում պիտի գնաս. Կ՚խրատեմ քեզ՝ իմ աչքը քեզ վերայ կ՚լինի»։*

**ՍԱՂՄՈՍ 32.8**

# ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՐԵՔ

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱԼ:

**Ժամանակ**. Պարտավորություն վերցնել բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Ընտրեք աշխատանքային մի ընկեր: Որոշեք, թե երբ և ինչպես եք կապ հաստատելու միմյանց հետ:

*Աշխատանքային ընկերոջ անունը*

*Կապ հաստատելու տվյալներ*

**Կարդացեք պարտավորության յուրաքանչյուր քայլը ձեր աշխատանքային ընկերոջը: Խոստացեք պահել ձեր պարտավորությունները: Ստորագրեք պարտավորությունը ստանձնելու համար:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ես կխոսեմ առնվազն հինգ մարդու հետ, որպեսզի տեղեկություն հավաքեմ կրթության իմ ծրագրի վերաբերյալ:**

Իմ նպատակն է. 5 8 10

**Ես պատրաստեմ կրթության իմ ծրագիրը և կներկայացնեմ այն:**

Ես կկիրառեմ *Իմ հիմքը* գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ այն իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողությունները՝ նույնիսկ եթե մեկ դրամ լինի:

Ես կզեկուցեմ աշխատանքային իմ ընկերոջը:

*Իմ ստորագրությունը*

*Աշխատանքային ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՋԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

**Կիրառեք**. Նախքան հաջորդ հանդիպումը, օգտագործեք պարտավորությունների այս աղյուսակը՝ ձեր առաջընթացը գրանցելու համար: Ստորև տրված վանդակներում գրեք «այո» կամ «ոչ» կամ թե քանի անգամ եք պահել ձեր պարտավորությունը:

| *Խոսել եմ առնավազն հինգ մարդու հետ իմ կրթական ընտրությունների վերաբերյալ (գրեք թիվը)* | *Պատրաստ եմ ներկայացնելու իմ կրթական ծրագիրը (այո/ոչ)* | *Կիրառել եմ **Հիմքը** ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|
| | | | | |

**Կարդացեք**. Հիշեք նաև գրանցել ձեր անձնական ծախսերը *Ինքնապահովման իմ ուղին* ձեր գրքույկի ետևում:

Խմբային մեր հաջորդ հանդիպմանը դասվարը գրատախտակին կգծի պարտավորությունների աղյուսակ (ինչպես վերևում նշվածը): Մենք կներկայանանք հավաքից 10 րոպե առաջ և կգրանցենք մեր առաջընթացը աղյուսակի վրա:

Ընտրեք մեկին վարել *Իմ հիմքը* ձեռնարկի թեմաներից մեկի քննարկումը: Հիշեցրեք հանձնարարություն ստացողին, որ հետևի ձեռնարկին և չօգտագործի այլ աղբյուրներ: (Զգիտե՞ք ինչպես թեմայի քննարկում վարել *Իմ հիմքը* ձեռնարկից: Կարդացեք 17 էջը և կազմի դարձերեսը):

Խնդրեք ինչ-որ մեկին ասել փակման աղոթքը:

**_Դիտողությունները խրախուսվում են_**

*Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները srsfeedback@ldschurch.org է-փոստի հասցեին:*

# Օժանդակ նյութեր

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԾՐԱԳՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Նշանակեք դերեր և բեմականացրեք հետևյալ սցենարը.

***ՔՈՒԱՄԻ.*** *Դե, կարծում եմ ինձ մոտ ավելի լավ մտքեր են առաջացել մի քանի լավ աշխատանք փորձելու համար:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Իսկ դրանք կօգնե՞ն քեզ ինքնապահովման քո նպատակներում:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Կարծում եմ, կօգնեն: Բայց ես դեռևս չունեմ այդ աշխատանքների համար անհրաժեշտ հմտությունները:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Այո: Ինձ մոտ էլ է նույն խնդիրը:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Մենք բոլորս ավելի շատ կրթության ու վերապատրաստման կարիք ունենք:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Բայց սովորելու տեղերն այնքան շատ են. ինչպե՞ս իմանաս, որն է սովորելու ճիշտ տեղը: Բոլորի համար էլ պետք է վճարես: Ինչպե՞ս համոզվես, որ լավ ընտրություն ես կատարել:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Մեր ծխի տղաներից մեկը «Նյու Էյջ» քոլեջ է հաճախում: Դա տեխնիկական կրթության քոլեջ է: Հավանաբար, ես էլ կգնամ այնտեղ:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Ես շատ պաստառներ եմ տեսել, որ ասում են, թե պետական համալսարանն է բոլորից լավը: Բայց այն ինձ համար անհասանելի է:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Իսկ ես լսել եմ, որ լավ աշխատանքի համար ավելի մեծ հավանականություն կա, եթե դու գործող հիմնարկությունում կամ հաստատությունում մասնագիտական պրակտիկա ես անցնում:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Իսկ ինչպե՞ս կարող ենք ավելի լավ իմանալ:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Կարո՞ղ ենք գնալ ու խոսել մարդկանց հետ ուսումնական հաստատությունում: Կամ գուցե շրջանավարտների հետ:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Դա դժվար գործ է: Ես ամաչում եմ մարդկանց հետ խոսել:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Դժվար է, բայց պետք է անել: Մեզ պետք է խոսել ուսումնական հաստատությունների հետ, որպեսզի պարզենք, թե արդյոք իրենց ուսանողները ավարտում են և արդյոք շրջանավարտները լավ աշխատանք են գտնո՞ւմ: Իսկ ուսման վա՞րձը և կրթաթոշակը՝ բոլոր այդ ֆինանսական հարցե՞րը: Կարծում եմ պետք է խոսենք մեր ընտրած հաստատության հետ: Եվ նաև այդ հաստատությունն ավարտած մարդկանց հետ:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Ես կգամ քեզ հետ, Միքալա: Այո, եկ միասին դա անենք:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Դա հրաշալի կլինի:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Դա մեծ որոշում է, որ կապված է մեր ֆինանսների և մեր ապագայի հետ: Գուցե պետք է նաև աղոթել հաջողության համար: Կամ առաջնորդության օրհնություն խնդրել: Իմ միսիայի ընթացքում ես սովորել եմ, որ մենք կարող ենք առաջնորդվել Տիրոջ կողմից:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Ես նույնպես համաձայն եմ, որ դա հնարավոր է: Հավանաբար, հավատքը այս բոլորի կարևոր մասն է: Հավատքը, հույսը և մեր ջանքերը: Ես սկսում եմ զգալ, որ Երկնային Հոր ցանկությունն է օրհնել մեզ այս գործում:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Եվ եկեք չմոռանանք Նախընտրելի հաստատությունների և ծրագրերի ցանկը: Այնտեղ լավ տեղեկություն կա ծրագրերի ու հմտությունների վերաբերյալ, որոնք կարող են որակավորել մեզ նախընտրելի աշխատանքների համար: Գուցե պետք է դրանից սկսել՝ անկախ նրանից, մենք ԿՄՀ վարկի կարիք ունենք, թե ոչ:*

Վերադարձեք 29 էջը

| | | | |
|---|---|---|---|
| **ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ** | | | |
| Գրեք այն ուսումնական ծրագրերի կամ հաստատությունների անունները, որոնք դուք հետազոտում եք: | | | |
| **Ո՞Վ ԳԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅՍ ԾՐԱԳՐԻ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ** | | | |
| Գրեք մարդկանց անուններ, ում հետ կխոսեք յուրաքանչյուր ծրագրի ու հաստատության վերաբերյալ: | | | |
| **Ի՞ՆՉ ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՀԱՐՑՆԵԼ:** | | | |
| Որքա՞ն է հաստատությունն ավարտողների թիվը: Քանի՞սն են լավ աշխատանք գտնում: | | | |
| Ի՞նչ է անհրաժեշտ այդ ծրագիրը կամ հաստատությունը ընդունվելու համար: | | | |
| Որքա՞ն պետք է սովորել հավաստագրի/որակավորման համար: | | | |
| Որքա՞ն է մեկ տարվա ուսման վարձը: Որքա՞ն է ամբողջ ուսման վարձը: Իսկ վկայականի՞ համար: | | | |
| Կա՞ արդյոք կրթաթոշակի (անվճար ուսուցման) հնարավորություն: Իսկ ուսումնական դրամաշնո՞րհի: Իսկ վա՞րկ: | | | |
| Ի՞նչ հերթափոխով է ուսուցումը: Ինչպիսի՞ն է տրանսպորտի հասանելիությունը: | | | |
| **Ո՞Ր ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՄ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ:** | | | |
| Ի՞նչ սովորեցի ես հնարավոր տարբերակների վերաբերյալ: Ո՞րն է լավագույնը թվում ինձ համար: | | | |

## ՆՇՈՒՄՆԵՐ



# 3

# Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար:

## Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի

# ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Հանդիպման օրը.**

- Հաղորդագրություն ուղարկեք կամ զանգահարեք խմբի անդամներին: Հրավիրեք նրանց ժամանել 10 րոպե առաջ՝ զեկուցելու իրենց պարտավորությունները կատարելու վերաբերյալ:
- Նախապատրաստեք հանդիպման նյութերը:

**Հանդիպումից 30 րոպե առաջ.**

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջն այնպես, որ բոլորը մոտ լինեն միմյանց:
- Գրատախտակին գծեք պարտավորությունների հետևյալ գծապատկերը:

| *Խմբի անդամի անունը* | *Խոսել եմ առնվազն հինգ մարդու հետ իմ կրթական ընտրությունների մասին (գրեք թիվը)* | *Պատրաստ եմ ներկայացնելու իմ կրթական ծրագիրը (այո/ոչ)* | *Կիրառել եմ **Հիմքը** ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|---|
| Գլորիա | 7 | Ա | Ա | Ա | Ա |
| | | | | | |
| | | | | | |

**Հանդիպումից 10 րոպե առաջ.**

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ ժամանում են:
- Խմբի անդամները ժամանելիս խնդրեք նրանց լրացնել պարտավորությունների աղյուսակը գրատախտակին:
- Խմբից մեկին նշանակեք հետևել ժամանակին:

**Դասի սկզբին.**

- Խնդրեք բոլորին անջատել իրենց հեռախոսները և այլ սարքերը:
- Սկսեք բացման աղոթքով (և օրհներգով, եթե ցանկանում եք):
- Ուշացողներին ցածր ձայնով խնդրեք անջատել իրենց հեռախոսները եւ լրացնել պարտավորության աղյուսակը, մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- *Իմ հիմքը* գրքույկի թեմայի համար սահմանեք 20 րոպե ժամանակ:
- Ավարտեք 3-րդ սկզբունքը *Իմ հիմքը* գրքույկի: Ապա վերադարձեք այս աշխատանքային ձեռնարկին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵՍ ՊԱՀԵ՞Լ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**Ժամանակ**. Սահմանեք 10 րոպե ժամանակ միայն այս էջի համար (ոչ ամբողջ Հաշվետվություն բաժնի համար):

**Կիրառեք**. Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների վերաբերյալ: Իրենց բոլոր պարտավորությունները կատարողներին խնդրում ենք ոտքի կանգնել: (Ծափահարություն):

**Կարդացեք**. Այժմ խնդրում ենք բոլորը ոտքի կանգնեն: Մենք պետք է աշխատենք կատարել մեր բոլոր պարտավորությունները: Դա ինքնապահով մարդկանց գլխավոր սովորություններից մեկն է: Եկեք միասին կրկնենք մեր թեմատիկ կարգախոսները.

**«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**

*Վարդապետություն և Ուխտեր 104.15*

**Հավատքով առ Տերը մենք միասին աշխատում ենք ինքնապահով դառնալ:**

**Կարդացեք**. Եկեք նստենք:

**Քննարկեք**. Ի՞նչ եք դուք սովորել այս շաբաթվա ձեր պարտավորությունները կատարելիս: Այս խումբը կարո՞ղ է ձեզ օգնել առաջադիմել:

## Ի՞ՆՉ ՍՈՎՈՐԵՑԻ ԵՍ ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ:

**Ժամանակ**. Այս էջի համար առանձին սահմանեք 40 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Խմբի յուրաքանչյուր անդամ այժմ երեքից քիչ րոպեում խմբին կներկայացնի իր կրթության ծրագիրը:

Ձեր ներկայացումն ավարտելուց հետո հարցրեք, թե խումբը ինչ դիտողություններ ունի: Ձեզ մոտ գրի առեք դիտողությունները: Ձեր նշումների համար օգտագործեք ազատ տողերը ստորև:

Դիտողությունները թող հակիրճ լինեն, որ նախատեսված ժամանակում բոլորը հնարավորություն ունենան զեկուցելու:

**Քննարկեք**. Ի՞նչ գաղափարներ առաջացան զեկույցների ընթացքում, որոնք կօգնեն ձեզ ձեր որոշումներում: Գրի առեք ձեր մտքերը:

____________________________________

____________________________________

____________________________________

____________________________________

____________________________________

____________________________________

____________________________________

____________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

| ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ | | | |
|---|---|---|---|
| Գրեք այն ուսումնական ծրագրերի կամ հաստատությունների անունները, որոնք դուք հետազոտում եք: | | | |
| **Ո՞Վ ԳԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅՍ ԾՐԱԳՐԻ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ** | | | |
| Գրեք մարդկանց անուններ, ում հետ կխոսեք յուրաքանչյուր ծրագրի ու հաստատության վերաբերյալ: | | | |
| **Ի՞ՆՉ ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՀԱՐՑՆԵԼ:** | | | |
| Որքա՞ն է հաստատությունն ավարտողների թիվը: Քանի՞սն են լավ աշխատանք գտնում: | | | |
| Ի՞նչ է անհրաժեշտ այդ ծրագիրը կամ հաստատությունը ընդունվելու համար: | | | |
| Որքա՞ն պետք է սովորել հավաստագրի/որակավորման համար: | | | |
| Որքա՞ն է մեկ տարվա ուսման վարձը: Որքա՞ն է ամբողջ ուսման վարձը: Իսկ վկայականի՞ համար: | | | |
| Կա՞ արդյոք կրթաթոշակի (անվճար ուսուցման) հնարավորություն: Իսկ ուսումնական դրամաշնո՞րհի: Իսկ վա՞րկ: | | | |
| Ի՞նչ հերթափոխով է ուսուցումը: Ինչպիսի՞ն է տրանսպորտի հասանելիությունը: | | | |
| **Ո՞Ր ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՄ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ:** | | | |
| Ի՞նչ սովորեցի ես հնարավոր տարբերակների վերաբերյալ: Ո՞րն է լավագույնը թվում ինձ համար: | | | |

# ՍՈՎՈՐԵՔ

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ՎՃԱՐԵԼՈՒ ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

**Ժամանակ**. Սովորել բաժնի համար սահմանեք 30 րոպե ժամանակ

**Կարդացեք**. Այժմ մենք ավելի լավ պատկերացում ունենք այն մասին, թե ինչ կրթություն կամ ուսուցում կօգնի մեզ որակավորվել մեր ապագա աշխատանքի համար: Այժմ մենք կարող ենք հաշվել, թե որքան կլինեն մեր կրթության ծախսերը և ինչպես կարող ենք վճարել այն: Բազմաթիվ տարբերակներ ու աղբյուրներ կան, ներառյալ անձնական խնայողությունները, ընտանեկան օգնությունը, կրթաթոշակները և վարկերը:

| Շաբաթ 1 | Շաբաթ 2 | ՇԱԲԱԹ 3 | Շաբաթ 4 | Շաբաթ 5 | Շաբաթ 6 |
|---|---|---|---|---|---|
| Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ: | Ի՞նչ կրթություն կորակավորի ինձ իմ աշխատանքի համար: | Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար: | Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Կրթության մշտական հիմնադրամից: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանից դուրս: |

**Դիտեք**. «Իմ ուսման համար վճարելը» (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 54 էջում):

**Կարդացեք**. Այս շաբաթ մենք կգտնենք այս հարցի պատասխանները և կկատարենք հետևյալ գործողությունները.

---

**Կարդացեք**. **ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑԸ – Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար:**

**ՇԱԲԱԹՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ – Պարզեմ, թե որքան գումար է հարկավոր, որպեսզի վճարեմ իմ նախընտրած կրթական ծրագրի համար, տեղեկանամ վճարման ուղիների մասին և ֆինանսական ծրագիր կազմեմ:**

---

**Կարդացեք**. Մենք պետք է նախապես մտածենք փողի մասին, որպեսզի վճարենք մեր կրթության համար: Սկզբում կարող է անհարմար լինի, սակայն այն կօգնի մեզ իմաստուն ձևով ծրագրել մեր ֆինանսական միջոցները և ստանալ մեզ անհրաժեշտ կրթությունը:

**Քննարկեք**. Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը: Խմբով քննարկեք այս սուրբ գրության սկզբունքները: Ի՞նչ զգացումներ է առաջանում փողի վերաբերյալ, երբ հասկանում ես այս սկզբունքները:

*«Նախքան հարստություններ փնտրելը, փնտրեք Աստծո արքայությունը: Եվ նրանից հետո, երբ դուք հույս ձեռք բերեք Քրիստոսում, դուք ձեռք կբերեք հարստություններ, եթե փնտրեք. և դուք պետք է փնտրեք դրանք բարիք անելու մտադրությամբ՝ հագցնելու մերկերին, կերակրելու սովածներին, ազատելու գերյալներին և սփոփելու հիվանդներին ու չարչարվածներին»:*

**ՀԱԿՈԲ 2.18–19**

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՆԱԽԱՊԵՍ ԻՄԱՆԱԼ ՀՆԱՐԱՎՈՐ ԾԱԽՍԵՐԸ:

**Կիրառեք.** Բարձրաձայն կարդացեք հետևյալ օրինակը և ընթացքում քննարկեք նշվող հաշվարկները:

Մանուելը ծրագրում է սառնարանների մասնագետ դառնալ: Այս աշխատանքը մեր տարածքում պահանջարկ է վայելում: Այն նախընտրելի աշխատանքների ցանկում է: Նա և իր կին Էլիզաբեթը ընտրել են ուսումնական ծրագիրը և հաստատությունը Նախընտրելի հաստատությունների ու ծրագրերի ցանկից, սակայն չգիտեն, թե ինչպես են վճարելու ուսման համար: Նրանք միասին աշխատում են, որպեսզի կազմակերպեն իրենց ֆինանսական միջոցները: Նրանք իրենց ծախսերի ու եկամուտի հաշվառում են վարում և թարմացնում են *Իմ ուղին* գրքույկի իրենց ամսական եկամուտն ու ամսական ծախսերը: Ահա թե ինչ են նրանք հայտնաբերել.

| ԱՄՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ | |
|---|---|
| Եկամուտ աշխատավարձից | 1450 |
| Ընտանիքի անդամների օգնություն | 100 |
| Այլ եկամուտներ (ամսական) | 100 |
| **«Ա» Ընդհանուր ամսական եկամուտ** | **1650** |

| ԱՄՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ | |
|---|---|
| Տասանորդ, նվիրատվություններ | 170 |
| Վարձավճար | 550 |
| Ուտելիք | 450 |
| Տրանսպորտ | 200 |
| Ջուր, հոսանք, հեռախոս | 230 |
| **«Բ» Ամսական ընդհանուր ծախսեր** | **1600** |

Նրանք հաշվել են, թե որքան կարող են յուրաքանչյուր ամիս վճարել կրթության համար. **«Ա» Ընդհանուր ամսական եկամուտ** – **«Բ» Ամսական ընդհանուր ծախսեր** = **«Գ» կամ 50:**

Այնուհետև, նրանք հաշվում են, թե որքան կարող են վճարել մեկ տարվա ընթացքում. **«Գ» (50)** x 12 (ամիսների թիվը) = **«Դ» (600):** **«Դ» կամ 600** այն գումարն է, որ նրանք կարող են վճարել ամեն տարի կրթության համար:

Այնուհետև, նրանք հաշվում են, թե որքան կլինեն նրանց կրթության ծախսերը՝ **«Ե»:**

Եվ վերջապես, նրանք հաշվում են, թե որքան գումար է ներկայումս պակասում՝ **«Զ»:**

Այս գումարը վճարելու համար նրանք պետք է մեկ այլ աշխատանք կատարեն, վարկ վերցնեն կամ ինչ-որ այլ աղբյուրներ գտնեն:

| ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ *(մեկ տարվա համար)* | ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ |
|---|---|
| Ուսման վարձ | 9800 |
| **գումարած** Քննական և այլ վճարներ | **+ 500** |
| **գումարած** Գրքեր և այլ պարագաներ | **+ 1200** |
| **հանած** Կրթաթոշակ | **-1150** |
| **«Ե» Իմ կրթության ծախսերը** | **=10350** |
| **«Դ» Այն, ինչ կարող ենք վճարել** | **-600** |
| **«Զ» Այն, ինչ չենք կարող վճարել** | **=9750** |

**Քննարկեք.** Մանուելն ու Էլիզաբեթը լրացուցիչ 9750 փողամիջոցի կարիք կունենան, որպեսզի վճարեն իրենց առաջին տարվա կրթության համար: Ձեզ պա՞րզ է, թե ինչպես նրանք կատարեցին հաշվարկը: Եթե հարցեր ունեք, ապա քննարկեք միասին:

## ՈՐՔԱ՞Ն Է ԻՄ ԵԿԱՄՈՒՏԸ: ՈՐՔԱ՞Ն ԵՆ ԻՄ ԾԱԽՍԵՐԸ:

**Կարդացեք.** Այսպիսով, եկեք կազմենք մեր իսկ կրթության ֆինանսական ծրագիրը:

**Կիրառեք.** Մի քանի րոպե ինքնուրույն լրացրեք այս ձևաթուղթը: Ազնիվ եղեք ինքներդ ձեզ հետ: Կարող եք մատիտ օգտագործել: Այնուհետև, շաբաթվա ընթացքում, աշխատեք ձեր ընտանիքի հետ, որպեսզի ավելի ճշգրիտ դարձնեք այն: Ներկայիս համար, արեք ձեր լավագույնը, որպեսզի նախահաշիվ կազմեք:

Օգտագործեք *Իմ ուղին* գրքույկի ետևի կազմի թվերը:

| ԱՄՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ (*ներառյալ ամուսնու եկամուտը, եթե ամուսնացած եք*) | |
|---|---|
| Եկամուտ աշխատավարձից | |
| Ընտանիքի անդամների օգնությունը կրթության համար | |
| Այլ եկամուտ | |
| Այլ եկամուտ | |
| **«Ա» Ընդհանուր ամսական եկամուտ** | |

| ԱՄՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ | |
|---|---|
| Տասանորդ, նվիրատվություններ | |
| Խնայողություններ | |
| Ուտելիք | |
| Բնակարանային ծախսեր | |
| Ջուր | |
| Բժշկական ծախսեր | |
| Տրանսպորտ | |
| Կրթական ծախսեր | |
| Պարտքերի մարում | |
| Հագուստ | |
| Էլեկտրաէներգիա | |
| Հեռախոս | |
| Այլ | |
| **«Բ» Ամսական ընդհանուր ծախսեր** | |

Ձեր եկամուտն ու ծախսերը լրացնելուց հետո, հաշվեք, թե որքան կարող եք ամեն ամիս վճարել ձեր կրթության համար.

**«Ա» Ընդհանուր ամսական եկամուտ** – **«Բ» Ամսական ընդհանուր ծախսեր** = **«Գ»** __________.

Եթե **«Գ»** բաժնի թիվը 0 է կամ բացասական, դուք չունեք լրացուցիչ գումար, որ վճարեք ձեր կրթության համար:

Եթե **«Գ»** բաժնի թիվը 0-ից բարձր է, ապա հաշվեք, թե որքան կարող եք վճարել մեկ տարում.

**«Գ»** __________ x 12 (ամիսների թիվը) = **«Դ»** __________.

**«Դ»** բաժինը **ընդհանուր գումարն է, որ կարող եք վճարել** ամեն տարի ձեր կրթության համար:

## ՈՐՔԱ՞Ն ԵՆ ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ:

**Կարդացեք.** Հաջորդը՝ մենք պարզում ենք մեր կրթության ծախսերը:

**Կիրառեք.** Փորձեք լրացնել այս դատարկ վանդակները և հաշվարկ կատարեք: Գրեք մատիտով: Եթե դուք արդեն ունեք ընտրված մեկ ծրագիր, լրացրեք սյունակներից մեկը: Եթե նախատեսում եք երկու կամ երեք ծրագիր, ապա համեմատության համար լրացրեք նաև մյուս սյունակները: Եթե օգնության կարիք ունեք, կարող եք միմյանց օգնել կամ դիմել դասվարի օգնությանը:

Տրված օրինակը մեկ տարվա համար է: Եթե ձեր ծրագիրն ավելի կարճ է, ապա ճշտեք ձեր նախահաշիվը: ԻԾ նախընտրելի ուսումնական հաստատությունների և ծրագրերի ցանկը և կրթության ձեր ծրագիրը կօգնի ձեզ:

| ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ (մեկ տարվա համար) | **Օրինակ** *Ճառագայթաբան բժշկական տեխնոլոգ* | **Ծրագիր 1** | **Ծրագիր 2** | **Ծրագիր 3** |
|---|---|---|---|---|
| Ուսման վարձ | *12000* | | | |
| **Գումարած** քննական և այլ ծախսեր (ընդունվելու, հաստատագրման, վկայագրի, ավարտական քննության և այլ ծախսեր՝ մեկ տարվա) | *+ 2000* | + | + | + |
| **Գումարած** գրքեր և այլ պարագաներ (մեկ տարվա) | *+ 1000* | + | + | + |
| **Հանած** կրթաթոշակ կամ դրամաշնորհ (եթե առկա է – մեկ տարվա) | *+ 1000* | - | - | - |
| **«Ե» Կրթության իմ ծախսերը (մեկ տարվա)** | *= 14000* | = | = | = |
| **«Դ» Որքա՞ն կարող ենք մենք վճարել (մեկ տարվա)** | *- 1000* | - | - | - |
| **«Զ» Մնում է վճարել (մեկ տարվա)** | *= 13000* | = | = | = |

## ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ Ո՞Ր ՄԱՍԸ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ ՎՃԱՐԵԼ:

**Կիրառեք.** Նայեք վերևում տրված աղյուսակի վերջին տողին:

Եթե «Զ» զրո կամ բացասական թիվ է, ապա դուք կարող եք վճարել ձեր ուսման ծախսերը՝ շնորհավորո՜ւմ ենք:

Եթե «Զ» դրական թիվ է, ապա դուք պետք է ավելի շատ վճարելու ուղի գտնեք: Այդ ճեղքվածքը կարելի է լրացնել ավելի շատ կրթաթոշակ ստանալով, մեկ այլ աշխատանք անելով կամ վարկ վերցնելով:

## ԵԹԵ ՉԵՄ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՎՃԱՐԵԼ, ՈՒՐԻՇ Ի՞ՆՉ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ՈՒՆԵՄ ԵՍ:

**Կարդացեք.** Լավագույն տարբերակն է, որ մենք կարողանանք ինքնուրույն վճարել կրթության ծախսերը, անգամ եթե որոշ զոհաբերություն է պահանջվում: Եթե մեր հաշվարկները ցույց են տալիս, որ ինքներս չենք կարող վճարել մեր կրթության համար, ապա նոր դիմում ենք այլ աղբյուրների:

**Քննարկեք.** Որպես խումբ՝ հերթով կարդացեք այս աղյուսակի յուրաքանչյուր բաժինը: Համառոտ քննարկեք յուրաքանչյուր տարբերակը: Ո՞ր տարբերակը լավագույնը կլինի ձեզ համար:

| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |
|---|---|---|
| **Սովորելու ընթացքում ևս մեկ աշխատանք սկսել** | Չեք ունենա ոչ պարտք, ոչ էլ տոկոսներ: Հմտություններ սովորեք կամ կատարելագործեք: Կարևոր ծանոթություններ ձեռք բերեք: | Հնարավոր է դժվար լինի երկու տեղ աշխատել և ուսման մեջ հաջողության հասնել: Կարող է դժվար լինել ընտանիքի համար: Ծրագիրն ավարտելու համար ավելի երկար ժամանակ կպահանջվի: |
| **Ընտանիքից պարտք վերցնել** | Նրանց դու ճանաչում և վստահում ես: Նրանք ցանկանում են, որ դու հաջողության հասնես: | Կարող է սրել ընտանեկան հարաբերությունները: Կարող է դժվարություն առաջացնել, երբ ընտանիքում արտակարգ իրավիճակ ստեղծվի: |
| **Կրթաթոշակ կամ դրամաշնորհ փնտրել:** | Չեք ունենա ոչ պարտք, ոչ էլ տոկոսներ: Ազատություն կունենաք սովորել, առանց երկրորդ աշխատանքի կարիքի: | Գտնելը հնարավոր է դժվար լինի: Բայց արժե ջանք գործադրել: |
| **Գտնել վարձատրվող պրակտիկա կամ աշակերտի աշխատանք:** | Կրթությանը վերաբերող հմտություն զարգացնել: Փորձ ձեռք բերել: Աշխատանք գտնելու հավանականությունը կմեծանա: | Կարող է դժվար լինել միաժամանակ աշխատելը, սովորելը և պրակտիկա անցնելը: |
| **Վարկ վերցնել բանկից կամ պետական գործակալությունից:** | Վարկային պատմություն ստեղծել բանկում: Պետական որոշ վարկեր ցածր տոկոսներ ունեն: | Տոկոսները կարող է բարձր լինեն: Վարկը պետք է անպայման վերադարձնել: |
| **ԴիմելԿրթության մշտական հիմնադրամի (ԿՄՀ) վարկի համար:** | Հասանելի է Եկեղեցու արժանավոր անդամներին: Տոկոսները ցածր են: Արդյունավետ աշխատանքի խրախուսանք կա, որպես վարկի վերադարձի օգնություն: | Սա վարկ է և պետք է անպայման վերադարձվի (որպեսզի ուրիշները ևս կարողանան օգտվել ծրագրից): |

**Քննարկեք.** Դուք գտե՞լ եք լավագույն կրթական արժեքը՝ հաշվի առնելով և՛ ծախսը, և՛ որակը:

Եթե դուք դիտում եք վարկ վերցնելու տարբերակը, դուք կարողանալո՞ւ եք ետ վճարել այն: Որպես ուղեցույց՝ կրթության ձեր ծրագրի ավարտից հետո, վարկի ձեր անձնական վճարումները չպետք է ձեր ամսական եկամտի 10 տոկոսից ավել լինեն:

Եթե ձեզ ավելի շատ տեղեկություն է հարկավոր ձեր կրթության ծախսերը վճարելու համար, ո՞վ կարող է պատասխանել ձեր հարցերին: Դուք կարո՞ղ եք քննարկել այն ձեր ընտանիքի հետ: Ուրիշ որտե՞ղ կարող եք գնալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

**Կիրառեք.** Հաջորդ շաբաթ դուք երեք րոպեի կամ ավելի կարճ ժամանակում կներկայացնեք ձեր ֆինանսական ծրագիրը: Ձեզ կարող է օգնել ստորև տրված օրինակը: Ձեզանից չի պահանջվի կիսվել անձնական տեղեկությամբ: Հաջորդ շաբաթվա ձեր ներկայացումից հետո մենք խմբով կհետազոտենք ֆինանսական տարբերակներից մեկը՝ Կրթության մշտական հիմնադրամի վարկի տարբերակը:

Շաբաթվա ընթացքում գտեք այս հարցերի պատասխանները և լրացրեք բաց վանդակները: Փորձեք ձեր ծրագիրը ներկայացնել ընտանիքի անդամներին կամ այլ ծանոթների:

### ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. Ես համեմատել եմ ____________________ (քանակը) ուսումնական հաստատությունների գները և արժեքը:
2. Ինձ համար երեք լավագույն հաստատություններն են.

   ___________________________, ___________________________, ___________________________:
3. Այս պահին, հավատացած եմ, որ __________ հաստատությունը լավագույնն է ինձ համար,

   քանի որ ____________________________________________________________________:
4. Ես իմ ընտանիքի հետ ուսումնասիրել եմ իմ եկամուտներն ու ծախսերը: Ես սովորել եմ հետևյալը.

   ____________________________________________________________________________:
5. Ես հաշվել եմ, թե արդյոք կարող եմ ինքնուրույն վճարել իմ կրթության համար և պարզել եմ, որ (կարող եմ կամ չեմ կարող):

   *(Եթե կարող եք ինքնուրույն վճարել, ապա անցեք 9-րդ կետին. եթե չեք կարող, շարունակեք 6-րդ կետից):*
6. Ես կարիք կունենամ գտնել լրացուցիչ ______________ (գումարի չափը) ուսման իմ առաջին տարվա համար, մեկ այլ աշխատանքի, կրթաթոշակի, ընտանիքի օգնության կամ վարկի միջոցով:
7. Առաջին տարուց հետո ինձ անհրաժեշտ կլինի մոտ __________ (գումարի չափ) ավելին,

   ուսման հաջորդ ______ տարիների համար:
8. Ես սկսել եմ հետազոտել իմ կրթության համար վճարելու հնարավոր այլ տարբերակներ:

   Այս պահին ես հակված եմ դեպի այս տարբերակը. ________________________________:
9. *(Եթե կցանկանաք կիսվել)* Ես աղոթել եմ իմ կրթության և ֆինանսական ծրագրի վերաբերյալ և

   ____________________________________________________________________________:
10. Ես կցանկանայի ձեր խորհուրդն ու օգնությունը: Ունե՞ք արդյոք որևէ առաջարկ ինձ համար: *Ստացած խորհուրդները գրի առեք այստեղ:*

    ____________________________________________________________________________

    ____________________________________________________________________________

    ____________________________________________________________________________

# ԽՈՐՀԵՔ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ, ՈՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱՄ:

**Ժամանակ**. Խորհել բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը կամ մտածեք մեկ այլ սուրբ գրության մասին: Լուռ խորհեք, թե ինչ է այն ձեզ ուսուցանում: Ստորև գրի առեք ձեր տպավորությունները:

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Քննարկեք**. Ո՞վ կցանկանա մտքերով կիսվել:

*«Ամեն հաղթանակ ու փառք ձեզ համար իրականացվում է ձեր ջանասիրության, հավատարմության և հավատքի աղոթքի միջոցով»:*

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 103.36**

# ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՐԵՔ

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱԼ:

**Ժամանակ**. Պարտավորություն վերցրեք բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ

**Կիրառեք**. Ընտրեք աշխատանքային մի ընկեր: Որոշեք, թե երբ և ինչպես եք կապ հաստատելու միմյանց հետ:

*Աշխատանքային ընկերոջ անունը*

*Կապ հաստատելու տվյալներ*

## Բարձրաձայն կարդացեք պարտավորության յուրաքանչյուր քայլը ձեր աշխատանքային ընկերոջը: Խոստացեք պահել ձեր պարտավորությունները: Ստորագրեք պարտավորությունը ստանձնելու համար:

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ես կաշխատեմ իմ ընտանիքի հետ, որպեսզի ճշգրիտ գրանցեմ իմ եկամուտը և ապրելու ծախսերը:**

**Ես կգրանցեմ իմ կրթության ծախսերը և կտեղեկանամ կրթաթոշակների, դրամաշնորհների, վարկերի և ֆինանսական այլ աղբյուրների վերաբերյալ:**

**Ես կպատրաստեմ ֆինանսական իմ ծրագիրը և կներկայացնեմ այն:**

Ես կկիրառեմ *Իմ հիմքը* գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ այն իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողությունները՝ նույնիսկ եթե մեկ դրամ լինի:

Ես կզեկուցեմ աշխատանքային իմ ընկերոջը:

*Իմ ստորագրությունը*

*Աշխատանքային ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

**Կիրառեք**. Նախքան հաջորդ հանդիպումը, օգտագործեք պարտավորությունների այս աղյուսակը՝ ձեր առաջընթացը գրանցելու համար: Ստորև տրված վանդակներում գրեք «այո» կամ «ոչ» կամ թե քանի անգամ եք պահել ձեր պարտավորությունը:

| *Աշխատել եմ ընտանիքի հետ, որպեսզի գրանցեմ իմ եկամուտն ու ծախսերը (այո/ոչ)* | *Գրանցել եմ կրթության ծախսերը. ուսումնասիրել եմ ֆինանսական աղբյուրները (այո/ոչ)* | *Պատրաստ եմ ներկայացնելու իմ ֆինանսական ծրագիրը (այո/ոչ)* | *Կիրառել եմ **Հիմքը** ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

**Կարդացեք**. Հիշեք նաև գրանցել ձեր անձնական ծախսերը *Ինքնապահովման իմ ուղին* ձեր գրքույկի ետևում:

Ընտրեք մեկին վարել հաջորդ հանդիպման *Իմ հիմքը* գրքույկի թեմաներից մեկի քննարկումը: (Չգիտե՞ք ինչպես թեմայի քննարկում վարել *Իմ հիմքը* գրքույկից: Կարդացեք 17 էջը և կազմի դարձերեսը):

Խնդրեք ինչ-որ մեկի ասել փակման աղոթքը:

***Դիտողությունները խրախուսվում են***

*Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները srsfeedback@ldschurch.org E-փոստի հասցեին:*

***Նշում դասվարի համար.***

*Նախքան հաջորդ հանդիպումը նախապատրաստեք հրահանգներ ձեր երկրում ԿՄՀ վարկի մարումները կատարելու վերաբերյալ: Հաջորդ հանդիպմանը խմբի յուրաքանչյուր անդամի համար օրինակներ պատրաստեք:*

# Օժանդակ նյութեր

## ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄԸ

Նշանակեք դերեր և բեմականացրեք հետևյալ սցենարը.

***ՄԻՔԱԼԱ.*** *Զա՜և: Այս շաբաթ մի քանի հաստատությունների մասին շատ բաներ եմ խմացել:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Պետք է իրեն տեսնեիք: Նա անմիջապես գնաց ու խոսեց բոլոր այդ մարդկանց հետ: Ես չէի հասցնում նրա ետևից:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Դու վերջնական ընտրություն կատարե՞լ ես:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Դեռ ոչ, բայց ցուցակս հասցրել եմ երկուսի:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Իսկ ես կանգնել եմ երեք լավ տարբերակի վրա:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Լավ գործ եք անում, երեխեք: Իմ կարծիքով ես առաջ չեմ գնում:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Ի՞նչ ի նկատի ունես:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Ցավո՜ք, ես դեռ շփոթված եմ: Կամ գուցե պարզապես վախենում եմ: Մեր ընտանիքում ոչ ոք դպրոցից բացի ուրիշ կրթություն չի ստացել: Ես խոսել եմ հինգ տարբեր հաստատությունների հետ և դա ճնշող էր: Պահանջները շատ խճճված են թվում, իսկ ծախսերը՝ ես երբեք այդքան գումար չեմ գտնի:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Իսկ միսիայի սկզբում նման զգացմունքներ չե՞ս ունեցել:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Դե՜հ, այո, այդ մասին չէի մտածել: Ունեցել եմ:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Բայց դու հաջողակ միսիոներ ես եղել:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Ժամանակ պահանջվեց, բայց ես շատ օրհնվեցի: Եվ ես աճեցի հաջողության համար:*

***ՄԻՔԱԼԱ.*** *Ես էլ եմ մի փոքր վախեցած: Ֆինանսավորումը անհնարին է թվում: Բայց ես խոսեցի իմ ծխի մի քրոջ հետ, ով ամեն ինչ արել էր, ինչ կարող էր, իսկ հետո վարկ էր վերցրել ու վճարել էր մնացած մասը: Նա օգտվել էր ԿՄՀ վարկից: Գուցե, եթե միմյանց օգնենք, ապա մանրամասները կլուծվեն:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Իսկ իմ ծխում մի եղբայր կա, որ վճարել էր առաջին տարվա համար, իսկ երկրորդ տարին, լավ սովորելով, անվճար բաժին էր անցել:*

***ՔՈՆՍՈՒԵԼՈ.*** *Ամուսինս և ես մտածում ենք, թե ուրիշ ինչի վրա կարող ենք մի քիչ տնտեսել, և ես քեռի ունեմ, որ հնարավոր է օգնի ինձ:*

***ՔՈՒԱՄԻ.*** *Ավա՜ղ, ես հարուստ քեռի չունեմ: Բայց մենք այսքան քայլ ենք արել, և ես չեմ դադարի երազել: Պետք է որ դու ճիշտ լինես, Միքալա: Ես կաշխատեմ ևս մի երկու շաբաթ, եթե դուք շարունակեք ինձ քաջալերել:*

Վերադարձեք 45-րդ էջը




# 4

# Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Կրթության մշտական հիմնադրամից:

## Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի

# ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Հանդիպման օրը.**

- Հաղորդագրություն ուղարկեք կամ զանգահարեք խմբի անդամներին: Հրավիրեք նրանց ժամանել 10 րոպե առաջ՝ զեկուցելու իրենց պարտավորությունները կատարելու վերաբերյալ:
- Նախապատրաստեք հանդիպման նյութերը:
- ՆՈ՛Ր Ցցի ձեր ինքնապահովման կենտրոնից վերցրեք ԿՄՀ տեղական գրքույկի մեկական օրինակ խմբի յուրաքանչյուր անդամի համար: Բերեք դրանք այսօրվա հանդիպմանը:
- ՆՈ՛Ր Բերեք ԿՄՀ վարկի մարման վերաբերյալ հրահանգները ձեր երկրի համար (դրանք հասանելի են ցցի ինքնապահովման ձեր կենտրոնում կամ առցանց՝ srs.lds.org/pef): Մեկական օրինակ պատրաստեք խմբի յուրաքանչյուր անդամի համար:

**Հանդիպումից 30 րոպե առաջ.**

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջ, որպեսզի բոլորը մոտ լինեն միմյանց:
- Գրատախտակին գծեք պարտավորությունների հետևյալ գծապատկերը:

| Խմբի անդամի անունը | Աշխատել եմ ընտանիքի հետ, որպեսզի գրանցեմ իմ եկամուտն ու ծախսերը (այո/ոչ) | Գրանցել եմ կրթության ծախսերը. ուսումնասիրել եմ ֆինանսական աղբյուրները (այո/ոչ) | Պատրաստ եմ ներկայացնելու իմ ֆինանսական ծրագիրը (այո/ոչ) | Կիրառել եմ Հիմքը ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ) | Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ) | Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ) |
|---|---|---|---|---|---|---|
| Գլորիա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա |
| | | | | | | |
| | | | | | | |

**Հանդիպումից 10 րոպե առաջ.**

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ ժամանում են:
- Խմբի անդամները ժամանելիս խնդրեք նրանց լրացնել պարտավորությունների աղյուսակը գրատախտակին:
- Խմբից մեկին նշանակեք հետևել ժամանակին:

**Դասի սկզբին.**

- Խնդրեք բոլորին անջատել իրենց հեռախոսները և այլ սարքերը:
- Սկսեք բացման աղոթքով (և օրհներգով, եթե ցանկանում եք):
- Ուշացողներին հանգիստ խնդրեք անջատել իրենց հեռախոսները եւ լրացնել պարտավորության աղյուսակը, մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- *Իմ հիմքը* գրքույկի սկզբունքի համար սահմանեք 20 րոպե ժամանակ:
- Ավարտեք 4-րդ սկզբունքը *Իմ հիմքը* գրքույկի: Ապա վերադարձեք այս աշխատանքային ձեռնարկին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵՍ ՊԱՀԵ՞Լ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**Ժամանակ**. Սահմանեք 10 րոպե ժամանակ միայն այս էջի համար (ոչ ամբողջ Հաշվետվություն բաժնի համար):

**Կիրառեք**. Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների վերաբերյալ: Իրենց բոլոր պարտավորությունները կատարողներին խնդրում ենք ոտքի կանգնել: (Ծափահարություն):

**Կարդացեք**. Այժմ խնդրում ենք բոլորը ոտքի կանգնեն: Մենք պետք է աշխատենք կատարել մեր բոլոր պարտավորությունները: Դա ինքնապահով մարդկանց գլխավոր սովորություններից մեկն է: Եկեք միասին կրկնենք մեր թեմատիկ կարգախոսները:

> **«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**
>
> *Վարդապետություն և Ուխտեր 104.15*
>
> **Հավատքով առ Տերը մենք միասին աշխատում ենք ինքնապահով դառնալ:**

**Կարդացեք**. Եկեք նստենք:

**Քննարկեք**. Ի՞նչ եք դուք սովորել այս շաբաթվա ձեր պարտավորությունները կատարելիս: Այս խումբը կարո՞ղ է ձեզ օգնել առաջադիմել:

## Ի՞ՆՉ ՍՈՎՈՐԵՑԻ ԵՍ ԻՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ:

**Ժամանակ.** Այս էջի համար առանձին սահմանեք 40 րոպե ժամանակ:

**Կիրառեք.** Խմբի յուրաքանչյուր անդամ այժմ երեքից քիչ րոպեում խմբին կներկայացնի իր ֆինանսական ծրագիրը:

Ձեր ներկայացումն ավարտելուց հետո հարցրեք, թե խումբը ինչ դիտողություններ ունի: Ձեզ մոտ գրի առեք դիտողությունները: Ձեր նշումների համար օգտագործեք ազատ տողերը ստորև:

Դիտողությունները թող հակիրճ լինեն, որ նախատեսված ժամանակում բոլորը հնարավորություն ունենան զեկուցելու:

**Քննարկեք.** Ի՞նչ գաղափարներ առաջացան զեկույցների ընթացքում, որոնք կօգնեն ձեզ ձեր որոշումներում: Գրի առեք ձեր մտքերը:

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

1. Ես համեմատել եմ ______________ (քանակը) ուսումնական հաստատությունների գները և արժեքը:
2. Ինձ համար երեք լավագույն հաստատություններն են.

   ______________________, ______________________, ______________________:
3. Այս պահին, հավատացած եմ, որ ______________ հաստատությունը լավագույնն է ինձ համար, քանի որ ______________________________________________:
4. Ես իմ ընտանիքի հետ ուսումնասիրել եմ իմ եկամուտներն ու ծախսերը: Ես սովորել եմ հետևյալը.

   ______________________________________________________________:
5. Ես հաշվել եմ, թե արդյոք կարող եմ ինքնուրույն վճարել իմ կրթության համար և պարզել եմ, որ (կարող եմ կամ չեմ կարող):

   *(Եթե կարող եք ինքնուրույն վճարել, ապա անցեք 9-րդ կետին. եթե չեք կարող, շարունակեք 6-րդ կետից):*
6. Ես կարիք կունենամ գտնել լրացուցիչ ______________ (գումարի չափը) ուսման իմ առաջին տարվա համար, մեկ այլ աշխատանքի, կրթաթոշակի, ընտանիքի օգնության կամ վարկի միջոցով:
7. Առաջին տարուց հետո ինձ անհրաժեշտ կլինի մոտ __________ (գումարի չափ) ավելին, ուսման հաջորդ ______ տարիների համար:
8. Ես սկսել եմ հետազոտել իմ կրթության համար վճարելու հնարավոր այլ տարբերակներ: Այս պահին ես հակված եմ դեպի այս տարբերակը. __________________:
9. *(Եթե կցանկանաք կիսվել)* Ես աղոթել եմ իմ կրթության և ֆինանսական ծրագրի վերաբերյալ և

   ______________________________________________________________:
10. Ես կցանկանայի ձեր խորհուրդն ու օգնությունը: Ունե՞ք արդյոք որևէ առաջարկ ինձ համար: *Ստացած խորհուրդները գրի առեք այստեղ:*

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

# ՍՈՎՈՐԵՔ

## ԱՆՀՐԱԺԵ՞ՇՏ Է, ՈՐ ԵՍ ՎԱՐԿ ՎԵՐՑՆԵՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ:

**Ժամանակ.** Սովորել բաժնի համար սահմանեք 30 րոպե ժամանակ

**Կարդացեք.** Մենք մտածել ենք մեր կրթության համար վճարելու ուղիների մասին: Տարբերակներից մեկը Կրթության մշտական հիմնադրամի (ԿՄՀ) վարկի համար դիմելն է:

| Շաբաթ 1 | Շաբաթ 2 | Շաբաթ 3 | ՇԱԲԱԹ 4 | Շաբաթ 5 | Շաբաթ 6 |
|---|---|---|---|---|---|
| Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ: | Ի՞նչ կրթություն կորակավորի ինձ իմ աշխատանքի համար: | Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար: | Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Կրթության մշտական հիմնադրամից: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանից դուրս: |

**Կարդացեք.** Այս շաբաթ մենք կգտնենք հետևյալ հարցի պատասխանները և կկատարենք հետևյալ գործողությունը.

**Կարդացեք.** **ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑԸ – Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Կրթության մշտական հիմնադրամից:**

**ՇԱԲԱԹՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ – Որոշել իմ ընտանիքի օգնությամբ, թե արդյոք ես դիմելու եմ ԿՄՀ վարկի համար, թե ոչ: Եթե ԿՄՀ վարկը ճիշտ որոշում է ինձ համար, ես կլրացնեմ վարկի դիմումը:**

## Ի՞ՆՉ Է ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐԿԸ:

**Դիտեք.** «Ի՞նչ է ԿՄՀ վարկը» (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 68 էջում):

**Քննարկեք.** Ի՞նչ մտքեր կամ զգացումներ ունեցաք տեսանյութի բովանդակությունից:

**Կիրառեք.** Կազմեք երկու կամ երեք հոգուց բաղկացած թիմեր: Հերթով կարդացեք Գորդոն Բ. Հինքլիի կատարած հետևյալ հայտարարությունները նրանց մասին, ովքեր ԿՄՀ վարկ են ստանում:



«[Նրանք] պահանջարկ ունեցող հմտություններ կսովորեն: . . . Աշխատանքի լավ հմտությունների շնորհիվ երիտասարդ այս տղաներն ու աղջիկները. . . կհաղթահարեն աղքատությունը: . . . Կրթությունը հնարավորությունների բանալին է» («The Perpetual Education Fund», *Ensign,* May 2001, 52–53):

«Նրանք այս աշխատանքի ղեկավարներ կդառնան իրենց հայրենի երկրում: Նրանք տասանորդ և նվիրատվություններ կվճարեն, որը հնարավոր կդարձնի, որ այս աշխատանքը տարածվի աշխարհով մեկ» («Reaching Down to Lift Another», *Ensign,* Nov. 2001, 53–54):

«Նրանք կամուսնանան և կյանքում առաջ կգնան, ունենալով ունակություններ, որոնք թույլ կտան լավ վաստակել և իրենց տեղը զբաղեցնել հասարակության մեջ, որտեղ նրանք կկարողանան էական ներդրում կատարել» («The Church Goes Forward», *Ensign,* May 2002, 6–7):

«Նրանք կվերադարձնեն գումարը և երբ նրանք այդ անեն, նրանք ազատության հրաշալի զգացում կվայելեն, որովհետև բարելավել են իրենց կյանքը: . . . Անկախության ոգով նրանք կարող են իրենց գլուխը բարձր պահել» («The Perpetual Education Fund», *Ensign,* May 2001, 53):

**Քննարկեք.** Նշված խոստումներից որո՞նք են կարևոր ձեզ համար: Ինչպե՞ս կփոխվեր կյանքը ձեր և ձեր ընտանիքի համար, եթե այս խոստումները իրականանային:

## Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԿՄՀ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼ:

**Կարդացեք**. Նախկինում ԿՄՀ վարկերը հասանելի էին միայն 18–30 տարեկան վերադարձած միսիոներների համար: Այժմ դրանք հասանելի են 18-ից բարձր Եկեղեցու բոլոր անդամներին: Եկեք ծանոթանանք պահանջներին: (Անսովոր կարիքների դեպքում քահանայության ղեկավարները կարող են հաստատել բացառություններ հիմնական պահանջներից):

**Կիրառեք**. Ձեր աթոռը շրջեք դեպի խմբի մեկ այլ անդամը: Միասին կարդացեք ներքևի վանդակի ձախ կողմի պահանջները: Ապա գծով միացրեք աջ կողմում գրված խոսքերին, որոնք լրացնում են նախադասության միտքը: Մեկ օրինակ ցուցադրված է:

### ՊԱՀԱՆՋՆԵՐ ԿՄՀ ՎԱՐԿԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՄԱՐ

| | |
|---|---|
| Եկեղեցու ակտիվ անդամ, ով ծառայում է եկեղեցական ______________________: | ինստիտուտ |
| Քահանայության ղեկավարների կողմից երաշխավորվել է որպես ______________ արժանավոր, ֆինանսական օժանդակության կարիք ունեցող և իր նպատակներին հասնելու համար նվիրված անդամ: | 18 և ավելի բարձր տարիքի |
| Տարիքը ____________________________________: | կոչում |
| Սովորում է ուսումնական ծրագրում կամ հաստատությունում, որը ____________: | Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի |
| Նախապատրաստված է մասնակցելով __________________ խմբում և ավարտել է ԿՄՀ վարկային ծրագիրը: | տաճար |
| Բնակվում է, աշխատում և կրթություն է ստանում այն տարածքում, որտեղ ______________________________________________: | նախընտրելի ուսումնական հաստատությունների և ծրագրերի ցանկում է: |
| Պատասխանատու և ազնիվ է ինքնապահովման հարցում, ____________________: | խորհրդատուի հետ |
| Համագործակցում է ____________________________, ով մասնակիցներին օգնում է հաջողության հասնել ուսման մեջ, աշխատանքում և վարկը վճարելիս: | ԿՄՀ վարկերը հաստատված են |
| Հաճախում է ______________________________________, եթե երիտասարդ ամուրի է: | որ ամբողջովին ետ վճարի վարկը |

Պահանջները հասկանալու համար կարդացեք 69 էջը:

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՈՐԾՈՒՄ ԿՄՀ ՎԱՐԿԸ:

**Նշում դասվարի համար.** Մասնակիցներին տվեք ԿՄՀ ուղեցույցների տեղական գրքույկը, որ նախատեսված է ձեր տարածքի համար:

**Քննարկեք.** Համառոտ կարդացեք ԿՄՀ տեղական գրքույկը, որտեղ ԿՄՀ վարկի վերաբերյալ ուղեցույցներ կան ձեր տարածքի համար: Ի՞նչ եք սովորում:

**Կարդացեք.** Երբ մեզ լավ ենք դրսևորում, հնարավոր է զեղչերի հնարավորություն ունենանք վարկի մարման համար: Վարկի վճարման ենթակա ընդհանուր գումարը կարող է նվազել, եթե մենք (1) լավ գնահատականներ ունենք, (2) ավարտում ենք ուսումը, (3) իրականացնում ենք աշխատանքի մեր նպատակները և (4) վարկի վճարումները ժամանակին ենք կատարում: Երբ կատարում ենք այս քայլերը, մենք հաշվենիշ ենք վաստակում արդյունավետ աշխատանքի համար և մեր պարտքի գումարը նվազում է:

ԿՄՀ վարկերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար՝ տես 70 էջը: Տանը ևս մեկ անգամ մանրակրկիտ կարդացեք այս տեղեկությունը: Հարցերի դեպքում դուք կարող եք կապ հաստատել նաև ձեր ինքնապահովման կենտրոնի հետ:

**Քննարկեք.** Դուք ունե՞ք այլ պատասխաններ, որին խումբը կարող է պատասխանել:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ:

**Կարդացեք.** ԿՄՀ վարկի համար դիմելու քայլերը հետևյալն են. Միացեք մի գործընկերոջ հետ և տեղեկացեք, թե ինչ պետք է անեք յուրաքանչյուր քայլի համար: Բացեք թվարկված քայլերի յուրաքանչյուր էջը և հերթով կարդացեք (բայց մի լրացրեք այդ էջերի տեղեկությունները): Այնուհետև վերադարձեք այս էջը և ստուգման նշան դրեք տվյալ քայլի վանդակում:

- ☐ 1. Ընտրեք մի աշխատանք, ուսումնական ծրագիր կամ հաստատություն ԻԾ նախընտրությունների ցանկից (տես 11, 14, 33, 34 էջերը):
- ☐ 2. Լրացրեք կրթության ֆինանսական ծրագիր (տես 50 էջը):
- ☐ 3. Ընտրեք ԿՄՀ վարկային խորհրդատու (տես 71–72 էջերը):
- ☐ 4. Լրացրեք ԿՄՀ վարկային ծրագրի թերթիկը (տես 73–74 էջերը):
- ☐ 5. Ստացեք քահանայության ղեկավարի երաշխավորությունը (տես 73–74 էջերը):
- ☐ 6. Լրացրեք ԿՄՀ վարկային դիմումի առցանց օրինակը հետևյալ կայքում. srs.lds.org/pef (տես 77 էջը):

**Քննարկեք.** Դուք ունե՞ք տեղեկություն բոլոր քայլերը լրացնելու համար: Եթե ոչ, ապա ինչպես կարող եք ձեռք բերել այն:

## Ի՞ՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ԴԻՄՈՒՄԸ ԼՐԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ։

**Կարդացեք**. Ահա թե ինչ է տեղի ունենում դիմումը լրացնելուց հետո։

1. Դուք լրացնում եք դիմումը
2. ԿՄՀ անձնակազմը և ղեկավարները ստուգում են դիմումը
3. Եթե վարկը հաստատվում է, դուք ստանում եք վարկի համաձայնագիրը ԿՄՀ կայքում
4. ԿՄՀ մասնագետը հեռախոսով հարցազրույց է անցկացնում ձեզ հետ և ձեր խորհրդատուի հետ
5. Դուք գրանցվում եք ուսումնական հաստատությունում և հաստատությանը վճարելու հայց եք ներկայացնում

**Քննարկեք**. Լրացուցիչ հարցեր կա՞ն։ Եթե դուք չգիտեք պատասխանները, ապա այցելեք մոտակա ինքնապահովման կենտրոն։

Հանդիպումից հետո, եթե ձեր դասավարը համացանցի կապ ունի, նա կարող է բացել ԿՄՀ վարկային դիմումի կայքը և ցույց տալ՝ ինչպես օգտագործել այն։

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԿԱՏԱՐՈՒՄ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ։

**Կարդացեք**. ԿՄՀ վարկը դրամաշնորհ չէ և մեզանից պահանջվում է այն ետ վճարել։ Մենք ետ վճարելու պարտավորություն ենք ստանձնում։ Մենք ստանձնում ենք այդ պարտավորվածությունը քահանայության մեր ղեկավարի հետ ԿՄՀ վարկային երաշխավորության հարցազրույցի ժամանակ և վարկի դիմումը առցանց լրացնելիս։

ԿՄՀ վարկային մարումները հնարավորություն են տալիս, որ ուրիշները ևս ԿՄՀ վարկ ստանան ապագայում, այդ թվում ձեր ցցի կամ շրջանի մյուս անդամները։ Եթե մենք չվճարենք, ապա ԿՄՀ վարկի գումարները ապագայի համար կքչանան։

Կարդացեք աջ լուսանցքի մեջբերումը։

**Քննարկեք**. Ինչո՞ւ է կարևոր ԿՄՀ վարկը վերադարձնել։ Մտածեք հետևյալ պատճառների մասին.

- Պատվենք պարտավորությունները և բարձրացնենք ուխտերը պահելու կարողությունը։
- Հնարավորություն ապահովել, որ ուրիշները ևս վարկ ստանան։
- Ստանաք ձեզ և ձեր ընտանիքին խոստացված օրհնությունները։
- Մեծացնենք Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատքը և դառնաք ինքնապահով։

**Կարդացեք**. Որպեսզի համոզվենք, որ մենք գիտենք, թե ինչպես կարելի է կատարել վարկային մարումները, մենք պետք է կատարենք մեր առաջին վարկային վճարումը նախքան մեր ուսումնական հաստատության գումար ստանալը։

**Նշում դասավարի համար.** Բաժանեք վճարման մասին տեղեկությունները ձեր երկրի համար։

Միասին, համառոտ վերանայեք ձեր երկրի համար նախատեսված վճարման հրահանգները։

*«Շահառուները կվերադարձնեն գումարը և երբ նրանք այդ անեն, նրանք ազատության հրաշալի զգացում կվայելեն, որովհետև բարելավել են իրենց կյանքը ոչ թե դրամաշնորհի կամ դրամական նվերի շնորհիվ, այլ պարտք վերցնելու և վերադարձնելու միջոցով։ Անկախության ոգով նրանք կարող են իրենց գլուխը բարձր պահել։ Իրենց կյանքի ընթացքում հավատարիմ ու ակտիվ մնալու հավանականությունը շատ բարձր կլինի»։*

**GORDON B. HINCKLEY, «The Perpetual Education Fund», *Ensign*, May 2001, 53**

## Ի՞ՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԿՄՀ ՎԱՐԿԻ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

**Դիտեք**. «Ես երկու ձեռք ունեմ աշխատելու համար» (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 78 էջում):

**Քննարկեք**. Մեկ խոսքով նկարագրեք, թե ինչ զգացիք տեսանյութի բովանդակությունից: Կիսվեք ձեր խոսքով:

Ձեր ունեցած ներկայիս գիտելիքներով դուք ընտրո՞ւմ եք դիմել ԿՄՀ վարկի համար: Ի՞նչ կարող եք անել շաբաթվա ընթացքում, որպեսզի լավ որոշում կայացնեք այս տարբերակի վերաբերյալ:

**Կարդացեք**. Երբ առաջ ենք գնում, մենք միայնակ չենք: Եկեք հիշենք. «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպպեցիս 4.13):

# ԽՈՐՀԵՔ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ, ՈՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱՄ:

**Ժամանակ**. Խորհել բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը կամ մտածեք մեկ այլ սուրբ գրության մասին: Լուռ խորհեք, թե ինչ է այն ձեզ ուսուցանում: Ստորև գրի առեք ձեր տպավորությունները:

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Քննարկեք**. Ո՞վ կցանկանա մտքերով կիսվել:

*«Օ՜հ, ուրեմն, մի արհամարհեք և մի զարմացեք, այլ ականջ արեք Տիրոջ խոսքե-րին, և խնդրեք Հորը, Հիսուսի անունով, ինչ բաների կարիք որ դուք կունենաք: Մի կասկածեք, այլ եղեք հավատացող»:*

**ՄՈՐՄՈՆ** 9.27

# ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՐԵՔ

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱԼ:

**Ժամանակ**. Պարտավորություն վերցրեք բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ

**Կիրառեք**. Ընտրեք ձեր աշխատանքային ընկերոջը: Որոշեք, թե երբ և ինչպես եք կապ հաստատելու միմյանց հետ:

*Աշխատանքային ընկերոջ անունը*

*Կապ հաստատելու տվյալներ*

**Կարդացեք պարտավորության յուրաքանչյուր քայլը ձեր աշխատանքային ընկերոջը: Խոստացեք պահել ձեր պարտավորությունները: Ստորագրեք պարտավորությունը ստանձնելու համար:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ես կքննարկեմ իմ աշխատանքային, կրթական և ֆինանսական ծրագրերը իմ ընտանիքի անդամների հետ:**

**Իմ ընտանիքի հետ խորհրդակցելով, ես որոշում կկայացնեմ, թե արդյոք կարիք ունեմ օգտվելու ԿՄՀ վարկից:**

**Ես կգտնեմ վարկային խորհրդատու, կխոսեմ քահանայության իմ ղեկավարի հետ և կսկսեմ դիմելու գործընթացը:**

Ես կկիրառեմ *Իմ հիմքը* գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ այն իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողությունները՝ նույնիսկ եթե մեկ դրամ լինի:

Ես կզեկուցեմ աշխատանքային իմ ընկերոջը:

*Իմ ստորագրությունը*

*Աշխատանքային ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

**Կիրառեք**. Նախքան հաջորդ հանդիպումը, օգտագործեք պարտավորությունների այս աղյուսակը՝ ձեր առաջընթացը գրանցելու համար: Ստորև տրված վանդակներում գրեք «այո» կամ «ոչ» կամ թե քանի անգամ եք պահել ձեր պարտավորությունը:

| *Ես քննարկել եմ իմ աշխատանքային, կրթական և ֆինանսական ծրագրերը իմ ընտանիքի անդամների հետ (այո/ոչ)* | *Ես որոշում եմ կայացրել, թե արդյոք կարիք ունեմ օգտվելու ԿՄՀ վարկից (այո/ոչ)* | *ԿՄՀ վարկից օգտվելու դեպքում, ես սկսել եմ դիմելու գործընթացը (այո/ոչ)* | *Կիրառել եմ **Հիմքը** ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

**Կարդացեք**. Հիշեք նաև գրանցել ձեր անձնական ծախսերը *Ինքնապահովման իմ ուղին* ձեր գրքույկի ետնում:

Ընտրեք մեկին վարել հաջորդ հանդիպման *Իմ հիմքը* գրքույկի թեմաներից մեկի քննարկումը: (Չգիտե՞ք ինչպես թեմայի քննարկում վարել *Իմ հիմքը* գրքույկից: Կարդացեք 17 էջը և կազմի դարձերեսը):

Խնդրեք ինչ-որ մեկի ասել փակման աղոթքը:

***Դիտողությունները խրախուսվում են***

*Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները srsfeedback@ldschurch.org էլ-փոստի հասցեին:*

# Օժանդակ նյութեր

## Ի՞ՆՉ Է ԿՄՀ ՎԱՐԿԸ:

Նշանակեք դերեր և բեմականացրեք հետևյալ սցենարը.

***ԲՐԱԶԻԼԱՑԻ ԵՂԲԱՅՐ.*** *Երբ միսիայից տուն վերադարձա, ես շատ էի ուզում կրթություն ստանալ: Տարեցտարի ես փորձում էի ու փորձում, սակայն չէի կարողանում ընդունվել սովորելու: Ես մտածում էի, թե դասընթացները կէժանանան, բայց երբեք չէին էժանանում: Նրանք միշտ ավելի շատ էին թանկանում, միշտ ավելի ու ավելի դժվարանում:*

***ՀԱՅԻԹԻԱՑԻ ՔՈՒՅՐ.*** *Հայիթիում առանց կրթության հնարավոր չէ: Առանց կրթության չես կարող ապրել:*

***ԱՐԳԵՆՏԻՆԱՑԻ ԵՂԲԱՅՐ.*** *Ես Եկեղեցու մյուս երիտասարդների նման միևնույն երազանքներն ունեմ՝ ընտանիք ստեղծել և ծառայել Եկեղեցում: Եվ որպեսզի այդ բաները լավ անեմ, ես պետք է լավ աշխատանք ունենամ:*

***ՆԱԽԱԳԱՀ ՀԻՆՔԼԻ.*** *Այս իրավիճակը ուղղելու համար մենք առաջարկում ենք մի ծրագիր՝ ծրագիր, որը համոզված ենք ոգեշնչված է Տիրոջ կողմից: . . . Մենք կանվանենք այն Կրթության մշտական հիմնադրամ:*

***ՎԱՆԴԵՐԼԵՅ.*** *Երբ միսիայից վերադարձա, ես սովորելու հնարավորություն չունեի: Ապա մի անսպասելի թնդյո՛ւն: Կրթության մշտական հիմնադրամը եկավ, և ես շատ երջանիկ էի: Ես գնացի սովորելու, ընդունվեցի և վճարեցի դասընթացի համար: Ես իմ լավագույնը ներդրեցի և հաջողության հասա: Ես դասարանի առաջին ուսանողն էի: Նախքան սովորելը ես բանվոր էի աշխատում: Ես կատարում էի ուրիշների հրահանգները: Երբ ուսումս ավարտեցի, ես ընդունվեցի 450 մարդու կառավարիչ և այսօր ես ավելի շատ աշխատավարձ եմ ստանում: Իմ կինն այլևս աշխատելու կարիք չունի: Նա հոգում է մեր երեխաների մասին, որն ամենակարևոր բանն է մեզ համար: Եվ ես ի վիճակի եմ սիրով ծառայելու Եկեղեցում: Ես կարողանում եմ նվիրված ծառայություն կատարել: Սա իրապես փոխել է իմ կյանքը և իմ ընտանիքի կյանքը:*

***ՆԱԴԻՆ.*** *Ես պետք է ամեն ինչ անեմ, որ վերադարձնեմ իմ վարկը, որովհետև գիտեմ, որ այն օգնելու է ուրիշներին կրթություն ձեռք բերել: Պետք է ազնիվ լինես, եթե ցանկանում ես այս ծրագրի մասը լինել:*

***ԿԱՐԼՈՍ.*** *Իմ հայրապետական օրհնության մեջ նշվում էր, որ ես ունենալու եմ այս հնարավորությունը և այն իրականացավ: Մեզ համար Կրթության մշտական հիմնադրամը ժամանակավոր մի բան չէ: Մեզ համար այն մարգարեություն է: Այն սրբազան է:*

***ՔԵՎԻՆ.*** *Ես այնպիսի զգացում ունեի, որ մարգարեն նայում է ինձ, որ նա տեսնել է, թե ինչ իրավիճակում եմ ես: Եվ ես զգացի, որ նա ասում է. «Ես պետք է օգնեմ քեզ»:*

***ՆԱԽԱԳԱՀ ՀԻՆՔԼԻ.*** *Ուղին մեր առջև պարզ է, կարիքը մեծ, և Տերը ցույց է տվել ճանապարհը: Այն կդառնա օրհնություն բոլորի համար, ում կյանքին այն դիպչի՝ երիտասարդ տղաների ու աղջիկների, նրանց ապագա ընտանիքների, ինչպես նաև եկեղեցու համար: Մենք խոնարհաբար ու երախտագիտությամբ աղոթում ենք, որ Աստված հաջողություն տա այս ջանքերին:*

Վերադարձեք 60-րդ էջը

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՄՀ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ:

- Մասնակցեք կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի խմբի հանդիպումներին. լրացրեք ԿՄՀ վարկային ծրագրի թերթիկը:
- Ընտրեք մի աշխատանք, ուսումնական ծրագիր կամ հաստատություն ԻԾ նախընտրությունների ցանկից. բացառությունների համար պետք է պահանջ ներկայացնել:
- Ընտրիր վարկային խորհրդատու, որը կօգնի ուսման, աշխատանքի և վարկը վճարելու պարտավորությունները կատարելիս:
- Հաճախիր ինստիտուտի դասերին (եթե չափահաս երիտասարդ ես):
- Դարձիր 18 տարեկանից բարձր:
- Տաճարին արժանի եղիր ու ծառայիր կոչման մեջ:
- Ստացիր քահանայության ղեկավարի երաշխավորությունը:

Վերադարձեք 61-րդ էջը

## ԻՆՉՊԵ՞Ս Է ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԿՄՀ ՎԱՐԿԸ: ԻՆՉՊԵ՞Ս Է ՎԱՐԿԸ ՄԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ:

ԿՄՀ վարկը կարող է օգտագործվել վճարելու.

- Տեղական կենսունակ աշխատանքի կամ ձեռներեցության նախապատրաստող կրթության կամ վերապատրաստման համար:
- Ուսման վարձի, գրքերի և ուսման որոշ պարագաների համար (ուսման վարձը վճարվում է ուսումնական հաստատությանը):

Վարկը մարելու ուղեցույցները հետևյալն են.

- Յուրաքանչյուր երկրի համար առկա է մարումների չափի և այլ տեսակի հրահանգներ:
- Մարումը կատարվում է արդյունավետության խրախուսման և կանխիկ վճարումների համադրությամբ:
    - **Արդյունավետության խրախուսումը** կնվազեցնի վարկի հաշվեկշիռը հետևյալ ձևով.
        - 5% նվազեցում ամենամյա վարկի տրամադրման համար յուրաքանչյուր տարվա լավ գնահատականների համար (լավ գնահատականների սահմանման համար՝ տես ԿՄՀ գրքույկը)
        - 10% նվազեցում կրթական ծրագիրը ամբողջությամբ ավարտելու համար
        - 10% նվազեցում ծրագրի նպատակները իրականացնելու համար (աշխատանքի և եկամտի չափի համար)
        - Հարաբերակցման խրախուսանքի 25% նվազեցում ժամանակին կատարած բոլոր վճարումների համար
        - Լրացուցիչ 10% նվազեցում վարկի մնացորդի նկատմամբ՝ վարկի տարեկան միանվագ վճարման դեպքում
    - **Ուսման ընթացքում վարկի ամսական վճարումներ**
        - Հաստատությանը վճարելուց առաջ կատարվող առաջին վճարում
        - Ուսման ընթացքում փոքր ամսական վճարներ ցածր գնով կարճ ծրագրերի համար
        - Ուսման ընթացքում մեծ ամսական վճարներ ավելի բարձր գնով ավելի երկար ծրագրերի համար
    - **Վարկի ամսական վճարումներ ուսումը ավարտելուց կամ թողնելուց վեց ամիս անց**
        - Վճարումը որոշվում է վարկի չափով և ծրագրի տևողությամբ
        - Ներառում է շահաբաժնի ցածր տոկոսներ
        - Արդյունավետության խրախուսման ծրագրին հետևելով հնարավոր է երեքից չորս տարվա ընթացքում ամբողջությամբ վճարել

Վերադարձեք 62-րդ էջը

## ԿՄՀ ՎԱՐԿԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### Ո՞վ է ԿՄՀ վարկի խորհրդատուն:

ԿՄՀ վարկի խորհրդատուն չափահաս անձ է, որը ձեզ օգնում է հաջողության հասնել ուսման մեջ, աշխատանքում և վարկը մարելիս: **ԿՄՀ վարկի խորհրդատուն վարկը ստորագրող կողմ չէ, ոչ էլ երաշխավոր և չունի ԿՄՀ վարկի հետ կապված ֆինանսական պարտավորություններ:**

### Ինչպե՞ս եմ ընտրելու ԿՄՀ վարկի իմ խորհրդատուին:

Խնդրեք պատասխանատվության զգացում ունեցող չափահաս մի մարդու լինել ԿՄՀ վարկային ձեր խորհրդատուն: Դուք կարող եք ընտրել մեկին, ով գիտի ձեր ծրագրերի մասին, այդ թվում այն մարդիկ, ում հետ խոսել եք աշխատատեղերի կամ կրթական հաստատությունների մասին: Նա կարող է լինել Եկեղեցու անդամ կամ ոչ անդամ:

ԿՄՀ կայքի ԿՄՀ վարկային խորհրդատուի էջ մուտք գործելու համար ԿՄՀ վարկային խորհրդատուն պետք է ՎՕՍ հաշվառում ունենա: ԿՄՀ վարկային դիմումի ձեր առցանց օրինակը լրացնելու համար ձեզ անհրաժեշտ կլինի հետևյալ տեղեկությունները.

1. ՎՕՍ հաշվառման օգտանունը (պարտադիր պայման չէ)

   ______________________________________

   *(ՎՕՍ հաշվառումը հասանելի է ցանկացած մարդու համար)*

2. Հեռախոսահամար (առաջնային) ____________________

3. Հեռախոսահամար (երկրորդական) ____________________

4. Էլեկտրոնային փոստի հասցե ____________________

ԿՄՀ ներկայացուցիչը կապ կհաստատի վարկային ձեր խորհրդատուի հետ, որպեսզի ընդունի խորհրդատուի պատասխանատվությունը:

շարունակությունը հաջորդ էջում

## Ի՞նչ պետք է իմանա և անի ԿՄՀ իմ վարկային խորհրդատուն:

Ձեր խորհրդատուն.

- Պետք է իմանա, որ նա ֆինանսական պատասխանատվություն չի կրում ԿՄՀ ձեր վարկի համար:
- Ձեզ քաջալերանք և խորհուրդ կտա, մինչ դուք բախվում եք կրթական, աշխատանքային կամ վարկի մարման դժվարություններին և կօգնի ձեզ պահել ԿՄՀ վարկի մարման ձեր պարտավորությունը:
- Պատրաստ լինի ընդունել ձեր առաջընթացը քննարկելու նպատակով ԿՄՀ ներկայացուցիչների եւ քահանայության առաջնորդների հեռախոսազանգերը կամ էլեկտրոնային հաղորդագրությունները:
- Պահպանի ձեր վարկի մասին տեղեկության գաղտնիությունը:
- Համաձայնում լինի, որ ԿՄՀ-ն կարող է մուտք գործել Եկեղեցու անդամության գրանցումներ և ԿՄՀ վարկային խորհրդատուի իր դերին վերաբերող տեղեկություններ հավաքել ու մշակել:

Վերադարձեք 62-րդ էջը

## ԿՄՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

**Այս ծրագիրը լրացրեք տանը՝ ոչ թե հանդիպման ընթացքում:** Օգտագործեք Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի աշխատանքային ձեռնարկի տվյալները: ԿՄՀ վարկային երաշխավորության հարցազրույցի ժամանակ ցույց տվեք այս ծրագիրը քահանայության ձեր ղեկավարին:

**Իմ խորհրդատուն (4-րդ շաբաթ, էջ 71)**

Անուն. ______________________________

ՎՕՍ հաշվառման օգտանուն ______________________________

Հեռախոսահամար (առաջնային). ______________________________

Հեռախոսահամար (երկրորդական). ______________________________

Է-փոստ. ______________________________

**Աշխատանքային իմ ծրագիրը (1-ին շաբաթ, էջ 14)**

Կրթական մշտական հիմնադրամ

| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՕԳՆԻ ԻՆՁ ԻՆՔՆԱՊԱՀՈՎ ԴԱՌՆԱԼ: | |
|---|---|
| **Ընթացիկ աշխատանքը** | |
| Շաբաթական քանի ժամ եք աշխատում (բոլոր աշխատանքներում). | |
| Զբաղեցրած պաշտոն(ներ)ը. | |
| Ամսական եկամուտը. | |
| **Նախատեսած աշխատանքը (պետք է լինի ԻԾ նախընտրելի աշխատանքների ցանկից կամ պետք է բացառության հայտ ներկայացվի)** | |
| Նախատեսած պաշտոնը. | |
| Հաշվարկած ամսական եկամուտը (ծրագրի ավարտից հետո). | |

**Կրթության իմ ծրագիրը (2-րդ շաբաթ, էջ 34)**

| ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՄ ԾՐԱԳԻՐԸ. Ի՞ՆՉ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՈՒՍՈՒՄ ԻՆՁ ԿՈՐԱԿԱՎՈՐԻ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ | |
|---|---|
| Ընտրված հաստատությունը (ԻԾ նախընտրելի հաստատությունների և ծրագրերի ցանկից). | |
| Մասնագիտությունը կամ ծրագիրը (ԻԾ նախընտրելի հաստատությունների և ծրագրերի ցանկից). | |
| Նախընտրելի աշխատանքը (ԻԾ նախընտրելի աշխատանքների ցանկից). | |
| Դիմելով այս վարկի համար, երբ եք նախատեսում սկսել ձեր ուսումը: | |
| Ծրագրավորված ավարտման ամիսը և տարին. | |

շարունակությունը հաջորդ էջում

## ԿՄՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

**Իմ եկամուտներն ու ծախսերը (3-րդ շաբաթ, էջ 47)**

| ԱՎԵԼԱՑՐԵՔ ԱՄՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԸ *(ներառյալ ամուսնու եկամուտը, եթե ամուսնացած եք)* | |
|---|---|
| Եկամուտ աշխատավարձից | |
| Ընտանիքի անդամների օգնությունը կրթության համար | |
| Այլ եկամուտ | |
| Այլ եկամուտներ (ամսական) | |
| **«Ա» Ընդհանուր ամսական եկամուտ** | |

| ԱՎԵԼԱՑՐԵՔ ԱՄՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ | |
|---|---|
| Տասանորդ, նվիրատվություններ | |
| Խնայողություններ | |
| Ուտելիք | |
| Բնակարանային ծախսեր | |
| Ջուր | |
| Բժշկական ծախսեր | |
| Տրանսպորտ | |
| Կրթական ծախսեր | |
| Պարտքերի մարում | |
| Հագուստ | |
| Էլեկտրաէներգիա | |
| Հեռախոս | |
| Այլ | |
| **«Բ» Ամսական ընդհանուր ծախսեր** | |

Այժմ հաշվեք, թե որքան կարող եք ամեն ամիս վճարել ձեր կրթության համար.
**«Ա» Ընդհանուր ամսական եկամուտ** – **«Բ» Ամսական ընդհանուր ծախսեր** = **«Գ»** __________ x 12 (ամիսների թիվը) =
**«Դ»** __________:

**Կրթության իմ ծախսերը (3-րդ շաբաթ, էջ 48)**

| ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ (մեկ տարվա համար) | Ընտրած կրթական հաստատությունը |
|---|---|
| Ուսման վարձ | |
| **Գումարած** Քննական և այլ ծախսեր (ընդունվելու, հաստատագրման, վկայագրի, ավարտական քննության և այլ ծախսեր՝ մեկ տարվա) | + |
| **Գումարած** Գրքեր և այլ պարագաներ (մեկ տարվա) | + |
| **Հանած** Կրթաթոշակ կամ դրամաշնորհ (եթե առկա է – մեկ տարվա) | - |
| **«Ե» Կրթության իմ ծախսերը (մեկ տարվա)** | = |
| **«Դ» Որքա՞ն կարող ենք մենք վճարել (մեկ տարվա)** | - |
| **«Զ» Մնում է վճարել (մեկ տարվա)** | = |

**Խորհրդատուի ստորագրությունը**

______________________________ (նշեք անունը) ավարտել է *Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի* չորս դասերը և պատրաստ է դիմելու ԿՄՀ վարկի համար:

______________________________ ______________________________ ______________________________
*Դասվարի անունը* *Դասվարի ստորագրությունը* *Ամիս/ամսաթիվ*

## ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս ձևը հասանելի է ձեր ցցի ինքնապահովման կենտրոնում կամ առցանց srs.lds.org/pef հասցեով: Ձեր ԿՄՀ վարկային ծրագիրը (73–74 էջում) բերեք քահանայության ղեկավարի ձեր հարցազրույցին:

THE CHURCH OF JESUS CHRIST OF LATTER-DAY SAINTS | Perpetual Education Fund

**Priesthood Leader Interview and Endorsement**

***PEF Applicant** (print name):* ______________________________

**Dear Bishopric or Branch Presidency,**
This member is seeking better education and work. Please discuss with the member the following statements. Place your initials in each box to indicate your endorsement.

| *Bishopric or Branch Presidency* | *Statements* |
|---|---|
| | I have reviewed this member's Self Reliance Plan and budget and re[illegible]mend that [illegible] receive a PEF loan. |
| | This member of my unit regularly attends sacra[illegible] an[illegible]r Sunday [illegible] temple worthy, and fulfills a calling. |
| | I have reviewed the Self-Reliance Pr[illegible]ith the [illegible]er (see back of this form). The member understands and is [illegible]mitte[illegible]hese pr[illegible]es. |
| | This member is committed to [illegible]ffort, time, [illegible]acrifice [illegible]ssary to succeed in school and gain better work. |
| | This member ha[illegible]alified Loan [illegible]or for their P[illegible]Loan. His/Her name is: ______________. I s[illegible]t this choice of mentor. |
| | This [illegible]ber is a pers[illegible] integrity and [illegible]knowledges that s/he is making a financial and m[illegible]ommitment [illegible]ay the Perpetual Education Loan in full. |
| | This mem[illegible]derstand[illegible] I may review their loan repayment status with the ward or stake sel[illegible]tee or the loan mentor. |
| | If a Y[illegible] Single Adult, this member has satisfactorily fulfilled the Institute attendance requi[illegible]nt and has presented verification from the Institute. |
| | I will [illegible]w on a monthly basis this member's loan repayment status and offer [illegible]agement and counsel as needed. |

ՆՄՈՒՇ

As leader and applicant, we have discussed these statements and certify that they are true.

| | *Name* | *Signature* | *Date* |
|---|---|---|---|
| Applicant | ____________ | ____________ | ________ |
| Bishopric or Branch Presidency | ____________ | ____________ | ________ |

շարունակությունը հաջորդ էջում

**Ինքնապահովման վերաբերյալ հիմնական վարդապետություններ քահանայության ղեկավարների և դիմորդների համար**

| | |
|---|---|
| **Հավատք առ Հիսուս Քրիստոս**<br>ՎևՈւ 104.15, Եթեր 12.27 | Վստահ լինել, որ Աստծո նպատակն է ապահովել Իր Սրբերի նյութական կարիքները և որ Նա ունի այդ անելու ողջ զորությունը: |
| **Հնազանդություն**<br>ՎևՈւ 130.21, Մատթեոս 7.21 | Ինքնապահովման օրհնությունը հիմնված է այն օրենքներին ու արարողություններին հնազանդվելուց, որոնց վրա հրամանագրված է ինքնապահովումը: |
| **Անհատը պետք է ինքնուրույն գործի**<br>2 Նեփի 2.16, 26 | Ինքնապահովումը ոչ թե իրավունք է, այլ ինքդ քեզ օգնելու պարտավորություն: Դուք պետք է աշխատեք: Դուք պետք է ինքնուրույն գործեք և չսպասեք ներգործվելու: |
| **Միաբանություն և ծառայություն**<br>Մովսես 7.18, ՎևՈւ 56.16–17 | Աղքատը և հարուստը պետք է մեկ լինեն: Բոլորը պետք է ծառայեն ու սիրեն միմյանց: |

Վերադարձեք 62-րդ էջը

## ԿՄՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԴԻՄՈՒՄԸ ԱՌՑԱՆՑ ԼՐԱՑՆԵԼԸ

ԿՄՀ վարկային դիմումը լրացնելու համար դուք պետք է բացեք դիմումի առցանց օրինակը srs.lds.org/pef հասցեով՝ օգտագործելով ձեր ՎՕՍ հաշվառումը:

ՎՕՍ հաշվառում ունեցող ԿՄՀ վարկային խորհրդատուները կարող են բացել ԿՄՀ իրենց էջը ԿՄՀ կայքում:

Եթե վերջերս եք ծառայել միսիայում, ապա արդեն ունեք ՎՕՍ հաշվառում: Եթե ոչ, ապա կարող եք ՎՕՍ հաշվառում բացել ldsaccount.lds.org կայքում:

### Ընդհանուր հարցեր

**1. Ի՞նչ է ՎՕՍ հաշվառումը:**

ՎՕՍ հաշվառումը մուտք գործելու համակարգ է (օգտանունով և գաղտնաբառով) Եկեղեցու կայքերի մեծամասնության համար, ներառյալ ldsjobs.org կայքը, ընտանեկան պատմության կայքը, միսիոներական առցանց դիմումների և ծխերի կամ ցցերի կայքէջը:

**2. ՎՕՍ հաշվառում օգտագործելու համար Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ լինելը պարտադիր պայմա՞ն է:**

Ո՛չ, անդամ լինելը պարտադիր չէ: Մինչդեռ եկեղեցու անդամների համար լրացուցիչ աղբյուրներ կան անդամությանը հասանելի (պարտադիր է ԿՄՀ վարկի համար), ցանկացած մարդ (այդ թվում նաև վարկային խորհրդատուները) կարող է գրանցվել հաշվառում ձեռք բերելու համար որպես «friend» (ընկեր):

**3. Ի՞նչ տվյալներ են անհրաժեշտ ՎՕՍ հաշվառում գրանցելու համար:**

Եթե դուք Եկեղեցու անդամ եք, ձեզ անհրաժեշտ կլինի ձեր անդամության գրանցման թիվը, ծննդյան տվյալները և էլեկտրոնային փոստի գործող հասցեն: Անդամության գրանցման ձեր թիվը կարող եք գտնել տաճարային ձեր երաշխավորագրի վրա կամ խոսելով ձեր ծխի կամ ճյուղի գործավարի հետ: Եթե ձեր վարկային խորհրդատուն Եկեղեցու անդամ չէ, նրան անհրաժեշտ կլինի տրամադրել իր անունը, ծննդյան տվյալները, սեռը և երկիրը:

ԿՄՀ վարկային դիմումը առցանց լրացնելու համար մեզ անհրաժեշտ կլինի.

1. **Հիմնական տեղեկություններ ձեր անձի ու ընտանիքի վերաբերյալ**
2. **Քահանայության ղեկավարի ստորագրած երաշխավորագիրը**
3. **Լրացված «ԿՄՀ վարկային ծրագիրը»**
    - Տեղեկություն խորհրդատուի վերաբերյալ
    - Աշխատանքային ծրագիր
    - Կրթության ծրագիր
    - Կրթության ֆինանսական ծրագիր
    - Դասվարի ստորագրությունը

Վերադարձեք 62-րդ էջը

## ԵՍ ԵՐԿՈՒ ՁԵՌՔ ՈՒՆԵՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հերթով կարդացեք այս պատմությունը Արթուրոյի՝ պերուացի մի Եկեղեցու անդամի մասին:

*Միսիայից վերադառնալը հեշտ չէր: Ես այնքան նպատակներ ու երազանքներ ունեի. սակայն երբ վերադարձա, ստիպված էի դիմակայել իրականությանը: Ես չունեի շատ հմտություններ, ոչ էլ շատ եկամուտ ունեի: Աշխատանք գտնելը հեշտ չէր:*

*Ի վերջո, ես սկսեցի մրգեր վաճառել և աշխատած գումարով վճարեցի ուսման համար, օգնեցի ընտանիքիս և վճարեցի իմ տասանորդն ու նվիրատվությունները:*

*Ես արեցի դա մինչև սեպտեմբեր ամիսը: Մի օր, միրգ վաճառելիս, մի բեռնատար ինձ ետևից վրաերթի ենթարկեց: Այն ճզմեց ինձ պատին ու ջարդուփշուր արեց աջ ոտքս: Ես կորցրեցի աջ ոտքս և աչքերիցս մեկի տեսողությունը: Իմ աջ ձեռքն ու ձախ ոտքը ևս վնասվել էին:*

*Այդ բոլորից հետո ես լսեցի մարգարեի խոսքերը, որ աղքատությունը պետք է վերացնել, և որ վերադարձած միսիոներները, ովքեր չունեն ֆինանսական միջոցներ, կրթություն ստանալու հնարավորություն կունենան: Բարձր ձգտումներ ունեցող երիտասարդների համար կհիմնադրվի Կրթության մշտական հիմնադրամ: Ճիշտ է ես կորցրել էի իմ ոտքը և մի աչքը, սակայն չէի կորցրել ապրելու և երազելու ցանկությունը: Ես որոշեցի պայքարել իմ նպատակներին հասնելու համար:*

*Կրթության մշտական հիմնադրամի օգնությամբ ես միջին մասնագիտական կրթություն ստացա երեք տարում, իսկ հետո ցանկացա ավելին: Ես դիմեցի և ընդունվեցի համալսարան:*

*Ներկայումս ես ինքնուրույն աշխատում եմ որպես սպասարկման ծառայությունների ներկայացուցիչ: Օրվա առաջին կեսը՝ մինչև 16.00, ես հաճախորդների սպասարկման և համակարգիչների տեխնիկական սպասարկման ծառայություն եմ մատուցում մի քանի ընկերություններին: Բացի այդ, ես տանը համակարգիչներ եմ վերանորոգում: Երեկոյան ես հաճախում եմ համալսարանի իմ դասերին: Ես դուրս եմ գալիս ժամը 17.00 և դասերը սկսվում են 18.00: Դասերն ավարտվում են 23.00 և ես տաքսիով վերադառնում եմ տուն՝ գիշերվա 12.30:*

*Ես մի բան ուտում եմ, դասերս եմ անում ու քնում եմ: Վաղ առավոտյան ես արթնանում եմ ու գնում եմ աշխատանքի կամ աշխատանք եմ փնտրում: Կրկին աշխատում եմ մինչև ժամը 14.00 կամ 15.00, և ապա գնում համալսարան:*

*Ես շատ երախտապարտ եմ Աստծուն իմ ունեցած ամեն ինչի համար: Ես ցանկանում եմ ինչ-որ ձևով փոխհատուցել նրան այն ամենի համար, ինչ նա արել է ինձ համար: Ես շատ բան չեմ կարողանում անել և միշտ պարտական կլինեմ նրան: Որպես կամավոր՝ ես ծառայում եմ Եկեղեցու Կրթության մշտական հիմնադրամի գրասենյակների զանգերի կենտրոնում:*

*Երկուս և կես տարի անց ես ավարտած կլինեմ որպես համակարգային ճարտարագետ: Հինգ տարի հետո ես կաշխատեմ որևէ լուրջ ընկերությունում, որպեսզի հոգամ իմ ընտանիքի, ինչպես նաև իմ ապագա ընտանիքի ու երեխաների կարիքները:*

*Ես տաճարումամուսնանալու նպատակ ունեմ: Այդ նպատակով եմ ես սովորում և այդ նպատակով եմ ես աշխատում: Եվ այդ նպատակով եմ ես ամեն օր պայքարում:*

*Գիտեմ, որ հեշտ չի լինի, սակայն ես սովորել եմ, որ Տերը երբեք չի տալիս պատվիրաններ առանց իրականացման ուղի պատրաստելու:*

*Նա ինձ կյանք է տվել: Նա ինձ օրհնել է Կրթության մշտական հիմնադրամով: Նա ինձ երկու ձեռք է տվել, որ կարողանամ աշխատել, ուղեղ, որ մտածեմ, բերան, որ խոսեմ, և սիրտ, որ զգամ և իմ երազանքներով առաջ գնամ:*

*Ես գիտեմ, որ ամեն բան հնարավոր է, ինչպես Պողոսն է ասել. «Իմ զորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում»: Տերն օգնել է ինձ:*

*Ամեն բան, որ ես ունեմ՝ իմ ընտանիքը, իմ կրթությունը և անգամ իմ կյանքը, – ամենի համար Աստծուն եմ պարտական: Ամեն բան Նրա ձեռքով է գալիս և ես երախտապարտ եմ դրա համար:*

**Վերադարձեք 64-րդ էջը**



# 5

# *Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում:*

## Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի

# ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Հանդիպման օրը.**

- Հաղորդագրություն ուղարկեք կամ զանգահարեք խմբի անդամներին: Հրավիրեք նրանց ժամանել 10 րոպե առաջ՝ իրենց պարտավորությունները կատարելու վերաբերյալ:
- Նախապատրաստեք հանդիպման նյութերը:

**Հանդիպումից 30 րոպե առաջ.**

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջ, որպեսզի բոլորը մոտ լինեն միմյանց:
- Գրատախտակին գծեք պարտավորությունների հետևյալ գծապատկերը:

| *Խմբի անդամի անունը* | *Ես քննարկել եմ իմ աշխատանքային, կրթական և ֆինանսական ծրագրերը իմ ընտանիքի անդամների հետ (այո/ոչ)* | *Ես որոշում եմ կայացրել, թե արդյոք կարիք ունեմ օգտվելու ԿՄՀ վարկից (այո/ոչ)* | *ԿՄՀ վարկից օգտվելու դեպքում, ես սկսել եմ դիմելու գործընթացը (այո/ոչ)* | *Կիրառել եմ **Հիմքը** ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Ձեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|---|---|
| *Գլորիա* | *Ա* | *Ա* | *Ա* | *Ա* | *Ա* | *Ա* |
| | | | | | | |
| | | | | | | |

**Հանդիպումից 10 րոպե առաջ.**

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ ժամանում են:
- Խմբի անդամները ժամանելիս խնդրեք նրանց լրացնել պարտավորությունների աղյուսակը գրատախտակին:
- Խմբից մեկին նշանակեք հետևել ժամանակին:

**Դասի սկզբին.**

- Խնդրեք բոլորին անջատել իրենց հեռախոսները և այլ սարքերը:
- Սկսեք բացման աղոթքով (և օրհներգով, եթե ցանկանում եք):
- Ուշացողներին հանգիստ խնդրեք անջատել իրենց հեռախոսները եւ լրացնել պարտավորության աղյուսակը, մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- *Իմ հիմքը* գրքույկի սկզբունքի համար սահմանեք 20 րոպե ժամանակ:
- Ավարտեք 5-րդ սկզբունքը *Իմ հիմքը* գրքույկի: Ապա վերադարձեք այս աշխատանքային ձեռնարկին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵՍ ՊԱՀԵ՞Լ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**Ժամանակ**. Սահմանեք 20 րոպե ժամանակ միայն այս էջի համար (ոչ ամբողջ Հաշվետվություն բաժնի համար):

**Կիրառեք**. Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների վերաբերյալ: Իրենց բոլոր պարտավորությունները կատարողներին խնդրում ենք ոտքի կանգնել: (Ծափահարություն):

**Կարդացեք**. Այժմ խնդրում ենք բոլորը ոտքի կանգնեն: Մենք պետք է աշխատենք կատարել մեր բոլոր պարտավորությունները: Դա ինքնապահով մարդկանց գլխավոր սովորություններից մեկն է: Եկեք միասին կրկնենք մեր թեմատիկ կարգախոսները.

> **«Եվ իմ նպատակն է` ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**
>
> *Վարդապետություն և Ուխտեր 104.15*
>
> **Հավատքով առ Տերը մենք միասին աշխատում ենք ինքնապահով դառնալ:**

**Կարդացեք**. Եկեք նստենք:

**Քննարկեք**. Ի՞նչ եք դուք սովորել այս շաբաթվա ձեր պարտավորությունները կատարելիս: Այս խումբը կարո՞ղ է ձեզ օգնել առաջադիմել:

## ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

**Ժամանակ.** Այս էջի համար առանձին սահմանեք 15 րոպե ժամանակ:

**Կարդացեք.** Եկեք զեկուցենք մինչ այժմ ունեցած մեր առաջընթացի վերաբերյալ: Հետևյալ տեսանյութը կօգնի մեզ հասկանալ, թե ինչպես կարող ենք դա անել:

**Դիտեք.** «Իմ առաջընթացի հաշվետվություն» (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 92 էջում):

**Կիրառեք.** Այժմ խմբի անդամները կկիսվեն վերջին մի քանի շաբաթների իրենց առաջընթացի վերաբերյալ: Նախ կարդացեք հետևյալ հրահանգները:

1. Ինքնուրույն ժամանակ տրամադրեք և մտածեք ստորև տրված առանցքային հարցերի պատասխանների մասին: Դուք կարող եք տեղեկությունները գտնել ձեր աշխատանքային ձեռնարկի նախորդ շաբաթների բաժիններում:
2. Երբ բոլորը պատրաստ լինեն, հերթով ներկայացրեք ձեր պատասխանները ձեր աշխատանքային ընկերոջը: Անպայման արձագանք խնդրեք նրանից:

### ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Ինչո՞ւ եմ ես ցանկանում ավելի շատ ինքնապահով լինել: ______________________________

Ի՞նչ եկամուտ պետք է ես վաստակեմ, որպեսզի ինքնապահով լինեմ: ____________________

Ի՞նչ կարգի աշխատանք եմ ես ընտրել ապագայի համար, որպեսզի վաստակեմ այդ եկամուտը:

______________________________________________________________

Ի՞նչ վերապատրաստում կամ կրթություն է ինձ հարկավոր, որպեսզի որակավորվեմ իմ ապագա աշխատանքի համար: ______________________________________________

Ուսումնական ի՞նչ հաստատություն կամ ծրագիր եմ ես ընտրել: Ինչո՞ւ: ________________

Արդյոք ես գիտե՞մ իմ կրթության ծախսերը: Ինչպե՞ս եմ պատրաստվում վճարել դրանք: Աշխատե-լո՞ւ եմ: Ընտանիքի՞ց վերցնելու: Վա՞րկ եմ վերցնելու: ______________________________

Արդյոք ես կարիք ունե՞մ օգտվելու ՄԿՀ վարկային ծրագրից, որպեսզի վճարեմ իմ ծախսերը:

______________________________________________________________

Եթե այո, ապա ես գտե՞լ եմ խորհրդատու ու կապ հաստատել քահանայության իմ ղեկավարի հետ:

______________________________________________________________

Եթե այո, ապա ես ավարտել եմ վարկի դիմումի գործընթացը: ___________________________

______________________________________________________________

Ամենամեծ հարցը, որ ներկայումս անհանգստացնում է ինձ: ____________________________

Ունե՞ք արդյոք որևէ դիտողություն կամ խորհուրդ ինձ համար: _________________________

______________________________________________________________

# ՍՈՎՈՐԵՔ

## ՍՈՎՈՐԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼ:

**Ժամանակ**. Սովորել բաժնի համար սահմանեք 45 րոպե ժամանակ

**Կարդացեք**. Մենք մեծ առաջընթաց ունենք մեր կրթության ծրագրավորման հարցում: Սակայն երբ արդեն սովորում ենք, ի՞նչպես կարող ենք հաջողության հասնել:

| Շաբաթ 1 | Շաբաթ 2 | Շաբաթ 3 | Շաբաթ 4 | ՇԱԲԱԹ 5 | Շաբաթ 6 |
|---|---|---|---|---|---|
| Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ: | Ի՞նչ կրթություն կորակավորի ինձ իմ աշխատանքի համար: | Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար: | Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Մշտական Կրթական Հիմնադրամից: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանից դուրս: |

**Կարդացեք**. Այս շաբաթ մենք կգտնենք այս հարցի պատասխանը և կկատարենք հետևյալ գործողությունները.

**Կարդացեք**. **ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑԸ – Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում:**

**ՇԱԲԱԹՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ – Ամրապնդել հոգևոր սկզբունքների հանդեպ իմ հնազանդությունը և բարելավել ուսման իմ հմտություններն ու սովորույթները:**

## ԻՆՉՈ՞Ւ Է ՏԵՐԸ ՄԵԶ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԱԼԻՍ ՍՈՎՈՐԵԼ:

**Կարդացեք.** Տերը և Նրա մարգարեները մեզ խորհուրդ են տվել կրթություն և ուսում ստանալ, լավ աշխատանքի մասնագիտություն ձեռք բերել և եռանդուն աշխատել:

**Դիտեք.** «Կրթությունը հնարավորություններ բացող բանալի է» (Եթե տեսանյութը մատչելի չէ, կարդացեք սցենարը 93 էջում):

**Քննարկեք.** Երեք հոգուց բաղկացած խումբ կազմեք: Մի քանի րոպե տրամադրեք և քննարկեք հետևյալ հարցերը. Ապա, որպես խումբ, ամփոփ պատասխան պատրաստեք:

1. Ինչո՞ւ է Տերը ցանկանում, որ մենք կրթություն և ուսում ստանանք: Իսկ Նա կարո՞ղ է օգնել մեզ հաջողության հասնել:
2. Ինչպե՞ս են կրթությունը և ուսումը օգնում մեզ «մեծարել կոչումը», որ Աստված տվել է մեզ:

*«Ջանասիրաբար փնտրեք և իմաստության խոսքեր ուսուցանեք միմյանց. այո՛, իմաստության խոսքեր փնտրեք լավագույն գրքերից. ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով»:*

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 88.118**

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ ՀԱՎԱՏՔՈՎ:

**Կարդացեք.** Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը:

**Կիրառեք.** Աղյուսակից մեկ սկզբունք ընտրեք և մտքում կարդացեք: Հարց տվեք ձեզ. «Ինչպե՞ս կարող է սա փոխել սովորելու իմ ձևը»:

| ՀԱՎԱՏՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ |
| --- |
| **Արժանի մնացեք:** «Եթէ յօժարէք եւ լսէք, երկրի բարիքը կ՛ուտէք» (Եսայիայի 1.19), «Եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում. . . դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն» (ՎևՈւ 130.21): |
| **Փնտրենք Հոգին:** «Մխիթարիչը. . . ամեն բան կ՛սովորեցնէ ձեզ, եւ կ՛յիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի» (Հովհաննես 14.26). «Փնտրեք ջանասիրաբար, աղոթեք անդադար և եղեք հավատացող» (ՎևՈւ 90.24): |
| **Լսեք, խորհեք, հավատացեք:** «Լսեք ձայնը Հիսուս Քրիստոսի՝ ձեր Քավչի» (ՎևՈւ 29.1), «Այսպես է ասում մեղմ հանդարտ ձայնը»(ՎևՈւ 85.6), «Մի զարմացեք. . . մի կասկածեք, այլ եղեք հավատացող» (Մորմոն 9.27): |
| **Գործեք. ակտիվ եղեք:** «Եթէ մէկը կամենում է նորա կամքն անել, նա կ՛իմանայ» (Հովհաննես 7.17). «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է» (1 Նեփի 3:7). «Մարդիկ պետք է ջերմեռանդ ներգրավված լինեն. . . և շատ արդարություն գործեն» (ՎևՈւ 58.27): |

Խմբով քննարկեք, թե ինչ սովորեցիք: Ինչպե՞ս եք կիրառելու այս սկզբունքները ձեր կյանքում: Ինչպե՞ս եք ուսուցանելու դրանք ձեր ընտանիքին:

**Կարդացեք.** Մենք կարող ենք հավատքով սովորել, որովհետև գիտենք ճշմարտությունը: Աստված մեր Հայրն է, և մենք Նրա զավակներն ենք: Նա ուզում է, որ մենք նմանվենք Իրեն: Փրկիչը կարող է մեզ Իր զորությամբ օժտել: Սուրբ Հոգին կարող է ավելացնել մեր հասկացողությունը և օգնել մեզ հիշել: Քանի որ մենք գիտենք այս ճշմարտությունները, մենք կարող ենք հավատքով լավ սովորող դառնալ:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ:

**Կարդացեք**. Ի լրումն հավատքով սովորելու, մենք պետք է սովորենք նաև ուսումնասիրելով: Ուսումնասիրելը ներառում է այն, ինչ անում ենք դասարանի *ներսում* և այն, ինչպես պատրաստվում ենք դասարանից *դուրս*: Այս հանդիպման մնացած մասում մենք կկենտրոնանանք դասարանի ներսում հաջողություն ունենալու բանալիների վրա: Հաջորդ շաբաթ մենք կքննարկենք դասարանից դուրս կատարվող նախապատրաստությունը:

| | |
|---|---|
| **Ընկալել ու հիշել իմ սովորածը** | **Ակտիվ մասնակցել, ներդրում ունենալ դասարանում** |
| **Սովորել ու բավարարել ակնկալիքները** | **Սովորել հաջողությամբ ստուգարքներ հանձնել** |

**Սովորել ուսումնասիրելով. դասարանի ներսում**

## ԻՆՉՊԵ՞Ս ՆՇՈՒՄՆԵՐ ԱՆԵՄ, ՈՐՊԵՍԶԻ ԸՆԿԱԼԵՄ ԻՄ ՍՈՎՈՐԱԾԸ

**Կարդացեք**. Մենք նշումներ ենք անում, որպեսզի հիշենք դասարանում մեր տեսածը և լսածը: Մենք վերընթերցում ենք այդ նշումները, որպեսզի հիշենք մեր սովորածը:

**Կիրառեք**. Ընտրեք ինչ-որ մեկին, որպեսզի կարդա 94 էջի «Իսկական կյանքի կրթություն» հոդվածը: Խմբի մյուս անդամները պետք է լսեն և հետևեն ստորև տրված նշումներին: Այս նշումները ընդգրկո՞ւմ են Նախագահ Այրինգի ասածը:

| ԻՍԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԵՆՐԻ Բ. ԱՅՐԻՆԳ | |
|---|---|
| *Տերը ցանկանում է, որ ես սովորեմ.* | *Դարձի գալը սովորելու ցանկություն է առաջ բերում* |
| *Նրա շնորհը կօգնի ինձ* | *Տերը ցանկանում է, որ մենք սովորենք ու ծառայենք* |
| | *Նրա շնորհը օգնում է մեզ սովորել ավելի արագ ու ավելի լավ* |
| *Սովորելը ինձ օգնում է ծառայել* | *Առաջինը պետք է հոգևոր ուսմանը նախապատվություն տալ* |
| *Իսկակա՛ն կյանքը* | *Տերը գիտի, թե մենք ինչ պիտի անենք* |
| *հավերժակա՛ն կյանքն է* | *Իսկական կյանքը հավերժական կյանքն է* |
| | *Մեր սովորածը մնում է մեր մեջ* |
| | *Աստված ցանկանում է, որ մենք սովորենք, ծառայենք* |
| | *Ավելի շատ աղոթեք սովորածի մասին, ապավինեք Սուրբ Հոգուն* |

**1. Գրեք վերնագիրը և խոսնակի անունը:**

**2. Երբ նրանք խոսում են, գրի առեք առանցքային կետերը այս մեծ տարածքում. եղեք պարզ:**

**3. Դասից հետո, որքան հնարավոր է շուտ ամփոփեք ձեր նշումները այս տարածքում:**

**4. Որոշեք հիշելու ու կատարելու առավել կարևոր բաները:**

**Քննարկեք.** Ի՞նչ սովորեցիք լավ նշումներ անելու վերաբերյալ:

**Կիրառեք.** Այժմ ընտրեք մեկ անձ, որ կարդա 95 էջի «Սովորելը և Վերջին Օրերի Սրբերը» հոդվածը: Լսեք և նշումներ կատարեք ստորև հատկացված տարածքում.

1. Վերևում նշեք վերնագիրը, խոսնակի անունը և ամսաթիվը:
2. Լսելիս գրի առեք առանցքային կետերը աջ մասում (մեծ տարածքում):
3. Կարդալու ավարտից հետո տրամադրեք երկու րոպե, որպեսզի ամփոփեք ձեր մտքերը ձախ կողմում:
4. Ներքևում գրեք այն բաները, որ ցանկանում եք փոխել կամ ավելի լավ անել:

**Քննարկեք.** Համեմատեք ձեր նշումները խմբի մյուս անդամների հետ: Կարողացա՞ք հաջող նշումներ անել: Ինչպե՞ս եք սա կիրառելու, որ ձեզ մոտ սովորություն դառնա:

**Կարդացեք.** Եկեք հիշենք այս բաները, որոնք կօգնեն մեզ ընկալել մեր սովորածը:

- Գծեր քաշեք ձեր նոթատետրում, որպեսզի բաժանեք էջը. հետևեք նշված քայլերին:
- Ընկալեք հիմնական մտքերը. մանրամասները լրացրեք ավելի ուշ:
- Մտքում կապեք նոր տեղեկությունը ձեր իմացած գիտելիքի հետ:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՀԻՇԵԼ ԻՄ ՍՈՎՈՐԱԾԸ:

**Կարդացեք**. Եթե արժանի լինենք, Սուրբ Հոգին «կ՛յիշեցնէ [մեզ] ամեն ինչ» (Հովհաննես 14.26): Մենք կարող ենք նաև բարելավել մեր հիշողությունը որոշակի պարբերականությամբ վերընթերցելով մեր նշումները: Գիտնականները ցույց են տվել, որ մենք կարող ենք հիշել մեր սովորած գրեթե *ամեն բան*, եթե հետևենք հետևյալ օրինակին.

| Նոր տեղեկություն | 1 ժամ անց | 1 օր անց | 1 շաբաթ անց | 1 ամիս անց |
|---|---|---|---|---|
| Կարդալ մի բան կամ սովորել մի բան դասարանում և նշումներ անել | Տրամադրեք 10 րոպե՝ ձեր նշումները վերընթերցելու համար | Տրամադրեք 10 րոպե՝ կրկին վերընթերցելու համար. ամփոփեք ձեր նշումները | Տրամադրեք 10 րոպե՝ կրկին վերընթերցելու համար | Տրամադրեք 10 րոպե՝ կրկին վերընթերցելու համար. այժմ դուք չեք մոռանա |

**Քննարկեք**. Ինչպե՞ս կարող եք փոխել ձեր ուսումնասիրության սովորույթները և ծրագրեք ներառել վերոհիշյալ ակնարկները: Դո՞ւք կանեք դա:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՈՒՄ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ:

**Քննարկեք**. Ինչո՞ւ է այդքան կարևոր ակտիվ լինել դասարանում կամ խմբում: Ի՞նչ եք ցույց տալիս ուսուցչին, երբ ակտիվ մասնակցում եք:

**Կիրառեք**. Գնահատեք, թե որքան լավ է ձեր մասնակցությունը, պատասխանելով հետևյալ հարցերին:

| *«x» նշանով նշում արեք յուրաքանչյուր պնդմանը հաջորդող չորս վանդակներից մեկի մեջ, որպեսզի ցույց տաք նշված ոլորտի ձեր ակտիվությունը:* | | | | |
|---|---|---|---|---|
| Ինքնապահովման մեր խմբի հանդիպումներին ես նախապատրաստված եմ գալիս: Ես պատասխանում եմ հարցերին և հաճախ եմ մասնակցում: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |
| Երբ ես ուսումնական դասարանում եմ, ես պատրաստված եմ: Ես անում եմ իմ մասը, պատասխանում եմ հարցերին և կատարում եմ ինձանից պահանջված բոլոր վարժությունները: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |
| Ես փորձում եմ օգնել իմ խմբին կամ դասարանին լսելով և ակտիվորեն սովորելով կամ աշխատելով նրանց հետ: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |
| Ես սովորում եմ ամեն օր. Ես ծրագրում եմ իմ ժամանակը և հետևում եմ իմ ծրագրին. ես ժամանակին կատարում եմ իմ հանձնարարությունները: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |
| Ես փորձում եմ օգնել իմ ուսուցչին կամ դասվարին՝ լսելով և նրա սպասածից ավելին անելով: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |

**Քննարկեք**. Ինչպե՞ս եք պատրաստվում բարելավել ձեր ակտիվ մասնակցությունն ամեն օր:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՆՁՆԵԼ ԻՄ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԸ:

**Կարդացեք.** Ստուգարք հանձնելը կարող է դժվար լինել: Սակայն դրանք կարևոր են մեզ համար և ցույց են տալիս, թե որքան լավ ենք մենք սովորել: Դրանք մեզ պատասխանատու են դարձնում, որը լավ է, եթե մենք հաջողության հասնելու ցանկություն ունենք:

**Քննարկեք.** Որպես խումբ՝ կիսվեք հետևյալ հարցերի վերաբերյալ ձեր մտքերով:

1. Ի՞նչ եք արել դուք, որպեսզի արդյունավետ ձևով հանձնեք ձեր ստուգարքները:
2. Ի՞նչ մտավախություններ եք ունենում ստուգարքի ժամանակ: Ինչպե՞ս եք հաղթահարում ձեր մտավախությունները:
3. Ինչպե՞ս կարող եք փոխել այն, թե ինչպես եք նախապատրաստվում ստուգարքին:

**Կարդացեք.** Ահա մի քանի առաջարկներ, որոնք կարող ենք անել, որ լավ ստուգարք հանձնող դառնանք:

- Հավատքով աղոթեք Աղոթեք և՛ սովորելուց առաջ, *և՛* ստուգարքից առաջ:
- Եռանդուն աշխատեք, որ նախապատրաստվեք. նախապես ձեր սեփական ստուգարքը կազմեք:
- Ստուգարքի ժամանակ կառավարեք ձեր ժամանակը. սկսելուց առաջ որոշեք, թե որքան ժամանակ կարող եք ծախսել յուրաքանչյուր հարցի կամ հատվածի վրա:
- Մանրակրկիտ կարդացեք և վերընթերցեք հրահանգները. ի՞նչ են նրանք իրականում ցանկանում:
- Նախ ավարտեք հեշտ հարցերը, որպեսզի վստահություն ձեռք բերեք, այնուհետև մյուսներին անդրադարձեք:
- Հարցրեք, թե արդյոք սխալ պատասխանների համար բացասական միավոր եք ստանալու. եթե ոչ, ապա կռահելով պատասխանեք:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ ՈՒՍՈՒՑՉԻ ԱԿՆԿԱԼԱԾԸ:

**Քննարկեք.** Ինչո՞ւ է կարևոր իմանալ և բավարարել ձեր ուսուցչի ակնկալիքները:

**Կիրառեք.** Շրջվեք դեպի ձեր խմբի մյուս անդամը: Ձեզանից մեկը կգործի որպես ուսուցիչ, իսկ մյուսը կլինի ուսանողը: Ուսանողը պետք է ուսուցչին տա ստորև տրված հարցերը: Ուսուցիչը կարող է հորինել պատասխանները: Այնուհետև փոխվեք դերերով և կրկնեք նույն բանը:

1. Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ ձեր դասարանում:
2. Ի՞նչ եք ցանկանում, որ մենք սովորենք ու անենք:
3. Ինչպե՞ս եք դուք գնահատելու իմ աշխատանքը:
4. Ի՞նչ եք դուք գնահատում ամենաշատը: Մասնակցությո՞ւնը, ժամանակին ամեն ինչ անելը, թե պատրաստ լինելը: Գուցե որևէ ա՞յլ բան:

**Քննարկեք.** Այժմ, երբ դուք փորձ ձեռք բերեցիք, դուք կարո՞ղ եք նույն բանն անել ձեր իրական ուսուցչի հետ: Ե՞րբ կանեք այդ:

# ԽՈՐՀԵՔ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ, ՈՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱՄ:

**Ժամանակ**. Խորհել բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը կամ մտածեք մեկ այլ սուրբ գրության մասին: Լռությամբ խորհեք, թե ինչ է այն ձեզ ուսուցանում: Ստորև գրի առեք ձեր տպավորությունները:

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

**Քննարկեք**. Ո՞վ կցանկանա մտքերով կիսվել:

*«Խնդրեք, և ձեզ կտրվի. փնտրեք, և դուք կգտնեք. թակեք, և ձեզ համար կբացվի»:*

**3 ՆԵՓԻ 14.7:**

# ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՐԵՔ

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱԼ:

**Ժամանակ**. Պարտավորություն վերցրեք բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Ընտրեք ձեր աշխատանքային ընկերոջը: Որոշեք, թե երբ և ինչպես եք կապ հաստատելու միմյանց հետ:

_______________________ _______________________

*Աշխատանքային ընկերոջ անունը* *Կապ հաստատելու տվյալներ*

## Բարձրաձայն կարդացեք պարտավորության յուրաքանչյուր քայլը ձեր աշխատանքային ընկերոջը: Խոստացեք պահել ձեր պարտավորությունները: Ստորագրեք պարտավորությունը ստանձնելու համար:

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ես կուսուցանեմ իմ ընտանիքի անդամներին ու ընկերներին, թե ինչպես կարելի է հավատքով սովորել:**

**Ամեն օր ես կկիրառեմ դասարանում ուսումնասիրմամբ սովորելու հիմունքները:**

**Վարկի կարիքի դեպքում՝ ես կշարունակեմ աշխատել ԿՄՀ վարկի գործընթացի վրա:**

Ես կկիրառեմ *Իմ հիմքը* գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ այն իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողությունները՝ նույնիսկ եթե մեկ դրամ լինի:

Ես կզեկուցեմ աշխատանքային իմ ընկերոջը:

_______________________ _______________________

*Իմ ստորագրությունը* *Աշխատանքային ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

**Կիրառեք**. Նախքան հաջորդ հանդիպումը, օգտագործեք պարտավորությունների այս աղյուսակը՝ ձեր առաջընթացը գրանցելու համար: Ստորև տրված վանդակներում գրեք «այո» կամ «ոչ» կամ թե քանի անգամ եք պահել ձեր պարտավորությունը:

| *Ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին ու ընկերներին ինչպես հավատքով սովորել (այո/ոչ)* | *Կիրառել եմ դասարանում ուսումնասիրմամբ սովորելու բոլոր հիմունքները (այո/ոչ)* | *Վարկի կարիքի դեպքում՝ ես շարունակում եմ աշխատել ԿՄՀ վարկի գործընթացի վրա (այո/ոչ)* | *Կիրառել եմ **Հիմքը** ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

**Կարդացեք**. Հիշեք նաև գրանցել ձեր անձնական ծախսերը *Ինքնապահովման իմ ուղին* ձեր գրքույկի ետևում:

Մեր հաջորդ հանդիպմանը մենք ևս մեկ անգամ կանցնենք ինքնապահովման մեր գնահատման ստուգարքը, որպեսզի տեսնենք, թե որքան է մեր ինքնապահով լինելը բարելավվել: Մենք կարիք կունենանք բերելու *Ինքնապահովման իմ ուղին* գրքույկը:

Ընտրեք մեկին վարել հաջորդ հանդիպման *Իմ հիմքը* գրքույկի թեմաներից մեկի քննարկումը: (Զգիտե՞ք ինչպես թեմայի քննարկում վարել *Իմ հիմքը* գրքույկից: Կարդացեք 17 էջը և կազմի դարձերեսը):

Խնդրեք ինչ-որ մեկի ասել փակման աղոթքը:

***Դիտողությունները խրախուսվում են***

*Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները srsfeedback@ldschurch.org էլ-փոստի հասցեին:*

***Նշում դասվարի համար.***

*Հաջորդ հանդիպման համար բերեք Ինքնապահովման իմ ուղին գրքույկի լրացուցիչ հինգ օրինակ:*

# Օժանդակ նյութեր

## ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նշանակեք դերեր և բեմականացրեք հետևյալ սցենարը.

***ԴԱՄՎԱՐ.*** *Այժմ մենք հաշվետվություն կտանք մեր առաջընթացի համար: Ռոբերտ, կարո՞ղ ենք սկսել քեզանից:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Լա՛վ: Առաջին հարցը հետևյալն է. Ինչո՞ւ եմ ես ցանկանում ավելի շատ ինքնապահով լինել: Դե, դուք գիտեք իմ իրավիճակը՝ աճող ընտանիք և բազմաթիվ պարտականություններ, այնպես որ ես լավ աշխատանքի կարիք ունեմ: Իսկապես, ես ցանկանում եմ ինքնապահով լինել, որպեսզի հոգամ իմ ընտանիքի մասին ու ավելի լավ ծառայեմ իմ կոչման մեջ:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Հաջորդ հարցն է. «Որքա՞ն եկամուտ է ինձ անհրաժեշտ»: Մեզ համար լավ էր անցնել բյուջեի գործընթացը: Մենք ներկայումս փաստակածի կրկնակիից մի փոքր ավելին պետք է վաստակենք: Եվ դա հնարավոր է. կարծում եմ կստացվի:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Հաջորդը. «Ի՞նչ աշխատանք կարող է ինձ այդքան եկամուտ ապահովել ապագայում»: Մենք լավ զգացումներ ունենք թարգմանչության վերաբերյալ: Ես ներկայումս երկու լեզու գիտեմ: Եվ այդ աշխատանքը ճկուն աշխատանքային գրաֆիկ ունի:*

***ՄԻՔԱԼԱ.****Այն նախընտրելի աշխատանքների ցանկո՞ւմ է:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Այո՛: Այն մեծ պահանջարկ ունի և արագ աճում է:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Լավ. «Ի՞նչ կրթություն ես պետք է ստանամ»: Ինձ անհրաժեշտ է բարելավել իմ լեզվական հմտությունները: Բացի այդ, ինձ պետք է սովորել տեխնոլոգիաներ և գործնական որոշ հմտություններ: Ես պարզել եմ նաև, որ այդ աշխատանքին ունենալու համար ինձ պրակտիկա է անհրաժեշտ:*

***ՔՈԽԱՄԻ.*** *Դու գտե՞լ ես հաստատություն, որն առաջարկում է այդ ամենը:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Այո՛: Եվ ինչպես ուսումնական ծրագիրը, այնպես էլ հաստատությունը Նախընտրելի ուսումնական ծրագրերի ու հաստատությունների ցանկում են: Ես հույս եմ տածում սովորել «Լինգուա Սելերիի» Բարձրակարգ Թարգմանության բաժնում: Նրանց մոտ աշխատանքի տեղավորումը բարձր է, ունեն պրակտիկայի լավ ծրագիր և լավ կապեր:*

***ՋԱՆԻՍ.*** *Որքա՞ն է ուսման տևողությունը և արժեքը:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Ուսումը տևում է երկու տարի, ներառյալ պրակտիկան: Ես կարող եմ երեկոյան հերթին սովորել, այնպես որ կոչումս նույնպես կկատարեմ: Մենք կկարողանանք վճարել գումարի կեսը, իսկ մյուս կեսի համար ԿՄՖ վարկի կարիք կունենամ:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Լավ է հնչում, Ռոբե՛րտ: Դու ունե՞ս որևէ մտահոգություն կամ հարց:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Դե, մենք կնոջս հետ մտահոգված ենք, որ ընտանիքից շատ ենք ժամանակ խլում, հատկապես եկեղեցու իմ կոչման պատճառով:  Բայց մենք խոսել ենք երեխաների հետ և նրանք բոլորը աջակցող են: Սա կարող է երեք անգամ ավելացնել իմ եկամուտը:*

***ԴԱՄՎԱՐ.*** *Շատ լավ հաշվետվություն է: Ունե՞ք արդյոք որևէ դիտողություն կամ խորհուրդ Ռոբերտի համար:*

***ՋԱՆԻՍ.*** *Իսկ բուհ տանող տրանսպորտային միջոցները լա՞վ են աշխատում. դուք հաշվե՞լ եք ճանապարհածախսը:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Ինձ անհրաժեշտ կլինի երկու երթուղի փոխել յուրաքանչյուր ուղղությամբ, ոչ ես դեռ չեմ հաշվել ճանապարհածախսը: Շնորհակալություն հիշեցնելու համար:*

***ՔՈԽԱՄԻ.*** *Կարծում եմ դու լավ թարգմանիչ կլինես: Դու արագ մտածում ես և լավ խոսում: Կարո՞ղ ես սովորելու ընթացքում թարգմանություններ անել, որ փորձ ձեռք բերես:*

***ՌՈԲԵՐՏ.*** *Շատ լավ միտք է: Այլ դիտողություններ կա՞ն:*

Վերադարձեք 82-րդ էջը

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՑՈՂ ԲԱՆԱԼԻ Է

Հերթով կարդացեք հետևյալ պարբերությունները:

**Թոմաս Ս. Մոնսոն**

«Ես հորդորում եմ ձեզ կրթություն ստանալ և պահանջարկ վայելող մասնագիտություն սովորել, որպեսզի. . . պատրաստված լինեք ապահովելու: Ձեր տաղանդները կավելանան, եթե դուք ուսում ստանաք և կրթվեք: Դուք կկարողանաք ավելի լավ օժանդակել ձեր երեխաներին իրենց ուսման մեջ, քանի որ մտքում խաղաղություն կունենաք, իմանալով, որ նախապատրաստված եք» (««Be Thou an Example»», *Ensign,* Nov. 2001, 99):

**Գորդոն Բ. Հինքլի**

«Վաղ տարիքում ծրագրեք որքան հնարավոր է շատ կրթություն ձեռք բերել, ապա աշխատեք իրականացնել այդ ծրագիրը: . . . Զարգացրեք ձեր կյանքի հեռանկարը» («Four B’s for Boys», *Ensign,* Nov. 1981, 40):

**Վարդապետություն և Ուխտեր 130.18**

«Բանականության ինչ աստիճանի որ մենք հասնենք այս կյանքում, այն կբարձրանա մեզ հետ հարության ժամանակ»:

**Վարդապետություն և Ուխտեր 88.78–80**

«Ուսուցանեք ջանասիրաբար, և իմ շնորհը կուղեկցի ձեզ, որպեսզի դուք ավելի կատարյալ ձևով հրահանգվեք. . .  բաների մասին, որ երկնքում են, և երկրի վրա, և երկրի տակ. բաներ, որոնք եղել են, որոնք կան, որոնք շուտով պիտի լինեն.  . . . Որպեսզի դուք կարողանաք պատրաստ լինել բոլոր բաներում, երբ որ ես կրկին ուղարկեմ ձեզ՝ մեծարելու կոչումը, որին կանչել եմ ձեզ, և առաքելությունը, որով լիազորել եմ ձեզ»:

Վերադարձեք 84-րդ էջը

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Թող խմբի անդամներից մեկը բարձրաձայն կարդա այս ելույթը, որի ընթացքում խմբի անդամները կհետևեն 85 էջի գրառումներին:

***ՀԵՆՐԻ Բ. ԱՅՐԻՆԳ***

*Դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը դարձի գալը սովորելու ցանկություն է առաջ բերում: . . . Այն Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելու բնական պտուղն է: . . . Եթե շարունակենք ուսում փնտրել՝ Աստծուն և Իր զավակներին ծառայելու համար, այն մեծ արժեք ունեցող օրհնություն է: . . .*

*Տերը և Նրա Եկեղեցին միշտ խրախուսել են կրթություն ստանալ, որպեսզի մեծացնենք [Նրա] զավակներին ծառայելու մեր կարողությունը: Ինչպիսին էլ լինեն մեր տաղանդները, Նա մեզ համար ծառայություն ունի, որ կատարենք: Եվ որպեսզի լավ կատարենք մեր ծառայությունը՝ ոչ միայն մեկ անգամ կամ սահմանափակ ժամանակի ընթացքում, մենք պետք է միշտ սովորենք:*

*. . . Աղոթքի, ծոմապահության և ջանասեր աշխատանքի միջոցով, Նրան ծառայելու դրդապատճառ ունենալով, մենք կարող ենք ակնկալել, որ Նրա շնորհը ուղեկից լինի մեզ: . . . (Սա) նշանակում է, որ մենք ավելի արագ կսովորենք և կաճենք հմտություններով, քան հնարավոր կլիներ միայն մեր բնական կարողություններով: . . .*

*Մենք նախապատվություն պետք է տանք հոգևոր կրթությանը: . . . Դուք շահագրգռված եք կրթություն ստանալ ոչ միայն մահկանացու կյանքի, այլև հավերժական կյանքի համար: Եթե հստակ տեսնենք այդ իրականությունը, դուք առաջնահերթություն կհամարեք հոգևոր կրթությունը և միևնույն ժամանակ չեք անտեսի աշխարհիկ կրթությունը: Իրականում, երբ դուք ունենաք հոգևոր տեսլականը, դուք ավելի քրտնաջան կաշխատեք ձեր աշխարհիկ կրթության վրա: . . .*

*. . . Տերը գիտի և՛ այն, թե ինչ պետք է դուք անեք Նրա համար, և՛ այն, թե ինչ պետք է դուք իմանաք, որպեսզի անեք այդ: Դուք կարող եք վստահ ակնկալել, որ Նա հնարավորություններ է պատրաստել ձեզ համար, որպեսզի դուք սովորեք: . . .*

*Մեր կրթությունը երբեք չպետք է դադարի: . . . Իրական կյանքը, որին նախապատրաստվում ենք, հավերժական կյանքն է: . . . Մենք համոզված ենք, որ Աստված՝ մեր Երկնային Հայրը, ցանկանում է, որ մենք Նրա նման ապրենք: Ամեն բան, որ սովորում ենք այս կյանքում, ինչը ճշմարիտ է, Հարության ժամանակ կբարձրանա մեզ հետ: Եվ ամեն բան, որ սովորում ենք, կավելացնի մեր ծառայելու կարողությունը: . . .*

*Իմ աղոթքն է, որ դուք երախտագիտության զգացում ունենաք Վարդապետ Ուսուցչի՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ: Ես աղոթում եմ, որ դուք զգաք այն մեծ ծառայությունը, որը սիրող Երկնային Հայրն ակնկալում է, որ դուք կատարեք Իր զավակների համար, և որ դուք կտեսնեք սովորելու հնարավորությունները, որոնք նա պատրաստել է ձեզ համար: («Real-Life Education», New Era, Apr. 2009, 2–8)*

**Վերադարձեք 85-րդ էջը**

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԸ

Թող խմբի անդամներից մեկը բարձրաձայն կարդա այս ելույթը, որի ընթացքում խմբի անդամները գրառումներ կկատարեն 86 էջի վրա։

***ԴԱԼԼԻՆ Հ. ՕՈՒՔՍ ԵՎ ՔՐԻՍՏԵՆ Մ. ՕՈՒՔՍ***

*Որպես Վերջին Օրերի Սրբեր՝ մենք հավատում ենք կրթությանը։ . . . Մեր կրոնական հավատքն ուսուցանում է մեզ, որ մենք պետք է ձգտենք սովորել Հոգով, և որ մենք պարտավորություն ունենք մեր զինելիքն օգտագործել հօգուտ մարդկության։ . . . [Երկնային Հոր] Հոգին կարող է ուղղորդել և ավելացնել սովորելու մեր ջանքերը և մեծացնել ճշմարտությունը յուրացնելու մեր կարողությունը։ . . .*

*Սովորելու մեր ջանքերին պետք է միանա մեր անձնական արժանավորությունը, որպեսզի Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանանք։ . . . Մեղքը հեռացնում է Տիրոջ Հոգին, և երբ դա տեղի է ունենում, Հոգու հատուկ լուսավորությունը անցնում է և սովորելու լապտերը մարում է։ . . . .*

*. . . Մենք խոստում ունենք, որ եթե մեր աչքն ուղղված է Աստծո փառքին, որը ներառում է անձնական արժանավորությունը, մեր «ամբողջ մարմինը լցված կլինի լույսով և [մեր] մեջ խավար չի լինի. և այն մարմինը, որը լցված է լույսով, ըմբռնում է բոլոր բաները» (ՎևՈւ 88.67)։ . . .*

*. . . Ապաշխարությունը, որը կարող է մաքրել մեզ մեղքից Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության միջոցով, կարևոր քայլ է ուսումնառության ճանապարհին բոլոր նրանց համար, ովքեր փնտրում են լույս ու ճշմարտություն՝ Սուրբ Հոգու ուսուցանող զորությամբ։ . . .*

*Մեր կրթական ընտրություններում մենք պետք է պատրաստվենք աջակցելու մեզ և նրանց, ովքեր կարող են կախված լինել մեզանից։ Կարևոր է, որ մենք ունենանք մրցունակ հմտություններ։ Կրթությունը կարևոր է անձնական պաշտպանության և բարօրության համար։*

*Մեր Երկնային Հայրն ակնկալում է մեզանից օգտագործել մեր ընտրելու ազատությունը և ոգեշնչումը քննելու մեզ և մեր կարողությունները և որոշելու ուսումնառության ինչպիսի ոլորտ պետք է ընտրենք։ . . . Կարդացեք ձեր հայրապետական օրհնությունը, քննեք ձեր բնական ընդունակություններն ու տաղանդները և առաջ գնացեք։ Կատարեք առաջին քայլը և դռները կբացվեն։ . . . Տիրոջ հետ լինելիս «ամեն բաները գործակից են լինում դէպի [մեր] բարին» (Հռովմեացիս 8.28)։ . . .*

*Մենք կարող ենք պայքարել հասնելու մեր նպատակներին, սակայն մեր մաքառումները կարող են այնքան աճ ապահովել, որքան ուսումը։ Դժվարությունները հաղթահարելու արդյունքում ունեցած ուժը մեզ հետ կլինի զալիք հավերժություններում։ . . .*

*Ամենակարևորը, մենք պարտավոր ենք շարունակել մեր հոգևոր կրթությունը՝ ուսումնասիրելով սուրբ գրքերը և Եկեղեցու գրականությունը, հաճախելով եկեղեցի և տաճար։ Կյանքի խոսքերով ամվելը կհաստացնի մեզ, կավելացնի մեր հարազատներին ուսուցանելու մեր ունակությունը և կպատրաստի մեզ հավերժական կյանքին։*

*Կրթության գերագույն նպատակն է դարձնել մեզ արքայության ավելի լավ ծնողներ և ծառաներ։ . . . Կրթությունը Աստվածային պարգև է. այն մեր կրոնի անկյունաքարն է, երբ մենք օգտագործում ենք այն հօգուտ մերձավորների։ («Learning and Latter-day Saints», Liahona, Apr. 2009, 26–31)*

**Վերադարձեք 86-րդ էջը**

## ՀՂՈՒՄՆԵՐ



# 6

# *Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանից դուրս:*

## Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի

# ԴԱՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ




**Հանդիպման օրը.**

- Հաղորդագրություն ուղարկեք կամ զանգահարեք խմբի անդամներին: Հրավիրեք նրանց ժամանել 10 րոպե առաջ՝ զեկուցելու իրենց պարտավորությունները կատարելու վերաբերյալ:
- ՆՈ՛Ր Հանդիպման համար բերեք *Ինքնապահովման իմ ուղին* գրքույկի լրացուցիչ հինգ օրինակ:
- ՆՈ՛Ր Հաջորդ վեց հանդիպումներին մենք կօգտագործենք *Աշխատանքի իմ որոնումը* գիրքը: Այդ գրքի մի քանի օրինակ բերեք այս ժողովին, որպեսզի խմբի անդամները տեսնեն դրանք:

**Հանդիպումից 30 րոպե առաջ.**

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջ, որպեսզի բոլորը մոտ լինեն միմյանց:
- Գրատախտակին գծեք պարտավորությունների հետևյալ գծապատկերը:

| *Խմբի անդամի անունը* | *Ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին ու ընկերներին ինչպես հավատքով սովորել (այո/ոչ)* | *Կիրառել եմ դասարանում ուսումնասիրմամբ սովորելու բոլոր հիմունքները (այո/ոչ)* | *Վարկի կարիքի դեպքում՝ ես շարունակում եմ աշխատել ՄԿՀ վարկի գործընթացի վրա (այո/ոչ)* | *Կիրառել եմ **Հիմքը** ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|---|---|
| Գլորիա | Ա | Ա | Ո | Ա | Ա | Ա |
| | | | | | | |
| | | | | | | |

**Հանդիպումից 10 րոպե առաջ.**

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ ժամանում են:
- Խմբի անդամները ժամանելիս խնդրեք նրանց լրացնել պարտավորությունների աղյուսակը գրատախտակին:
- Խմբից մեկին նշանակեք հետևել ժամանակին:

**Դասի սկզբին.**

- Խնդրեք բոլորին անջատել իրենց հեռախոսները և այլ սարքերը:
- Սկսեք բացման աղոթքով (և օրհներգով, եթե ցանկանում եք):
- Ուշացողներին հանգիստ խնդրեք անջատել իրենց հեռախոսները եւ լրացնել պարտավորության աղյուսակը, մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- *Իմ հիմքը* գրքույկի սկզբունքի համար սահմանեք 20 րոպե ժամանակ:
- Ավարտեք 6-րդ սկզբունքը *Իմ հիմքը* գրքույկի: Ապա վերադարձեք այս աշխատանքային ձեռնարկին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵՍ ՊԱՀԵ՞Լ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**Ժամանակ**. Հաշվետվություն բաժնի համար սահմանեք 20 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների վերաբերյալ: Իրենց բոլոր պարտավորությունները կատարողներին խնդրում ենք ոտքի կանգնել: (Ծափահարություն):

**Կարդացեք**. Այժմ խնդրում ենք բոլորը ոտքի կանգնեն: Մենք պետք է աշխատենք կատարել մեր բոլոր պարտավորությունները: Դա ինքնապահով մարդ-կանց գլխավոր սովորություններից մեկն է: Եկեք միասին կրկնենք մեր թեմատիկ կարգախոսները.

> **«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**
>
> *Վարդապետություն և Ուխտեր 104.15*
>
> **Հավատքով առ Տերը մենք միասին աշխատում ենք ինքնա-պահով դառնալ:**

**Կարդացեք**. Եկեք նստենք:

**Քննարկեք**. Ի՞նչ եք դուք սովորել այս շաբաթվա ձեր պարտավորությունները կա-տարելիս: Այս խումբը կարո՞ղ է ձեզ օգնել առաջադիմել:

# ՍՈՎՈՐԵՔ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ:

**Ժամանակ.** Սովորել բաժնի համար սահմանեք 60 րոպե ժամանակ

**Կարդացեք.** Անցյալ շաբաթ մենք քննարկեցինք, թե ինչպես հավատքով սովորենք, նաև թե ինչպես դասարանում ուսումնասիրենք: Այս շաբաթ մենք կսովորենք ինչպես պատրաստվել դասարանից դուրս:

| Շաբաթ 1 | Շաբաթ 2 | Շաբաթ 3 | Շաբաթ 4 | Շաբաթ 5 | ՇԱԲԱԹ 6 |
|---|---|---|---|---|---|
| Ի՞նչ կարգի աշխատանքը կօգնի ինձ ինքնապահով դառնալ: | Ի՞նչ կրթություն կորակավորի ինձ իմ աշխատանքի համար: | Ինչպե՞ս եմ ես վճարելու իմ կրթության համար: | Անհրաժե՞շտ է, որ ես վարկ վերցնեմ Մշտական Կրթական Հիմնադրամից: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանում: | Ինչպե՞ս հաջողակ ուսանող լինեմ դասարանից դուրս: |

**Կարդացեք.** Այս շաբաթ մենք կգտնենք այս հարցի պատասխանները և կկատարենք հետևյալ գործողությունները.

**Կարդացեք.** **ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑԸ – Ինչպե՞ս կարող եմ հաջողակ ուսանող լինել դասարանից դուրս:**

**ՇԱԲԱԹՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ – Ամրացնենք մեր հոգևոր պատրաստվածությունը և զարգացնենք ուսումնասիրելու մեր հմտությունները և սովորությունները, այդ թվում նաև ուրիշների հետ աշխատելը և հանձնարարություններ կատարելը:**

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ՀՈԳԵՎՈՐԱՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ:

**Կարդացեք**. Մենք մեծ առավելություն ունենք, եթե ուսում փնտրենք: Մենք կարող ենք հետևել Սուրբ Հոգուն, ով գիտի՛ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ: Անգամ եթե մենք շատ զբաղված ենք, մենք պետք է ամեն օր ժամանակ հատկացնենք հոգևոր պատրաստվելուն: Այդ ժամանակ Հոգին կօգնի մեզ ավելի արագ սովորել և ավելի շատ հիշել:

**Դիտեք**. (Եթե տեսանյութը մատչելի չէ Կարդացեք սցենարը 112 էջում):

**Քննարկեք**. Ինչպե՞ս ենք մենք որակավորվում Հոգու ուղեկցությունն ունենալու համար: Ինչպե՞ս Հոգին կօգնի մեզ սովորել:

**Կարդացեք**. Ահա մի քանի առանցքային կետեր հոգևոր պատրաստության վերաբերյալ.

- Առավոտյան և երեկոյան աղոթեք. սովորելուց առաջ և հետո աղոթենք. Երկնային Հորը խնդրենք օրհնել մեր միտքը և մեր ջանքերը:
- Ամեն օր կարդացեք սուրբ գրությունները:
- Հնազանդվեք պատվիրաններին. մաքուր և անբիծ պահենք մեզ:
- Ծառայեք մարդկանց. օգնենք մարդկանց սովորել մեզ հետ:

**Կիրառեք**. Ստորև աղյուսակը թվարկում է սկզբունքներ, որոնք կօգնեն ձեզ հոգևորապես պատրաստվել և ուսման մեջ հաջողության հասնել:

Մտածեք ձեր առաջընթացի մասին հետևյալ ոլորտներում: Գրեք բարելավելու ուղիներ:

| | |
|---|---|
| Ես զգում եմ, որ Հոգին ինձ օգնում է և գործում է իմ միջոցով: | |
| Սովորելու իմ ցանկությունը, ուսման հանդեպ իմ սերը և սովորելու իմ կարողությունը աճում է: | |
| Ես հնազանդվում եմ Աստծո պատվիրաններին և կիրառում եմ արդյունավետ ուսման սկզբունքները: | |
| Ես սովորում եմ ամեն օր. Ես ծրագրում եմ իմ ժամանակը և հետևում եմ իմ ծրագրին. Ես ժամանակին կատարում եմ իմ հանձնարարությունները: | |
| Ես քրիստոնեական հատկանիշներ եմ զարգացնում և օգնում եմ մարդկանց անել նույնը: | |

**Քննարկեք**. Ի՞նչ պարտավորություն կարող ենք ստանձնել, որպեսզի բարելավենք մեր հոգևոր պատրաստվածությունը: Ինչպե՞ս կարող ենք միմյանց օգնել պահել այդ պարտավորությունները:

*«Ես և դուք այստեղ՝ երկրի վրա ենք, որպեսզի պատրաստվենք հավերժության համար՝ սովորենք ինչպես սովորել, սովորենք բաներ, որոնք կարևոր են ֆիզիկականի համար, ինչպեսև բաներ, որոնք կենսական են հավերժության համար, նաև որ օգնենք ուրիշներին իմաստություն և ճշմարտություն սովորել [տես ՎևՈւ 97.1]»:*

**DAVID A. BEDNAR, “Learning to Love Learning,” *Ensign*, Feb. 2010, 27**

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ։

**Կարդացեք**. Ահա չորս առանցքային կետեր, որոնք կօգնեն մեզ հաջողության հասնել, երբ մենք պատրաստվում ենք դասարանից դուրս։ Մենք կսովորենք դրանցից յուրաքանչյուրի մասին։

| | |
|---|---|
| **Արդյունավետ ուսումնասիրության ծրագիր կազմեք** | **Աշխատեք և սովորեք ուրիշների հետ** |
| **Կարդացեք, որպեսզի հասկանաք և հիշեք** | **Ժամանակին կատարեք հանձնարարությունները** |

**Սովորել ուսումնասիրելով. նախապատրաստվել, երբ դասարանից դուրս ենք**

## ԻՆՉՊԵ՞Ս ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԱԶՄԵՄ։

**Քննարկեք**. Ինչո՞ւ է կարևոր ծրագրել ուսումնասիրելու տեղը և ժամը։ Ինչո՞ւ է կարևոր ուշադիր կառավարել ձեր ժամանակը։

**Գործնական աշխատանք**. Միացեք խմբի անդամներից մեկին։ Միմյանց օգնեք որոշում կայացնել, թե սովորելու ընթացքում որտե՞ղ և որ ժամերին եք դուք ուսումնասիրելու։

1. Կարո՞ղ եք ամեն օր ուսումնասիրելու մի տեղ ընտրել, որը մաքուր է և խաղաղ։ Որտե՞ղ եք դուք ուսումնասիրելու։

______________________________

2. Կարո՞ղ եք ծրագրել ամեն օր ուսումնասիրել որոշակի ժամի։

Երկուշ. __________ Երեքշ. __________ Չորեքշ. __________

Հինգշ. __________ Ուրբ. __________ Շաբ. __________

**Գործնական աշխատանք**. Խմբի մեկ այլ անդամի հետ գրեք որոշ խնդիրներ, որոնք կարող են խանգարել ձեզ ամեն օր ուսումնասիրել։ Այժմ որոշեք, թե ինչպես կարող եք լուծել այդ խնդիրները։

| Ի՞ՆՉԸ ԿԱՐՈՂ Է ԽԱՆԳԱՐԵԼ ԻՆՁ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ։ | ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԼՈՒԾԵԼ ԱՅԴ ԽՆԴԻՐԸ։ |
|---|---|
| *Աղմուկը հարևանների կամ ընտանիքի անդամների կողմից* | *Բարյացակամորեն խնդրեք նրանց աղմուկ չանել ձեր որոշած մեկ-երկու ժամը։* |
| ..................... | ..................... |
| ..................... | ..................... |
| ..................... | ..................... |

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ:

**Կարդացեք.** Որոշ մարդիկ լավ են սովորում խմբակային ուսուցման ժամանակ: Ինքնապահովման մեր խումբը դրա լավ օրինակն է:

**Քննարկեք.** Ի՞նչն է ինքնապահովման մեր խումբը սովորելու լավ վայր դարձնում: Ինչպե՞ս է մեր խումբը օգնում ձեզ գործել և պատասխանատու լինել:

**Կարդացեք.** Երբ մենք սովորում ենք դպրոցում, մենք շրջապատված ենք դասարանցիներով: Նրանք ևս փորձում են սովորել: Եթե ճիշտ մարդիկ գտնենք, նրանք կարող են մեզ օգնել, իսկ մենք կարող ենք նրանց օգնել սովորել:

**Քննարկեք.** Խոսեք խմբակային ուսման հետևյալ առանցքային կետերի մասին: Կիսվեք մի դեպքով, երբ խմբով ուսումնասիրելիս շատ բան եք սովորել: Կիսվեք մի դեպքով, երբ խմբով ուսումնասիրելիս քիչ բան եք սովորել: Ի՞նչն է եղել տարբերությունը:

- Գտեք լավագույն ուսանողներին, որոնց հետ կարող եք աշխատել, հատկապես նրանք, ովքեր ձեր նման նվիրված են:
- Կանոնավոր ժամանակ սահմանեք միասին ուսումնասիրելու համար:
- Սովորելու յուրաքանչյուր նիստի սկզբում որոշակի նպատակ սահմանեք:
- Սովորելու յուրաքանչյուր նիստը ավարտեք պարտավորություն ստանձնելով, թե ինչ և երբ պետք է անի ձեզանից յուրաքանչյուրը:
- Զվարճալի անցկացրեք, բայց կենտրոնացած մնացեք:
- Պատրաստ եղեք և արեք ձեր մասը: Օգնեք, որ ձեր խմբի անդամները սովորեն: Սովորեք նրանցից ինչ հնարավոր է:

**Կիրառեք.** Ինչպե՞ս կօգտագործեք ուսումնասիրման խմբակները, որպեսզի բարելավեք սովորելու ձեր արդյունավետությունը: Գրի առեք առաջացած մտքերը, ապա կատարեք դրանք:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՍԿԱՆԱԼ ԵՎ ՀԻՇԵԼ ԻՄ ԿԱՐԴԱՑԱԾԸ:

**Կարդացեք**. Սովորելիս, մեծ հավանականությամբ, մեզ շատ նյութեր կտան կարդալու: Շատ բաներ կան, որ կարող ենք անել մեր կարդացածը հասկանալու և հիշելու համար:

**Քննարկեք**. Խոսեք հետևյալ քայլերի մասին, որոնք կօգնեն ձեզ հասկանալ, հիշել և կիրառել ձեր կարդացածը:

1. Աղոթեք: Խնդրեք, որ Հոգին օգնի ձեզ հասկանալ և հիշել:
2. Ուրվագիծ կազմեք: Գրի առեք ձեր կարդացածի հիմնական մտքերը: Այնուհետև ավելացրեք օժանդակ մտքերը, փաստերը և մարդկանց: Վերընթերցեք ձեր նշումները ևս մեկ անգամ՝ այդ օրը, մեկ շաբաթ անց, մեկ ամիս անց:
3. Եթե դասագիրքը ձերն է, ընդգծեք բառերը կամ նշեք նոր խոսքերը. լուսանցքում գրեք սահմանումները:
4. Լուսանցքում նշումներ կատարեք. ցույց տվեք կապակցող մտքերը և զարգացումները. նոր տեղեկությունների և ձեր իմացածի միջև կապ հաստատեք:
5. Ինքներդ ձեզ ստուգեք. տեղեկությունը օգտագործելու և կիրառելու ուղիներ փնտրեք:

**Կիրառեք**. Խմբով դիտեք այս հոդվածին: Ինչպե՞ս է կարդացողը գործածել վերոհիշյալ մտքերը: Կարդացողի ուսումնասիրության ուրվագիծը տեսեք հաջորդ էջում: Ի՞նչ եք սովորում արդյունավետ կերպով կարդալու վերաբերյալ:

### ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԴԱՍԵՐԸ

*Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն*

Ես վերջերս մտածում էի ընտրությունների և դրանց հետևանքների մասին: . . . Խորհելով ընտրության տարբեր ձևերի մասին, ես դրանք բաժանել եմ երեք դասի. առաջինը՝ ընտրության *իրավունք*, երկրորդը՝ ընտրության *պատասխանատվություն* և երրորդը՝ ընտրության *արդյունքներ*: . . .

Ես սկզբում կխոսեմ ընտրության *իրավունքի* մասին: Անչափ երախտապարտ եմ սիրող Երկնային Հորը՝ ազատ կամքի կամ ընտրության իրավունքի համար: . . . Մենք գիտենք, որ նախքան այս աշխարհ գալը, մենք ունեցել ենք մեր ազատ կամքը, և Լյուցիֆերը ձգտել է վերցնել այն մեզանից: . . . Մենք, որ ընտրեցինք Փրկչի ծրագիրը, գիտեինք, որ սկսելու էինք անորոշ, դժվարին ճամփորդություն, քանի որ քայլում ենք աշխարհի ուղիներով և մեղանչում ենք և սայթաքում, կտրվելով մեր Հորից: Սակայն Հոգու մեջ Առաջնեկը առաջարկեց Իրեն որպես զոհ՝ բոլորի մեղքերը քավելու համար: . . . Ինչպիսի որոշիչ հանգամանքներում էլ որ հայտնվենք, մենք միշտ ընտրելու *իրավունք* կունենանք:

*Աղոթք. Զգացի, որ այս ուղերձի կարիքն ունեի:*

*«Ազատ կամքը» ընտրության իրավունք է:*

*Քավությունը կարող է վերանորոգել վատ ընտրությունները, եթե ապաշխարում ենք:*

## ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԴԱՍԵՐԸ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Հաջորդը, ընտրելու *իրավունքի* հետ միասին գալիս է ընտրության *պատասխանատվությունը*: . . . Մեր Երկնային Հայրը մեզ հավերժական ճամփորդության չի ուղարկել առանց միջոցներ տրամադրելու, որով մենք կարող ենք ստանալ Աստվածատուր առաջնորդություն, որը կօգնի մեզ ապահով վերադառձ կատարել՝ մահկանացու կյանքն ավարտելուց հետո: Ես խոսում եմ աղոթքի մասին: Ես նաև խոսում եմ մեզանից յուրաքանչյուրի մեջ լսվող հանդարտ, մեղմ ձայնի հուշումների մասին, և չեմ անտեսում սուրբ գրությունները, գրված ծովագնացների կողմից, ովքեր հաջողությամբ նավարկել են այն ծովերով, որոնք մենք ևս պետք է անցնենք: . . . Որոշումները ճակատագիր են կերտում: . . .

Վերջում. . . ես կխոսեմ ընտրության *արդյունքների* մասին: Մեր բոլոր ընտրությունները հետևանքներ ունեն: . . . Դուք ազնվական ծագում ունեք: Ձեր նպատակն է՝ հավերժական կյանքը մեր Հոր արքայությունում: Այդ նպատակը ձեռք է բերվում ոչ թե մի փառահեղ փորձ անելով, այլ ողջ կյանքում արդարակեցության, իմաստուն ընտրություններ կուտակելու արդյունքում: . . .

Թող որ մենք լինենք երախտագիտությամբ լի ընտրության *իրավունքի* համար, ընդունենք ընտրության *պատասխանատվությունը* և միշտ աչալուրջ լինենք ընտրության *արդյունքների* համար: . . . Մենք ներգրավված ենք Տեր Հիսուս Քրիստոսի աշխատանքում: Մենք, ինչպես շատերը նախկինում, արձագանքել ենք Նրա կանչին: Մենք Նրա գործի մեջ ենք: (*Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2010, 67–70):

*Ես պետք է աղոթելիս ավելի ուշադիր լսեմ:*

*Ես սովորել եմ այս բանի մասին միսիայի ժամանակ:*

*Ինչպե՞ս է սա կապված իմ նպատակների հետ:*

| | ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ (ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՕՐԱԳՐՈՒՄ) |
|---|---|
| | *1. Ընտրելու իրավունք* |
| | *Մենք ազատ կամք ունենք. Տերը մեզ ընտրություն է տվել:* |
| | *2. Ընտրելու պատասխանատվություն* |
| | *3. Ընտրելու արդյունքներԻրականացրու նպատակդ՝ շարունակ լավ ընտրություններ կատարելով:* |
| | *Իրականացրու նպատակդ՝ շարունակ լավ ընտրություններ կատարելով:* |
| | *4. Լավ ընտրություններ կատարելը կարևոր է կյանքի համար* |
| | |
| | |

**Կիրառեք.** Բացեք 113 էջը և ինքնուրույն կարդացեք «Հավատքով ուսում փնտրեք» հոդվածը: Հասկանալու և հիշելու ջանք գործադրեք: Կատարեք 104 էջի բոլոր հինգ քայլերը:

Առանց հոդվածին վերադառնալու, ստուգարք անցկացրեք ձեր կարդացածի վերաբերյալ: Կարդալիս դուք ունեի՞ք հասկանալու և մտապահելու նպատակ:

1. Ի՞նչ պետք է անենք հավատքով ուսում փնտրելու համար:

______________________________________________

2. Ինչո՞ւ է կարևոր, որ յուրաքանչյուրս հավատքով ուսում փնտրենք:

______________________________________________

3. Ջոզեֆ Սմիթը ինչպե՞ս ցույց տվեց, որ հավատքով սովորելու ցանկություն ունի:

______________________________________________

**Քննարկեք.** Ինչպե՞ս եք օգտագործելու ուսումնասիրման հինգ քայլերը, որոնք կօգնեն ձեզ ավելի լավ հիշել տեղեկությունը:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ԿԱՏԱՐՈՒՄ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**Կարդացեք.** Ինչպե՞ս ենք մենք հասկանում և ժամանակին կատարում հանձնարարությունները: Ինչպե՞ս ենք ներդնում մեր լավագույն ջանքերը: Յուրաքանչյուր ուսանող առնչվում է այս հարցերի հետ:

**Քննարկեք.** Ի՞նչ եք մինչև հիմա արել, որպեսզի ավելի լավ հասկանաք հանձնարարությունները: Ի՞նչն է ձեզ օգնել հանձնարարությունները կատարել լավ և ժամանակին:

**Կարդացեք.** Օգտակար է հիշել, որ, սովորաբար, լավ սկիզբը հանգեցնում է լավ ավարտի: Երբ հանձնարարություն ենք ստանում, լավագույն տարբերակը վաղ ծրագրելն ու վաղ սկսելն է:

**Կիրառեք.** Ստուգեք ձեզ հետևյալ վարժությունով: «x» նշանով նշում արեք յուրաքանչյուր տողի չորս վանդակներից մեկի մեջ, որպեսզի ցույց տաք նշված ոլորտի ձեր ակտիվությունը: Մի քանի շաբաթը մեկ կրկնեք դա, ձեզ կատարելագործելու համար:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ես տալիս եմ հարցեր, մինչև որ լիովին հասկանում եմ հանձնարարությունը: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |
| Երբ հանձնարարություն կամ ծրագիր եմ ստանում, ես օրացույցին նշում եմ վերջնաժամկետը և քայլեր եմ ծրագրում ժամանակին ավարտելու համար: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |
| Ես հավաստիանում եմ, որ գիտեմ գնահատվելու չափանիշները և սովորում ու անում եմ ամեն բան, որպեսզի հաջողության հասնեմ: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |
| Ես՝ առանց ուշացման, աշխատում եմ իմ հանձնարարությունների վրա: Ես չեմ հետաձգում կատարումը: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |
| Հնարավորության դեպքում ես կիսվում եմ իմ առաջընթացով ուսուցչի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում, օգնություն եմ խնդրում *նախքան* հանձնարարության ավարտը: | *Երբեք* | *Երբեմն* | *Հաճախ* | *Միշտ* |

## ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

**Կարդացեք.** Ստանձնե՞լ ենք «ուսումնասիրելով և նաև հավատքով» սովորելու պարտավորություն (ՎևՈւ 88.118): Հաստատակա՞մ ենք շարունակ ջանք թափել ու երբեք չհանձնվել:

Հավատո՞ւմ ենք, որ Սուրբ Հոգին կարող է մեծացնել մեր հնարավորությունները, եթե արժանավոր լինենք: Կրթություն ստանալը ընդգրկո՞ւմ է ծառայություն կատարելու նպատակ:

**Քննարկեք.** Ինչպե՞ս կարող ենք օգնել միմյանց հաջողության հասնել:

**Կիրառեք.** Տանը անցկացրեք 114 էջի հաջողության հասնելու ձեր պատրաստվածության ստուգարքը:

## ԱՐԴՅՈՔ ԻՄ ԻՆՔՆԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎՎՈ՞ՒՄ Է։

**Ժամ**. Այս էջի համար առանձին սահմանեք 15 րոպե ժամանակ:

**Կարդացեք**. Մեր նպատակը ինքնապահովումն է՝ և՛ նյութական, և՛ հոգևոր: Կրթություն ստանալն ու աշխատելը այդ նպատակի միայն մի մասն են: Մյուս մասը մեր հավատքը զարգացնելն է ու հոգևորապես զարգանալը:

**Քննարկեք**. Ձեր ինքնապահովումը բարելավվել է նրա արդյունքում, որ կիրառել և ուսուցանել եք *Իմ հիմքը* գրքույկի սկզբունքները:

**Կիրառեք**. Ինչպիսի՞ն է ինքնապահովման ձեր և ձեր ընտանիքի վիճակն այսօր: Բացեք *Ինքնապահովման իմ ուղին* գրքույկի Ինքնապահովման գնահատման մի դատարկ էջ: Կատարեք հետևյալ քայլերը: Երեք րոպե խորհեք հետևյալի մասին.

Ծախսերի մասին ձեր տեղեկությունը ավելացե՞լ է: Ձեր «հաճախ» կամ «միշտ» պատասխանները ավելացե՞լ են նշված հարցերին պատասխանելիս: Կարո՞ղ եք ասել, որ ավելի վստահ եք զգում ինքնապահովման ձեր եկամուտի վերաբերյալ: Կարո՞ղ եք ասել, որ ինքնապահովման ձեր եկամուտին մի փոքր մոտեցել եք:

**Կարդացեք**. Մեր նպատակը ինքնապահովումն է՝ և՛ նյութական, և՛ հոգևոր: Կրթություն ստանալն այդ նպատակի միայն մի մասն է: Մենք ինքնապահով ենք դառնում նաև ապրելով *Իմ հիմքը* գրքույկի սկզբունքներով և ավելի լավ աշխատանք գտնելով:

Հաջորդ վեց շաբաթների ընթացքում մենք կշարունակենք կիրառել *Իմ հիմքը* գրքույկի սկզբունքները: Մենք կվերջացնենք մնացած սկզբունքները և վերջնականապես կավարտենք նախագիծը:

*Աշխատանքի իմ որոնումները* ձեռնարկի կիրառմամբ մենք գործնականում ավելի լավ աշխատանք կգտնենք:






# ԽՈՐՀԵՔ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ, ՈՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱՄ:

**Ժամանակ**. Խորհել բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Կարդացեք աջ լուսանցքի սուրբ գրությունը կամ մտածեք մեկ այլ սուրբ գրության մասին: Լռությամբ խորհեք, թե ինչ է այն ձեզ ուսուցանում: Ստորև գրի առեք ձեր տպավորությունները:

______________________________________

______________________________________

______________________________________

______________________________________

______________________________________

______________________________________

**Քննարկեք**. Ո՞վ կցանկանա մտքերով կիսվել:

*«Սովորիր ինձանից և լսիր իմ խոսքերը. քայլիր իմ Հոգու հեզությամբ, և դու խաղաղություն կունենաս ինձանում»:*

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 1.38**

# ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՐԵՔ

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆԱԼ:

**Ժամանակ**. Պարտավորություն վերցրեք բաժնի համար սահմանեք 10 րոպե ժամանակ:

**Կիրառեք**. Ընտրեք ձեր աշխատանքային ընկերոջը: Որոշեք, թե երբ և ինչպես եք կապ հաստատելու միմյանց հետ:

| *Աշխատանքային ընկերոջ անունը* | *Կապ հաստատելու տվյալներ* |
|---|---|

**Կարդացեք պարտավորության յուրաքանչյուր քայլը ձեր աշխատանքային ընկերոջը: Խոստացեք պահել ձեր պարտավորությունները: Ստորագրեք պարտավորությունը ստանձնելու համար:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ես կուսուցանեմ իմ ընտանիքի անդամներին ու ընկերներին, թե սովորելու համար ինչպես պետք է հոգևորապես պատրաստվել:**

**Ամեն օր ես կկիրառեմ դասարանից դուրս ուսումնասիրմամբ սովորելու հիմունքները:**

**Վարկի կարիքի դեպքում՝ ես կավարտեմ ԿՄՀ վարկի իմ գործընթացը:**

Ես կկիրառեմ *Իմ հիմքը* գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ այն իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողությունները՝ նույնիսկ եթե մեկ դրամ լինի:

Ես կզեկուցեմ աշխատանքային իմ ընկերոջը:

| *Իմ ստորագրությունը* | *Աշխատանքային ընկերոջ ստորագրությունը* |
|---|---|

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

**Կիրառեք**. Նախքան հաջորդ հանդիպումը, օգտագործեք պարտավորությունների այս աղյուսակը՝ ձեր առաջընթացը գրանցելու համար: Ներքևի վանդակներում գրեք «այո» կամ «ոչ» պատասխանը:

| *Ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին ու ընկերներին՝ սովորելու համար ինչպես հոգևորապես պատրաստվել (այո/ոչ)* | *Կիրառել եմ դասարանից դուրս ուսումնասիրմամբ սովորելու բոլոր հիմունքները (այո/ոչ)* | *Վարկի կարիքի դեպքում՝ ես ավարտել եմ ԿՍՀ վարկի իմ գործընթացը:* | *Կիրառել եմ* **Հիմքը** *ձեռնարկի սկզբունքները և ուսուցանել եմ իմ ընտանիքի անդամներին (այո/ոչ)* | *Գումար եմ ավելացրել եմ իմ խնայողություններին (այո/ոչ)* | *Զեկուցել եմ աշխատանքային ընկերոջս (այո/ոչ)* |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

**Կարդացեք**. Հիշեք նաև գրանցել ձեր անձնական ծախսերը *Ինքնապահովման իմ ուղին* ձեր գրքույկի ետևում:

Ընտրեք մեկին վարել հաջորդ հանդիպման *Իմ հիմքը* գրքույկի թեմաներից մեկի քննարկումը: (Չգիտե՞ք ինչպես թեմայի քննարկում վարել *Իմ հիմքը* գրքույկից: Կարդացեք 17 էջը և կազմի դարձերեսը):

Խնդրեք ինչ-որ մեկի ասել փակման աղոթքը:

**Նշում դասվարի համար.** Հաջորդ հանդիպմանը բերեք *Աշխատանքի իմ որոնումները* աշխատանքային ձեռնարկի մի օրինակ խմբի յուրաքանչյուր անդամի համար:

Հաջորդ հանդիպմանը սկսեք Աշխատանքի իմ որոնումները *ձեռնարկի* 1-ին էջը: Չնայած որ 1-ին էջի հրահանգները ձեզ կուղղորդեն դեպի *Իմ հիմքը* գրքույկի Առաջին Նախագահության նամակը և դեպի 1-ին սկզբունքը, դուք կարող եք անցնել այդ էջի 7-րդ սկզբունքին: Հաջորդ 6 հանդիպումների ընթացքում ավարտեք *Իմ հիմքը* գրքույկի մնացած սկզբունքները և ավարտական նախագիծը:

12-րդ հանդիպման ընթացքում հիշեք ինքնապահովման գնահատման ևս մեկ ստուգարք անցկացնել, ինչպես տրված է *Ինքնապահովման իմ ուղին* գրքույկի ետևի էջում:

***Դիտողությունները խրախուսվում է***

*Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները srsfeedback@ldschurch.org է-փոստի հասցեին:*

***Նշում դասվարի համար.***

*Իմ հիմքը գրքույկի բոլոր սկզբունքներն ավարտելուց հետո հիշեք, որ պետք է խմբի առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել srs.lds.org/report էջում, որպեսզի մասնակիցները ՎՍՈՒ Բիզնեսի Քոլեջի հավաստագիր ստանան:*

# Օժանդակ նյութեր

## ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՀՈԳԵՎՈՐՈՎ

Հերթով կարդացեք հետևյալ պարբերությունները:

*ՋՈՒԼԻ Բ. ԲԵՔ*

*Անձնական հայտնության համար որակվելու, այն ստանալու և ըստ դրա գործելու ունակությունը այն եզակի ամենակարևոր ունակությունն է, որ կարող է ձեռք բերվել այս կյանքում: Տիրոջ Հոգուն արժանանալու համար պետք է փափագել Հոգին և ունենալ որոշակի չափի արժանավորություն:*

*Պատվիրանները պահելը, ապաշխարությունը, և մկրտության ժամանակ կապված ուխտերի նորոգումը բերում է Տիրոջ Հոգին միշտ մեզ հետ ունենալու օրհնությունը [տես ՎևՈւ 20.77]: Տաճարային ուխտեր կապելն ու պահելը ևս հզոր ուժ և զորություն է ավելացնում: . . .*

*Դժվար հարցերի շատ պատասխաններ են ստացվում սուրբ գրություններն ընթերցելիս, քանի որ սուրբ գրությունները նպաստում են հայտնությանը [տես 2 Նեփի 32.3]: Սուրբ գրություններում գտնվող ներըմբռնումը ժամանակի ընթացքում ավելանում է, այնպես որ կարևոր է ամեն օր որոշակի ժամանակ տրամադրել սուրբ գրություններին:*

*Ամենօրյա աղոթքը ևս կարևոր է Տիրոջ Հոգին մեզ հետ ունենալու համար (տես 3 Նեփի 19.24–33): Նրանք, ովքեր լրջորեն օգնություն են փնտրում աղոթքի և սուրբ գրությունները ուսումնասիրելու միջոցով, հաճախ թուղթ ու մատիտ են պահում իրենց մոտ, որպեսզի գրեն հարցերը և գրանցեն իրենց տպավորություններն ու մտքերը:*

*Հայտնությունը կարող է գալ ժամ առ ժամ և ժամանակ առ ժամանակ, երբ մենք ճիշտ ձևով ենք գործում: . . . Անձնական հայտնությունը մեզ օգնում է հասկանալ, թե ինչ պետք է անել ամեն օր, որպեսզի ավելացնենք մեր հավատքը և անձնական արդարակեցությունը, ամրացնենք ընտանիքները և տները և փնտրենք նրանց, ովքեր մեր օգնության կարիքն ունեն: Քանի որ անձնական հայտնությունը ուժի մշտապես թարմացող աղբյուր է, հնարավոր է, անգամ անհանգիստ ժամանակ օգնությամբ պատված լինելու զգացում ունենանք:*

*Մեզ պավել է մեր հույսը դնել Հոգու վրա, որն առաջնորդում է մեզ «արդար գործել, խոնարհ քայլել, արդարությամբ դատել» (ՎևՈւ 11.12): Մեզ պավել է նաև Հոգին կլուսավորի մեր միտքը, կլցնի մեր հոգին ուրախությամբ և կօգնի մեզ իմանալ, թե ինչ անել (տես ՎևՈւ 11.13–14):*

*Խոստացված անձնական հայտնությունը գալիս է, երբ մենք խնդրում ենք այն, պատրաստվում դրան և առաջ գնում հավատքով, վստահ լինելով, որ այն կիջեցվի մեզ վրա: («Եվ աղախինների վրա էլ պիտի թափեմ այն օրերը իմ հոգին», Ensign կամ Լիահոնա, Մայիս 2010,11:*

**Վերադարձեք 101-րդ էջը**

## ՀԱՎԱՏՔՈՎ ՈՒՍՈՒՄ ՓՆՏՐԵՔ

Կարդացեք այս ուղերձը միայնակ կամ խմբի մեկ այլ անդամի հետ: Կարդացեք և նշումներ արեք, օգտագործելով 104 էջի գաղափարները: Վերընթերցեք այն ևս մեկ անգամ՝ օրվա ընթացքում, մեկ շաբաթ անց և մեկ ամիս անց: Եթե այդպես անեք, դուք գրեթե ամբողջությամբ կհիշեք ձեր սովորածը:

### ԴԵՅՎԻԴ Ա. ԲԵԴՆԱՐ

*Ի՞նչ է նշանակում հավատքով ուսում փնտրել:*

*. . . Որպես Երկնային Հոր որդիներ և դուստրեր՝ մենք օրհնված ենք կամքի ազատության պարգևով: . . . Որպես ուսանողներ՝ ես և դուք պետք է գործ անող ու խոսքը կատարող լինենք: . . . Արդյոք ես և դուք գործողություն կատարող ու հավատքով գիտելիք փնտրող ա՞նձ ենք, թե գործողությունը մեր վրա վերցնող ենք, որ սպասում ենք մեզ սովորեցնեն ու ասեն, թե ինչ անենք: . . . Մենք բոլորս պետք է եռանդուն ներգրավված լինենք խնդրելու, փնտրելու և թակելու գործում [տես 3 Նեփի 14.7]:*

*. . . Հավատքով սովորելը պահանջում է ոչ թե պասիվ համաձայնություն, այլ հոգևոր, մտավոր և ֆիզիկական ջանքեր: . . . Հավատքով սովորելը պահանջում է «սիրտն ու պատրաստակամ միտքը» (ՎևՈւ 64.34): Հավատքով սովորելը արդյունք է այն բանի, որ Սուրբ Հոգին ոչ միայն սրտի պատին, այլ նաև սրտի մեջ է հասցնում Աստծո խոսքի ուժը: Հավատքով սովորելը ուսուցչից աշակերտին փոխանցվելը չէ. . . այլ այն, երբ ուսանողը հավատք է գործադրում և ջանք թափում, որպեսզի ուսուցչից գիտելիք ձեռք բերի իր համար:*

*Երիտասարդ Ջոզեֆ Սմիթը. . . հասկանում էր, թե ինչ է նշանակում հավատքով ուսում փնտրել: . . . Նա հստակորեն իրեն նախապատրաստել էր, որ «հավատքով խնդրեր» [Հակոբոս 1.6] և գործել: . . . Նկատեք, որ Ջոզեֆի հարցը կենտրոնացած չէր նրա վրա, թե ինչ է նա ցանկանում իմանալ, այլ թե ինչ պետք է նա անի. . . նա չէր հարցնում պարզապես, թե որ եկեղեցին է ճշմարիտ: Նա հարցնում էր, թե որ եկեղեցուն պետք է ինքը միանա: Ջոզեֆը գնաց պուրակը, որպեսզի հավատքով սովորի: Նա վճռել էր գործ անել: . . .*

*Իրապես, մահկանացու կյանքի մեծագույն փորձություններից մեկը հավատքով ուսում փնտրելն է: . . . Ջոզեֆն ուսուցանել է. «Ճշմարտություն և իմաստություն ստանալու լավագույն ուղին գրքերին դիմելը չէ, այլ աղոթքով Աստծուն հարցնելը և աստվածային ուսուցում ստանալը» History of the Church, 4:425]: . . .*

*. . . Փորձը օգնել է ինձ հասկանալ, որ մեկ այլ անձից ստացած պատասխանը, սովորաբար, երկար չի հիշվում: . . . Բայց հավատք գործադրելով հայտնաբերած կամ ստացած պատասխանը, սովորաբար, պահպանվում է ողջ կյանքի ընթացքում: . . .*

*Հավատքով ուսում փնտրելու պատասխանատվությունը անհատապես յուրաքանչյուրիս վրա է: Հավատքով սովորելը կենսական է մեր հոգևոր զարգացման և Եկեղեցու աճի համար: . . . Թող որ մեզանից յուրաքանչյուրը քաղցած և ծարավ լինի արդարության և լցվի Սուրբ Հոգով [տես 3 Նեփի 12.6], – թող որ բոլորս հավաքով ուսում փնտրենք: ("Seek Learning by Faith," Ensign, Sept. 2007, 63–68 or Liahona, Sept. 2007, 19–24)*

**Վերադարձեք 106-րդ էջը**

## ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԵՍ ՊԱՏՐԱ՞ՍՏ ԵՄ ՀԱՋՈՂԱԿ ՈՒՍԱՆՈՂ ԼԻՆԵԼ:

Մենք պետք է պատրաստվենք, որպեսզի հաջողակ ուսում կամ կրթություն ստանանք: Ինքնուրույն լրացրեք այս ստուգարքը: Կարող եք ուրիշներից կարծիք հարցնել:

Յուրաքանչյուր հայտարարության դիմաց դրեք համապատասխանաբար՝ 1, 2 կամ 3 թվերը: 1 = աշխատելու տեղ կա 2 = լավ է 3 = գերազանց է

Գրեք, թե ինչ կանեք տվյալ ոլորտում բարելավելու համար:

________ **Ինքնառզեշնչում** Ես կարող եմ ինձ տրամադրել դժվար գործեր անել: Առանց ուրիշների դրդման, ես ամեն օր աշխատում եմ:

Բարելավելու ուղիներ.

________________________________________

________ **Մասնագիտական առաջընթացի կողմնորոշում:** Ես հստակ նպատակ ունեմ և տրամադրված եմ կրթություն ստանալ:

Բարելավելու ուղիներ.

________________________________________

________ **Սովորելու ցանկություն** Ես սովորելու խանդավառություն ունեմ և թույլ չեմ տա, որ դժվարությունները փակեն իմ ճանապարհը:

Բարելավելու ուղիներ.

________________________________________

________ **Ծրագրի կազմում:** Ես պատասխանատվություն եմ զգում իմ կյանքի համար: Ես ծրագրում եմ իմ օրերը, շաբաթները և թույլ եմ տալիս, որ Հոգին ուղղորդի ինձ:

Բարելավելու ուղիներ.

________________________________________

________ **Աջակցություն:** Իմ շրջապատում կան մարդիկ, ովքեր կաջակցեն ինձ, կուղղորդեն ինձ և կսիրեն ինձ: Եթե չկան նման մարդիկ, ես կգտնեմ ինձ աջակից մարդկանց:

Բարելավելու ուղիներ.

________________________________________

________ **Դրամի տնօրինում.** Ես կարողանում եմ դրամ վաստակել և տնտեսել: Ես ժամանակին վճարում եմ իմ հաշիվները, ներառյալ ԿՄՀ իմ վարկի մարումները: Ես ապրում եմ իմ միջոցների սահմաններում:

Բարելավելու ուղիներ.

________________________________________

Ի՞նչ սովորեցիք դուք այս փորձառությունից: Հակիրճ ձևով կիսվեք ձեր փորձառությամբ ձեր ընտանիքի կամ ընկերների հետ:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Ինքնապահովման
ծառայություններ
ԿՐԹԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN
4 02123 77201 5
12377 201